



საარჩევნო სისტემების
ბანკითარების, რეფორმებისა და
სწავლების ცენტრი

Ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրման քննությունների թեստեր

Պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման
կենտրոնի կողմից

2025 թվական

Թեստեր Վրաստանի Սահմանադրությունից ----- 6

Գլուխ առաջին: Ընդհանուր դրույթներ -----6

Գլուխ երկրորդ: Մարդու հիմնարար իրավունքները ----- 6

Գլուխ երրորդ: Վրաստանի խորհրդարանը -----7

Գլուխ չորրորդ: Վրաստանի նախագահը -----10

Գլուխ հինգերորդ: Վրաստանի կառավարությունը ----- 15

Գլուխ ութերորդ: Պետության պաշտպանությունը և անվտանգությունը -----15

Գլուխ իններորդ: Տեղական ինքնակառավարումը ----- 15

Թեստեր Վրաստանի ընտրական օրենսգրքից -----16

Տերմինների սահմանում (հոդված 2) -----16

Ընտրությունների, հանրաքվեի և պլեբիսցիտի անցկացման հիմնական սկզբունքները
(հոդված 3) -----19

Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվարկը (հոդված 5)-----20

Վրաստանի ընտրական վարչակազմի կարգավիճակը, համակարգը և կազմը (հոդված 7)
-----20

Ընտրական հանձնաժողովի աշխատանքի կարգը (հոդված 8) -----21

ԿԸՀ կազմը և ԿԸՀ նախագահի ընտրության կարգը (հոդված 10)-----26

ԿԸՀ անդամների ընտրության կարգը (հոդված 12) -----26

Կուսակցությունների կողմից ԿԸՀ անդամներ նշանակելու և նրանց լիազորության
դադարեցման կարգը (հոդված 13) ----- 27

ԿԸՀ լիազորությունը (հոդված 14) ----- 28

ԿԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և ԿԸՀ քարտուղարի լիազորությունները
(հոդված 15)----- 30

ԿԸՀ աշխատակազմը (հոդված 16) -----31

Հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ Ընտրական համակարգերի զարգացման,
բարեփոխումների և ուսուցման կենտրոն (հոդված 17) ----- 32

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ստեղծումը (հոդված 19) ----- 33

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների և ղեկավար անձանց նշանակման/ ընտրության կարգը (հոդված 20)-----	34
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունները (հոդված 21) ----	36
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի լիազորությունները (հոդված 22) -----	38
Ընտրական տեղամասերը (հոդված 23) -----	39
Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընտրությունը/նշանակումը (հոդված 25) -----	40
Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրությունը (հոդված 25 ¹) -----	41
Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունը (հոդված 26)-----	41
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի լիազորությունները (հոդված 27) -----	43
Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կարգապահական պատասխանատվության միջոցները (հոդված 28)-----	43
Ընտրական հանձնաժողովի անդամի/ղեկավար անձի լիազորության վաղաժամկետ դադարեցումը (հոդված 29)-----	44
Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտերը (հոդված 30)-----	46
Ընտրողների միասնական ցուցակը և դրա ձևավորման կարգը (հոդված 31) -----	49
Ընտրողների հատուկ ցուցակ (հոդված 32) -----	52
Շարժական քվեատուփի ցուցակը (հոդված 33) -----	55
Ընտրողների ցուցակների հրապարակումը (հոդված 34)-----	56
Ընտրողի թերթիկ (հոդված 35) -----	56
Ընտրական սուբյեկտների գրանցումը (հոդված 36)-----	57
Ընտրողների նախաձեռնող խումբը (հոդված 36 ¹) -----	58
Աջակիցների ցուցակները (հոդված 37) -----	58
Աջակիցների ցուցակների ստուգումը (հոդված 38)-----	58
Ընտրական սուբյեկտի հերթական համարը որոշելը (հոդված 38 ¹)-----	60
Տեղական և միջազգային դիտորդները (հոդված 39)-----	61

Դիտորդական կազմակերպությունների գրանցումը (հոդված 40)-----	62
Դիտորդի իրավունքները (հոդված 41)-----	63
Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները (հոդված 44) -----	66
Նախընտրական քարոզարշավ (քարոզչություն) (հոդված 45)-----	67
Քարոզչական նյութեր (հոդված 46) -----	68
Նախընտրական քարոզարշավի տեղեկատվական ապահովումը (հոդված 51)-----	69
Ընտրությունների/հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ֆինանսական ապահովումը (հոդված 52) -----	69
Ընտրությունների/հանրաքվեի համար անհրաժեշտ դրամական միջոցները (հոդված 53) - -----	70
Ընտրությունների/հանրաքվեի քարոզարշավի ծախսերը (հոդված 54)-----	70
Քվեարկության շենքի կազմակերպումը (հոդված 58) -----	70
Քվեարկության օրը քվեարկության շենքում և դրա հարակից տարածքում կարգուկանոնի պահպանումը (հոդված 59) -----	72
Քվեարկության ժամանակը և վայրը (հոդված 60)-----	73
Ընտրական տեղամասը բացելը (հոդված 61) -----	74
Քվեարկության օրվա գործավարության մատյանը (հոդված 62)-----	78
Քվեաթերթիկը և հատուկ ծրարը (հոդված 63) -----	80
Ընտրողների նշմարումը (հոդված 64) -----	84
Քվեարկության անցկացումը (հոդված 65) -----	85
Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունը (հոդված 66)-----	91
Մինչև քվեատուփը բացելը կատարվելիք ընթացակարգերը (հոդված 67) -----	93
Քվեատուփը բացելը (հոդված 68) -----	95
Չայները հաշվելը (հոդված 69) -----	97
Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները (հոդված 70) -----	98
Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը (հոդված 71) -----	100

Դիմումներ և բողոքներ քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերի խախտումների վերաբերյալ (հոդված 73) -----	102
Ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման հետ կապված դիմումի/բողոքի քննարկումը (հոդված 74) -----	103
Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (հոդված 75) -----	103
Ընտրությունների արդյունքների ամփոփումը ԿԸՀ-ում (հոդված 76)-----	104
Ընտրությունների երկրորդ փուլի անցկացման համար անհրաժեշտ ժամկետներն ու միջոցառումները (հոդված 76 ¹) -----	105
Քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերը (հոդված 76 ⁴)-----	105
Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության/ընտրությունների աուդիտը (հոդված 76 ⁶) -----	106
Քվեաթերթիկները թվային ձևաչափի փոխադրելը (հոդված 76 ⁷)-----	109
Բողոքարկման ժամկետը և կարգը (հոդված 77)-----	109
Ընտրական վեճերը և հայցվորների շրջանակը (հոդված 78) -----	115
Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների ուղղումը (հոդված 87) -----	118
Իրավական վարույթ (հոդված 93) -----	118
Վրաստանի նախագահի ընտրությունները (հոդված 94) -----	119
Վրաստանի նախագահի հերթական ընտրությունների անցկացումը (հոդված 95)-----	119
Պասիվ ընտրական իրավունք (հոդված 96) -----	120
Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու իրավունքը (հոդված 97)-----	120
Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու կարգը (հոդված 98) -----	121
Վրաստանի նախագահի թեկնածուի գրանցումը (հոդված 100) -----	122
Վրաստանի նախագահի թեկնածուի գործունեության երաշխիքները (հոդված 103)-----	122
Ընտրական կոլեգիա (հոդված 103 ¹) -----	122
Ընտրությունների արդյունքների ամփոփումը (հոդված 104) -----	124
Վրաստանի խորհրդարանի ընտրությունների նշանակումը (հոդված 108)-----	125

Վրաստանի խորհրդարանի ընտրության կարգը և լիազորության ժամկետը (հոդված 109)-125	
Պասիվ ընտրական իրավունք (հոդված 111) -----	126
Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուի կարգավիճակի անհամատեղելիությունը պաշտոնական դիրքի հետ (հոդված 112) -----	126
Կուսակցությունների գրանցումը/գրանցման չեղարկումը (հոդված 113) -----	127
Կուսակցական ցուցակների ներկայացումը (հոդված 115)-----	127
Կուսակցական ցուցակի ընտրական գրանցումը (հոդված 117)-----	128
Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածու առաջադրելու մասին որոշման չեղարկումը (հոդված 120) -----	129
Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուին ծառայողական պարտականության կատարումից ազատելը (հոդված 121) -----	130
Ձայները հաշվելը տեղամասային ընտրական հանձնաժողովում (հոդված 123)-----	130
Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքների ամփոփումը (հոդված 124) -----	130
Ընտրությունների արդյունքների ամփոփումը ԿԸՀ-ում (հոդված 125) -----	131
Վրաստանի խորհրդարանի կրկնական ընտրությունները (հոդված 127)-----	132
Վրաստանի խորհրդարանի արտահերթ ընտրությունները (հոդված 128)-----	133
Ընտրված Վրաստանի խորհրդարանի անդամների գրանցումը (հոդված 131) -----	134
Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի և ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի/համայնքապետի ընտրությունների նշանակումը (հոդված 133) -----	134
Ակտիվ և պասիվ ընտրական իրավունք (հոդված 134)-----	134
Մունիցիպալիտետի մարմինների լիազորությունների ժամկետները (հոդված 135)----	135
Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամության թեկնածուի, ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի/համայնքապետի թեկնածուի կարգավիճակի անհամատեղելիությունը նրա պաշտոնական դիրքի հետ (հոդված 136) -----	135
Ընտրական տարածքներ (հոդված 137) -----	136
Ընտրական համակարգը (հոդված 138) -----	136

Ընտրական ձայնի իրավունքը (հոդված 139)-----	136
Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի կազմը և մեծամասնական ընտրատարածքների սահմանները (հոդված 140) -----	137
Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունքը և մեծամասնական թեկնածուների առաջադրումը (հոդված 141)-----	137
Կուսակցական ցուցակի ներկայացումը (հոդված 143)-----	138
Սակրեբուլոյի անդամության թեկնածուների առաջադրումը մեծամասնական ընտրատարածքում (հոդված 144) -----	138
Քվեաթերթիկը (հոդված 147) -----	139
Մեծամասնական ընտրակարգով անցկացված սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների որոշումը (հոդված 149)-----	139
Սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների ամփոփումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (հոդված 150) -----	140
Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստի հրավիրումը (հոդված 151) -----	141
Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամ ընտրվածների գրանցումը (հոդված 153) -----	141
Սակրեբուլոյի պակասած անդամին փոխարինելու կարգը (հոդված 154)-----	141
Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի՝ սակրեբուլոյի ընտրությունները (հոդված 155) ----- -----	142
Ընտրատարածքներ (հոդված 156) -----	142
Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունքը (հոդված 157) -	143
Կուսակցական ցուցակների ներկայացումը (հոդված 158)-----	143
Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատների բաշխման կարգը (հոդված 162)-----	143
Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ ընտրված անձանց գրանցումը (հոդված 163) -----	144
Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի/ համայնքապետի ընտրությունները (հոդված 165)-----	144
Պլեբիսցիտի նշանակումը և դրա անցկացման կարգը (հոդված 173)-----	144
Հանրաքվեի նշանակումը (հոդված 174)-----	145

Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը և կրկնական ընտրությունները (հոդված 169 ¹) -----	145
Հանրաքվեի կազմակերպումը (հոդված 171) -----	146
Հանրաքվեի հարցերը (հոդված 172)-----	147
Հանրաքվեի կազմակերպման նախաձեռնող խումբը (հոդված 175)-----	147
Ստորագրություններ հավաքելու կարգը և ժամկետները (հոդված 176) -----	148
Ստորագրահավաքի արդյունքների քննարկումը (հոդված 177) -----	148
Հանրաքվեի կազմակերպման պահանջի հետ կապված որոշում կայացնելը (հոդված 178) -----	149
Հանրաքվեի կազմակերպման պահանջի ետկանչը (հոդված 180) -----	149
Ընտրական հանձնաժողովները (հոդված 181) -----	150
Հանրաքվեի արդյունքների ամփոփումը և որոշման ուժի մեջ մտնելը (հոդված 183)-----	150
Թեստեր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 6-ի № 7/2023 որոշումով հաստատված հավելվածից, որը սահմանում է էլեկտրոնային եղանակով քվեարկության անցկացման կարգն ու պայմանները-----	151
Թեստեր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 25-ի № 54/2015 որոշումով հաստատված Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգից -----	156
Թեստեր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի № 2/2012 որոշումով հաստատված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կանոնակարգից -----	159
Թեստեր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 23-ի № 49/2021 որոշումով հաստատված Վրաստանի ընտրական վարչակազմի պաշտոնյաների էթիկայի կանոնագրքից -----	162
Թեստեր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 27-ի № 11/2017 որոշումով հաստատված հավելվածից, որով սահմանվում են ԿԸՀ անդամների և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ընտրված անդամների աշխատանքային հարաբերություններին առնչվող և ծառայողական անհամատեղելիության հարցերը -----	166

Թեստեր Վրաստանի Սահմանադրությունից

Գլուխ առաջին: Ընդհանուր դրույթներ

1. Ըստ Սահմանադրության՝ ստորև նշվածներից ո՞րն է ճիշտ պատասխանը.

- Վրաստան պետության անվանումն է՝ «Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն»:
- Վրաստան պետության անվանումն է՝ «Վրաստան»: (2.1)
- Վրաստան պետության անվանումն է՝ «Վրաստանի Հանրապետություն»:
- Վրաստան պետության անվանումն է՝ «Վրաստանի Դաշնային Հանրապետություն»:

2. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանը.

- Ժողովրդագրական հանրապետություն է:
- Ժողովրդավարական հանրապետություն է: (3.1)
- Ավտորիտար հանրապետություն է:
- Պլուտոկրատական հանրապետություն է:

3. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանում իշխանության աղբյուրն է.

- Վրաց ազգը:
- Վրացի ընտրողը:
- Բազրատիոնիների թագավորական դինաստիան:
- Ժողովուրդը: (3.2)

4. Սահմանադրության համաձայն՝ ժողովրդի, որպես իշխանության աղբյուրի, իշխանությունն իրականացնելու միջոցներից մեկն է.

- Հանրաքվեն: (3.2)
- Դատարան դիմելու իրավունքը:
- Ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրավունքը:
- Գործադուլը:

Գլուխ երկրորդ: Մարդու հիմնարար իրավունքները

5. Ի՞նչ նպատակով է անթույլատրելի քաղաքական միավորման ստեղծումն ու գործունեությունը:

- Թույլ չի տրվում ստեղծել այնպիսի քաղաքական միավորում, որի նպատակը Վրաստանի տարածքային ամբողջականության խախտումն է: (23.3)
- Թույլ չի տրվում ստեղծել այնպիսի քաղաքական միավորում, որի նպատակը իշխանությունն ստանալն է:
- Թույլ չի տրվում ստեղծել այնպիսի քաղաքական միավորում, որի նպատակը ընտրություններին մասնակցելն է:
- Թույլ չի տրվում ստեղծել այնպիսի քաղաքական միավորում, որի նպատակը որոշակի գաղափարախոսության տարածումն է:

6. Սահմանադրության վրա հիմնվելով՝ նշե՛ք ճիշտ պատասխանը.

- Թույլ չի տրվում քաղաքական կուսակցության արգելում:
- Քաղաքական կուսակցության արգելումը թույլ է տրվում խորհրդարանի որոշումով:
- Քաղաքական կուսակցության արգելումը թույլ է տրվում միայն Գերագույն դատարանի որոշումով՝ օրենքով սահմանված դեպքերում և սահմանված կարգով:
- Քաղաքական կուսակցությունը կարելի է արգելել միայն Սահմանադրական դատարանի որոշումով՝ Օրգանական օրենքով սահմանված դեպքերում և սահմանված կարգով: (23.4)

7. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի քաղաքացիները ո՞ր տարիքից կարող են մասնակցել ընտրություններին ընտրողի կարգավիճակով:

- 16 տարեկանից:
- 17 տարեկանից:
- 18 տարեկանից: (24.1)
- 21 տարեկանից:

8. Ստորև թվարկածներից ո՞վ չունի ընտրություններին մասնակցելու իրավունք:

- Վրաստանի քաղաքացին, որը գտնվում է քրեակատարողական հիմնարկում ոչ մեծ ծանրության հանցագործության համար:
- Անձը, որի 18 տարին լրացել է ընտրությունների օրը:
- Անձը, որը դատարանի վճռով ճանաչվել է որպես աջակցություն ստացող և տեղավորված է համապատասխան ստացիոնար բուժհաստատությունում: (24.2)
- Անձը, որը գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, բայց դժվարամատչելի վայրում:

9. Վրաստանի Սահմանադրության համաձայն՝ այն քաղաքացին, որը դատարանի վճռով առանձնապես ծանր հանցագործության համար գտնվում է պատիժների կատարման հիմնարկում, չի մասնակցում.

- Միայն պլեբիսցիտին:
- Ընտրություններին և հանրաքվեին: (24.2)
- Միայն ընտրություններին:
- Միայն հանրաքվեին:

Գլուխ երրորդ: Վրաստանի խորհրդարանը

10. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի խորհրդարանը.

- Երկրի Բարձրագույն ներկայացուցչական մարմին է: (36.1)
- Նախագահի խորհրդակցական մարմին է:
- Եվրախորհրդարանի կառուցվածքային մաս է:
- Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին է:

11. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի խորհրդարանի գործունեության հիմնական ուղղությունն (գործառույթն) է.

- Արդարադատության իրականացումը:
- Օրենսդրական իշխանության իրականացումը: (36.1)
- Սահմանադրական վերահսկողության իրականացումը:
- Մարդու իրավունքների պաշտպանությունը:

12. Ե՞րբ են անցկացվում Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունները:

- Խորհրդարանի հերթական ընտրություններն անցկացվում են խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի վերջին ուրբաթ օրը:
- Խորհրդարանի հերթական ընտրություններն անցկացվում են խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի վերջին կիրակի օրը:
- Խորհրդարանի հերթական ընտրություններն անցկացվում են խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի առաջին շաբաթ օրը:
- Խորհրդարանի հերթական ընտրություններն անցկացվում են խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի վերջին շաբաթ օրը: (37.3)

13. Ո՞վ կարող է ընտրվել Վրաստանի խորհրդարանի անդամ:

- Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 21 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 3 տարի:
- Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 21 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 10 տարի:
- Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 5 տարի:
- Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 25 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 10 տարի: (37.4)

14. Խորհրդարանն արձակելիս՝ ի՞նչ ժամկետում են անցկացվում Վրաստանի խորհրդարանի արտահերթ ընտրությունները:

- Խորհրդարանն արձակելու դեպքում ընտրություններն անցկացվում են խորհրդարանի արձակումից հետո ոչ շուտ, քան 45-րդ և ոչ ուշ, քան 60-րդ օրը: (37.3)
- Խորհրդարանն արձակելու դեպքում ընտրություններն անցկացվում են խորհրդարանի արձակումից հետո ոչ շուտ, քան 20-րդ և ոչ ուշ, քան 25-րդ օրը:
- Խորհրդարանն արձակելու դեպքում ընտրություններն անցկացվում են խորհրդարանի արձակումից հետո ոչ շուտ, քան 35-րդ և ոչ ուշ, քան 45-րդ օրը:
- Խորհրդարանն արձակելու դեպքում ընտրություններն անցկացվում են խորհրդարանի արձակումից հետո ոչ շուտ, քան 35-րդ և ոչ ուշ, քան 60-րդ օրը:

15. Սահմանադրության համաձայն, Վրաստանի խորհրդարանը բաղկացած է.

- Միասնական բազմամանդատ ընտրատարածքում համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանի 150 անդամից:

- Միասնական բազմամանդատ ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանի 150 անդամից:
- Միասնական բազմամանդատ ընտրատարածքում համամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանի 150 անդամից: (37.2)
- Միասնական բազմամանդատ ընտրատարածքում համամասնական ընտրակարգով ընտրված խորհրդարանի 120 անդամներից:

16. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի խորհրդարանն ընտրվում է.

- 7 տարի ժամկետով:
- 6 տարի ժամկետով:
- 3 տարի ժամկետով:
- 4 տարի ժամկետով: (37.2)

17. Ըստ Սահմանադրության՝ քանի՞ անդամից է բաղկացած խորհրդարանը:

- Խորհրդարանի 235 անդամից:
- Խորհրդարանի 190 անդամից:
- Խորհրդարանի 150 անդամից: (37.2)
- Խորհրդարանի 180 անդամից:

18. Ըստ Սահմանադրության՝ ինչպե՞ս է կոչվում Վրաստանի բարձրագույն ներկայացուցչական մարմնի անդամը:

- Նախագահ:
- Սակրեբուլոյի անդամ:
- Խորհրդարանի անդամ: (37.2)
- Սենատոր:

19. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի խորհրդարանը կազմված է.

- Համընդհանուր, ազատ և անուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ընտրված խորհրդարանի անդամներից:
- Համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա բաց քվեարկությամբ ընտրված խորհրդարանի անդամներից:
- Ազատ, հավասար և անուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ընտրված խորհրդարանի անդամներից:
- Համընդհանուր, ազատ, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ընտրված խորհրդարանի անդամներից: (37.2)

20. Համաձայն Վրաստանի Սահմանադրության՝ ո՞ր մարմինն է նշանակում խորհրդարանի հերթական ընտրությունների օրը:

- Վրաստանի խորհրդարանի նախագահը:.
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: (37.3)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Վրաստանի վարչապետը:

21. Եթե ընտրությունների օրը համընկնում է արտակարգ կամ պատերազմական դրության հետ.

- Ընտրություններն անցկացվում են այս դրության չեղարկման օրվանից ոչ շուտ, քան 45-րդ և ոչ ուշ, քան 60-րդ օրը: (37.3)
- Ընտրություններն անցկացվում են այս դրության չեղարկման օրվանից ոչ շուտ, քան 50-րդ և ոչ ուշ, քան 65-րդ օրը:
- Ընտրություններն անցկացվում են այս դրության չեղարկման օրվանից ոչ շուտ, քան 55-րդ և ոչ ուշ, քան 70-րդ օրը:
- Ընտրություններն անցկացվում են այս դրության չեղարկման օրվանից ոչ շուտ, քան 60-րդ և ոչ ուշ, քան 75-րդ օրը:

22. Ո՞վ է նշանակում Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունները:

- Վրաստանի նախագահը: (37.3)
- Թվարկվածներից ոչ մեկը:
- Վրաստանի վարչապետը:
- ԿԸՀ-ն:

23. Սահմանադրության համաձայն, ո՞ր պայմանի առկայության ժամանակ քաղաքական կուսակցությունն իրավունք ունի մասնակցելու Վրաստանի խորհրդարանի ընտրություններին:

- Եթե կուսակցության աջակցությունն օրգանական օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 25 000 ընտրողների ստորագրություններով: (37.5)
- Եթե կուսակցության աջակցությունն օրգանական օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 20 000 ընտրողների ստորագրություններով:
- Եթե կուսակցության աջակցությունն օրգանական օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 15 000 ընտրողների ստորագրություններով:
- Եթե կուսակցության աջակցությունն օրգանական օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 5000 ընտրողների ստորագրություններով:

24. Ի՞նչ ժամկետում է անցկացվում Նորընտիր խորհրդարանի առաջին նիստը:

- Նորընտիր խորհրդարանի առաջին նիստն անցկացվում է խորհրդարանի ընտրությունների արդյունքների պաշտոնական հայտարարման օրվանից հետո, ոչ ուշ, քան 20-րդ օրը:
- Նորընտիր խորհրդարանի առաջին նիստն անցկացվում է խորհրդարանի ընտրությունների արդյունքների պաշտոնական հայտարարման օրվանից հետո, ոչ ուշ, քան 25-րդ օրը:
- Նորընտիր խորհրդարանի առաջին նիստն անցկացվում է խորհրդարանի ընտրությունների արդյունքների պաշտոնական հայտարարման օրվանից հետո, ոչ ուշ, քան 10-րդ օրը: (38)
- Նորընտիր խորհրդարանի առաջին նստաշրջանն անցկացվում է խորհրդարանի ընտրությունների օրվանից հետո, ոչ ուշ, քան 10-րդ օրը:

25. Նորընտիր խորհրդարանի առաջին նիստի օրը նշանակում է.

- Վրաստանի նախագահը վարչապետի համաստորագրությամբ:
- Վրաստանի նախագահը: (38)

- Նախորդ գումարման խորհրդարանի նախագահը:
- Նորընտիր խորհրդարանի ամենատարեց պատգամավորը:

Գլուխ չորրորդ: Վրաստանի նախագահը

26. Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է նախատեսված Սահմանադրության մեջ:

- Վրաստանի նախագահը գործադիր իշխանության գլուխն է:
- Վրաստանի նախագահը գործադիր և օրենսդիր իշխանության գլուխն է:
- Վրաստանի նախագահը պետության և գործադիր իշխանության գլուխն է:
- Վրաստանի նախագահը Վրաստան պետության գլուխն է: (49.1)

27. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի նախագահը.

- Երկրի միասնության երաշխավորն է: (49.1)
- Վրաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության երաշխավորն է:
- Հարավային Կովկասի երկրների միասնության երաշխավորն է:
- Վրաստանի Սահմանադրության պաշտպանության երաշխավորն է:

28. Վրաստանի նախագահը.

- Վրաստանի տարիքով ամենաավագն է:
- ՄԱԿ-ում Վրաստանի դեսպանն է:
- Վրաստանի պաշտպանության ուժերի գերագույն հրամանատարն է: (49.2)
- Վրաստանի անվտանգության ղեկավարն է:

29. Ըստ սահմանադրության՝ ինչպե՞ս և ի՞նչ ժամկետով է տեղի ունենում Վրաստանի նախագահի ընտրությունը:

- Վրաստանի նախագահին 6 տարի ժամկետով՝ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ընտրում են Վրաստանի քաղաքացիները:
- Վրաստանի նախագահին 5 տարի ժամկետով՝ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ընտրում են Վրաստանի քաղաքացիները:
- Վրաստանի նախագահին 6 տարի ժամկետով՝ առանց քննարկումների բաց քվեարկությամբ ընտրում է ընտրական կոլեգիան:
- Վրաստանի նախագահին 5 տարի ժամկետով՝ առանց քննարկումների բաց քվեարկությամբ ընտրում է ընտրական կոլեգիան: (50.1)

30. Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է նախատեսված Վրաստանի Սահմանադրությամբ:

- Միննույն անձը նախագահ կարող է ընտրվել անընդմեջ միայն երկու անգամ:
- Միննույն անձը նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:
- Միննույն անձը նախագահ կարող է ընտրվել անընդմեջ միայն երեք անգամ:
- Միննույն անձը նախագահ կարող է ընտրվել միայն երկու անգամ: (50.1)

31. Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է նախատեսված Վրաստանի Սահմանադրությամբ:

- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 35 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 15 տարի:
- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 40 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 15 տարի: (50.2)
- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 40 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 10 տարի:
- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 35 տարեկանից, որը Վրաստանում բնակվել է առնվազն 10 տարի:

32. Ո՞վ չի ընդգրկված Վրաստանի նախագահ ընտրելու համար ընտրական կոլեգիայի կազմում:

- Վրաստանի խորհրդարանի անդամը:
- Արխագիայի Ինքնավար Հանրապետության բարձրագույն ներկայացուցչական մարմնի անդամը:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետը: (50.3)
- Աջարիայի Ինքնավար Հանրապետության բարձրագույն ներկայացուցչական մարմնի անդամը:

33. Վրաստանի նախագահի ընտրությունների համար քանի՞ անդամ է ընդգրկված ընտրական կոլեգիայում:

- 200:
- 500:
- 150:
- 300: (50.3)

34. Սահմանադրության համաձայն՝ Նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի.

- Քաղաքացիների քաղաքական կուսակցությունը:
- Քաղաքացիների հասարակական միավորումը:
- Ընտրական կոլեգիայի առնվազն 30 անդամ: (50.4)
- 15000 ընտրող:

35. Համաձայն Վրաստանի Սահմանադրության՝ քանի՞ փուլ կարելի է անցկացնել Վրաստանի նախագահի ընտրության համար:

- Մեկ:
- Երկու: (50.4)
- Երեք:
- Չորս:

36. Ո՞ր թեկնածուն կհամարվի ընտրված Վրաստանի նախագահի ընտրությունների երկրորդ փուլում:

- Որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն մեկ չորրորդը:
- Որն ավելի շատ ձայներ կստանա: (50.4)

- Որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն մեկ երրորդը:
- Որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն երկու երրորդը:

37. Ի՞նչ ժամկետում են անցկացվում Վրաստանի նախագահի կրկնական ընտրությունները:

- 1-շաբաթյա ժամկետում:
- 10-օրյա ժամկետում:
- 20-օրյա ժամկետում:
- 30-օրյա ժամկետում: (50.4)

38. Վրաստանի Սահմանադրության համաձայն, եթե Վրաստանի նախագահին առաջին փուլում չի ընտրվում, ապա երկրորդ փուլում քվեարկության են դրվում.

- Բոլոր այն անձինք, ովքեր վերագրանցված կլինեն ԿԸՀ-ի կողմից Սահմանադրությամբ և Օրգանական օրենքով սահմանված կարգով:
- Առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները, ովքեր հաղթահարել են 5%-անոց շեմը:
- Առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները:
- Առաջին փուլում լավագույն արդյունք գրանցած երկու թեկնածուները: (50.4)

39. Նախագահական ընտրությունների առաջին փուլում ընտրված կհամարվի այն թեկնածուն.

- Որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն մեծամասնությունը:
- Որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն երկու երրորդը: (50.4)
- Որը կստանա ընտրական կոլեգիայի ձայների մեծամասնությունը, բայց ոչ պակաս, քան ամբողջական կազմի մեկ երրորդը:
- Որը կստանան ընտրական կոլեգիայի ձայների մեծամասնությունը:

40. Պաշտոնից իմպիչմենտի կարգով պաշտոնանկ անելու պատճառով նախագահի լիազորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում ի՞նչ ժամկետում պետք է անցկացվեն նախագահական ընտրությունները:

- Լիազորության դադարեցումից հետո 60 օրվա ընթացքում:
- Լիազորության դադարեցումից հետո 45 օրվա ընթացքում: (50.5)
- Լիազորության դադարեցումից հետո 30 օրվա ընթացքում:
- Վրաստանի Սահմանադրությամբ չի նախատեսված նախագահին իմպիչմենտի կարգով պաշտոնանկ անելը, հետևաբար արտահերթ ընտրություններ այդ հիմքով չեն անցկացվի:

41. Սահմանադրության համաձայն՝ ե՞րբ են անցկացվում Վրաստանի նախագահի ընտրությունները:

- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի լիազորության ժամկետն ավարտվելու օրացուցային տարվա սեպտեմբերին:

- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի լիազորության ժամկետն ավարտվելու օրացուցային տարվա հոկտեմբերի վերջին կիրակի օրը:
- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի լիազորության ժամկետն ավարտվելու օրացուցային տարվա հոկտեմբերի առաջին կիրակի օրը:
- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի լիազորության ժամկետն ավարտվելու օրացուցային տարվա հոկտեմբերին: (50.5)

42. Ո՞վ է նշանակում նախագահական հերթական ընտրությունների օրը:

- Խորհրդարանի նախագահը:
- Խորհրդարանը: (50.6)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի նախագահը:

43. Ո՞վ է նշանակում Վրաստանի նախագահի կրկնական ընտրությունները:

- Վրաստանի նախագահը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի խորհրդարանի նախագահը: (50.6)

44. Ե՞րբ է դադարում Վրաստանի նախագահի լիազորությունը:

- Վրաստանի նախագահի լիազորությունը դադարում է նորընտիր նախագահի կողմից երդում տալուց անմիջապես հետո: (51.2)
- Վրաստանի նախագահի լիազորությունը դադարում է նորընտիր նախագահի ընտրությունից անմիջապես հետո:
- Վրաստանի նախագահի լիազորությունը դադարում է Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:
- Վրաստանի նախագահի լիազորությունը դադարում է Վրաստանի նախագահի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերին:

45. Ե՞րբ է սկսվում Վրաստանի նորընտիր նախագահի լիազորությունը:

- Նրան ընտրելուց անմիջապես հետո:
- Նախագահի ընտրությունների անցկացումից հետո երկրորդ կիրակի օրը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:
- Վրաստանի նորընտիր նախագահի երդում տալուց անմիջապես հետո: (51.2)

46. Ո՞վ է նշանակում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի խորհրդարանի նախագահը:
- Վրաստանի նախագահը: (52.1.գ)

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

47. Ըստ սահմանադրության՝ ո՞ր մարմինը կամ պաշտոնատար անձն է նշանակում խորհրդարանի ընտրությունները:

- Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի նախագահը: (52.1.գ)
- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի կառավարությունը:

48. Ստորև թվարկված պնդումներից ո՞րը ճիշտ է:

- Վրաստանի նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակել առնվազն 200 հազար ընտրողների պահանջով:
- Վրաստանի նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակել Վրաստանի խորհրդարանի պահանջով:
- Վրաստանի նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակել սեփական նախաձեռնությամբ: (52.2)
- Վրաստանի նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակել Վրաստանի կառավարության պահանջով:

49. Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է նախատեսված Վրաստանի Սահմանադրությամբ:

- Նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակելու, եթե դրա պահանջով նրան դիմել է Սահմանադրական դատարանի նախագահը:
- Նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակելու, եթե դրա պահանջով նրան դիմել է վարչապետը:
- Նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակելու, եթե դրա պահանջով նրան դիմել է կառավարությունը: (52.2)
- Նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակելու, եթե դրա պահանջով նրան դիմել է Վրաստանի խորհրդարանի նախագահը:

50. Վրաստանի նախագահն իրավագոր է հանրաքվե նշանակել, եթե.

- Դա պահանջում է առնվազն 20 000 ընտրող:
- Դա պահանջում է Վրաստանի հանրային պաշտպանը:
- Դա պահանջում է առնվազն 200 000 ընտրող: (52.2)
- Դա պահանջում է Ազգային անվտանգության խորհուրդը:

51. Սահմանադրության համաձայն՝ ի՞նչ հարցերի շուրջ է Վրաստանի նախագահն իրավագոր հանրաքվե նշանակելու:

- Պետական նշանակության ցանկացած հարցով:
- Միայն Սահմանադրությամբ և օրենքով սահմանված հարցերով: (52.2)
- Հանրաքվե ամցկացնել պահանջելու իրավունք ունեցող սուբյեկտի կողմից պահանջի մեջ բարձրացված ցանկացած հարցի վերաբերյալ:
- Միայն օրենքով սահմանված հարցերով:

52. Ի՞նչ ժամկետում է Վրաստանի նախագահին իրավագոր նշանակելու հանրաքվե այն նշանակելու պահանջ ստանալուց հետո:

- 30 օրվա ընթացքում: (52.2)
- 60 օրվա ընթացքում:
- Սահմանադրությամբ և օրենքով ժամկետ սահմանված չէ, դրա որոշումը նախագահի հայեցողական լիազորությունն է:
- 45 օրվա ընթացքում:

53. Սահմանադրության համաձայն՝ ո՞ր հարցերով է նախագահին իրավագոր նշանակելու հանրաքվե:

- Համաներման կամ ներման պատճառով:
- Միջազգային պայմանագիր վավերացնելու կամ չեղարկելու մասին:
- Օրենք ընդունելու կամ չեղարկելու համար:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: (52.2)

54. Սահմանադրության համաձայն՝ Վրաստանի նախագահի ո՞ր ակտն է պահանջում վարչապետի համաստորագրում:

- Նախագահի ակտը, որը կապված է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նշանակման հետ: (52.1.գ. 53)
- Նախագահի ակտը, որը կապված է օրենքի ստորագրման և հրապարակման հետ:
- Նախագահի ակտը, որը կապված է Սահմանադրական դատարան Նախագահի դիմելու հետ:
- Նախագահի ակտը, որը կապված է պետական պարգևների շնորհման հետ:

Գլուխ հինգերորդ: Վրաստանի կառավարությունը

55. Համաձայն Վրաստանի Սահմանադրության՝ ո՞վ է Նախագահին առաջադրում վարչապետի թեկնածու նորընտիր խորհրդարանի կողմից լիակատար լիազորություն ստանալուց հետո:

- Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների խումբը:
- Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների խումբը:
- Խորհրդարանի ընտրություններում լավագույն արդյունքներ գրանցած քաղաքական կուսակցությունը: (56.2)
- Նախագահը միանձնյա է որոշում, թե ում առաջադրի որպես վարչապետի թեկնածու:

56. Ըստ սահմանադրության՝ ի՞նչ հետևանք կառաջանա, եթե խորհրդարանը վստահություն չհայտնի լավագույն արդյունք գրանցած քաղաքական կուսակցության կողմից առաջադրված վարչապետի թեկնածուի կողմից ներկայացված կառավարությանը:

- Նախագահը կարձակի խորհրդարանը և կհրավիրի արտահերթ խորհրդարանական ընտրություններ: (56.3)
- Նախագահն իրավունք ունի արձակելու կառավարությունը:

- Խորհրդարանը հաջորդ նստաշրջաններին իրավունք չունի սկսել անվտանգության գործընթաց:
- Կառավարությունը պատասխանատու է նախագահի առջև, հետևաբար դրա համար խորհրդարանի վստահություն նրան անհրաժեշտ չէ:

Գլուխ ութերորդ: Պետության պաշտպանությունը և անվտանգությունը

57. Համաձայն Վրաստանի Սահմանադրության՝ երկրի որևէ մասում արտակարգ դրություն սահմանելու դեպքում երկրի մնացած տարածքում ընտրություններ անցկացնելու մասին որոշումն ընդունում է.

- Նախագահը:
- Վարչապետը:
- Խորհրդարանը: (71.5)
- ԿԸՀ-ն:

58. Համընդհանուր ընտրություններ չեն անցկացվում.

- Արտակարգ կամ պատերազմական դրության ժամանակ: (71.5)
- Ընթացող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:
- Միայն արտակարգ դրության ժամանակ:
- Միայն պատերազմական դրության ժամանակ:

Գլուխ իններորդ: Տեղական ինքնակառավարումը

59. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինն ընտրվում է.

- Համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա բաց քվեարկությամբ:
- Միայն հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ:
- Համընդհանուր, հավասար և անուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ:
- Համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ: (74.1)

Թեստեր Վրաստանի Ընտրական օրենսգրքից

Տերմինների սահմանում (հոդված 2)

1. Ո՞ր պնդումը ճիշտ է:

- Կրկնական ընտրություններ են անցկացվում այն դեպքում, երբ մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին մասնակցել է մեկ թեկնածու, և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հանվել է նրա թեկնածությունը:
- Կրկնական ընտրություններ են անցկացվում այն դեպքում, երբ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին մասնակցող ընտրական սուբյեկտներից ոչ մեկը չի կարողացել հաղթահարել ընտրական շեմը:
- Կրկնական ընտրություններ են անցկացվում այն դեպքում, երբ ընտրությունները չկայացած են հայտարարվել ընտրատարածքների մեկ երրորդում: (2. գ.բ)
- Կրկնական ընտրություններ են անցկացվում այն դեպքում, երբ ընտրությունների արդյունքները դատարանի որոշմամբ անվավեր են ճանաչվել:

2. Ի՞նչ են ընտրությունները:

- Ընտրական գործընթաց, որի նպատակն ու արդյունքը հանրային իշխանության ներկայացուցչական մարմինների և հանրային իշխանության պաշտոնատար անձանց ընտրելն է: (2. գ)
- Ընտրական գործընթաց, որի նպատակն ու արդյունքը գործադիր իշխանության մարմինների և դեպարտամենտների ղեկավար անձանց ընտրելն է:
- Ընտրական գործընթաց, որի նպատակն ու արդյունքը ԿԸՀ անդամների և ծառայությունների ղեկավարների ընտրելն է:
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

3. Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ի՞նչ են ընտրական փաստաթղթերը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (2. լգ⁵)
- Հատուկ ծրար:
- Ընտրողի թերթիկ:

4. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Մեծամասնական թեկնածուն մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու նպատակով համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից գրանցված քաղաքացին է, որը ընտրատարածքում առաջադրված է միայն ընտրողների նախաձեռնող խմբի կողմից:
- Մեծամասնական թեկնածուն մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու նպատակով համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից գրանցված քաղաքացին է, որը ընտրատարածքում առաջադրված է միայն կուսակցության կողմից:

- Մեծամասնական թեկնածուն մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից գրանցված, կուսակցության/ընտրողների նախաձեռնող խմբի կողմից ընտրատարածքում առաջադրված Վրաստանի քաղաքացին է:
- Մեծամասնական թեկնածուն մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու նպատակով համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից գրանցված, կուսակցության/ընտրողների նախաձեռնող խմբի կողմից ընտրական տարածքում առաջադրված Վրաստանի քաղաքացի է: (2. ժե)

5. Ի՞նչ է ԲԸՀ (ԵԼՀԿ)-ն:

- Վրաստանի բարձրագույն ընտրական հանձնաժողով:
- Վրաստանի ընտրական վարչակազմի բարձրագույն մարմին:
- Արխագիայի և Աջարիայի ինքնավար հանրապետությունների բարձրագույն ընտրական հանձնաժողովներ: (2. ժը)
- Բարձրագույն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

6. Ի՞նչ է նշանակում համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններ:

- Քաղաքացու իրավունքը՝ առաջադրվելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ընտրվելու և զբաղեցնելու հանրային իշխանության պաշտոն:
- Վրաստանի քաղաքացիների և ընտրական սուբյեկտների կողմից կոչ ընտրողներին ընտրական սուբյեկտին աջակցելու համար կամ նրա դեմ:
- Վրաստանի խորհրդարանի և մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների ընտրություններ՝ կուսակցական ցուցակների հիման վրա: (2. ժ)
- Վրաստանի խորհրդարանի և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամների, շրջանային վարչության նախագահների և քաղաքապետների/համայնքապետների ընտրություններ՝ ըստ միամանդատ կամ բազմամանդատ ընտրատարածքների:

7. Ի՞նչ է նշանակում ակտիվ ընտրական իրավունքը:

- Քաղաքացու իրավունքը՝ քվեարկելու միջոցով մասնակցելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ժողովրդի ներկայացուցիչներ ընտրելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող ընտրություններին, հանրաքվեին, պլեբիսցիտին: (2. ժգ)
- Քաղաքացու իրավունքը՝ առաջադրվելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ընտրվելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու համար:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված 2 կամ ավելի կուսակցությունների միավորում:
- Ընտրական սուբյեկտների թեկնածուի և ընտրական սուբյեկտի կողմից ընտրություններին մասնակցելու և հաղթելու նպատակով անցկացված միջոցառումների ամբողջություն:

8. Ի՞նչ է նշանակում պասիվ ընտրական իրավունքը:

- Քաղաքացու իրավունքը՝ քվեարկության միջոցով մասնակցելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ժողովրդի ներկայացուցիչներ ընտրելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու համար անցկացված համընդհանուր ընտրություններին, հանրաքվեին, պլեբիսցիտին:
- Քաղաքացու իրավունքը՝ առաջադրվելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ընտրվելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու համար: (2.ժդ)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների համալրման իրավունք:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված 2 կամ ավելի կուսակցությունների միավորվելու իրավունք:

9. Ի՞նչ է կուսակցությունը:

- «Քաղաքացիների քաղաքական միավորումների մասին» Վրաստանի օրգանական օրենքին համապատասխան գործող քաղաքացիների քաղաքական միավորում է, որը գրանցված է ԿԸՀ նախագահի կողմից՝ ընտրություններին մասնակցելու նպատակով: (2.ի)
- Նախագահական ընտրություններին մասնակցելու նպատակով Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված, կուսակցության կամ ընտրողների նախաձեռնող խմբի կողմից առաջադրված Վրաստանի քաղաքացի է:
- Ընտրական սուբյեկտի թեկնածուի և ընտրական սուբյեկտի կողմից ընտրություններին մասնակցելու և հաղթելու նպատակով իրականացվող միջոցառումների ամբողջություն է:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված 2 կամ ավելի կուսակցությունների միավորում է:

10. Ընտրությունների երկրորդ փուլը.

- Քվեարկություն է, որն անցկացվում է Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում և ժամկետներում, երբ ընտրությունների առաջին փուլում չի հաջողվել հաղթող բացահայտել: (2.ը)
- Քվեարկություն է, որը կրկին է անցկացվում այն ընտրատեղամասում, որտեղ քվեարկության արդյունքն անվավեր է ճանաչվել:
- Քվեարկություն է, երբ ընտրությունների արդյունքները դատարանի որոշմամբ ճանաչվել են անվավեր:
- Ընտրություններ են, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կազմը համալրելու համար:

11. Հերթական ընտրություններ են.

- Ընտրությունները, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ հանրային իշխանության պաշտոնատար անձի լիազորության ժամկետի ավարտի պատճառով Վրաստանի Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով, Արխագիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունների սահմանադրություններով և համապատասխան օրենքներով սահմանված ժամկետներում: (2.դ.ա)

- Ընդհանուր ընտրությունները, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ հանրային իշխանության պաշտոնատար անձի լիազորության վաղաժամկետ դադարեցման պատճառով:
- Ընտրությունները, որոնք անցկացվում են պետական իշխանության ներկայացուցչական մարմնի կազմը համալրելու համար:
- Ընտրությունները, որոնք հերթական ընտրությունների համար սահմանված կարգով կրկնական են անցկացվում:

12. Ի՞նչ է նշանակում նախընտրական քարոզչությունը:

- Կոչ ընտրողներին՝ ընտրական սուբյեկտին/սուբյեկտի թեկնածուին աջակցելու համար կամ նրա դեմ (2.լգ¹)
- Ընտրական սուբյեկտի թեկնածուի և ընտրական սուբյեկտի կողմից ընտրություններին մասնակցելու և հաղթելու նպատակով իրականացվող միջոցառումների ամբողջություն:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված 2 կամ ավելի կուսակցությունների միավորում:
- Քաղաքացու իրավունքը՝ առաջադրվելու հանրային իշխանության ներկայացուցչական մարմնում ընտրվելու և հանրային իշխանության պաշտոն զբաղեցնելու համար:

13. Կրկնական ընտրություններ են.

- Ընտրություններ, որոնք կրկնական են անցկացվում հերթական ընտրությունների համար սահմանված կարգով (2.գ):
- Ընտրություններ, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կազմը համալրելու համար:
- Ընդհանուր ընտրություններ, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ պետական պաշտոնատար անձի լիազորության վաղաժամկետ դադարեցման պատճառով:
- Ընտրություններ, որոնք անցկացվում են հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ հանրային իշխանության պաշտոնատար անձի լիազորությունների ժամկետը լրանալու պատճառով:

14. Արտահերթ ընտրություններն անցկացվում են.

- Հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ հանրային իշխանության պաշտոնատար անձի լիազորությունների ժամկետը լրանալու պատճառով:
- Հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կամ հանրային իշխանության պաշտոնատար անձի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման պատճառով: (2.դ.բ)
- Հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կազմը լրացնելու պատճառով:
- Եթե ընտրությունների արդյունքները դատարանի որոշմամբ ճանաչվել են անվավեր:

15. Հանրաքվե է.

- Ընդհանուր-ժողովրդական հարցումը՝ համընդհանուր, հավասար և ուղղակի կամարտահայտման նպատակով, գաղտնի քվեարկությամբ, առանձնապես կարևոր

պետական հարցերի վերաբերյալ ընտրողների կամ նրանց մի մասի կարծիքը իմանալու համար, որն անցկացվում է Վրաստանի ողջ տարածքում:

- Ընդհանուր-ժողովրդական հարցումը՝ համընդհանուր, հավասար և ուղղակի կամարտահայտման նպատակով, գաղտնի քվեարկությամբ, հատկապես կարևոր պետական հարցերի վերջնական որոշման համար, որն անցկացվում է Վրաստանի ողջ տարածքում: (2.ա)
- Ընդհանուր-ժողովրդական հարցումը՝ համընդհանուր, հավասար և ուղղակի կամարտահայտման նպատակով, գաղտնի քվեարկությամբ, առանձնապես կարևոր պետական հարցերի մասին օրենք ընդունելու համար, որն անցկացվում է Վրաստանի ողջ տարածքում:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

16. Ո՞ր պնդումն է սխալ: Կրկնական ընտրություններն անցկացվում են.

- Եթե մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին մասնակցել է մեկ թեկնածու, և օրենքով սահմանված կարգով հանվել է նրա թեկնածությունը:
- Եթե առաջացել է հանրային իշխանության ներկայացուցչական մարմնի կազմը լրացնելու անհրաժեշտություն: (2.ե)
- Եթե համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին մասնակցող ընտրական սուբյեկտներից ոչ մեկը չի կարողացել հաղթահարել ընտրական շեմը, կամ ընտրությունները հայտարարվել են չանցկացված ընտրատարածքների ավելի քան կեսում:
- Եթե ընտրությունների արդյունքները դատարանի որոշմամբ ճանաչվել են անվավեր:

Ընտրությունների, հանրաքվեի և պլեբիսցիտի անցկացման հիմնական սկզբունքները (հոդված 3)

17. Ստորև թվարկվածներից ո՞րը կարող է մասնակցել մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին:

- Վրաստանի բոլոր քաղաքացիները 18 տարեկանից, բացառությամբ այն անձանց, որոնց ակտիվ ընտրական իրավունքը սահմանափակված է: (3.ա.ա)
- Օտար երկրի քաղաքացին 20 տարեկանից:
- Քաղաքացիություն չունեցող անձը 20 տարեկանից:
- 18 տարին լրացած Վրաստանի կամ օտար երկրի քաղաքացին:

18. Տրված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- Արգելվում է ընտրողին հարկադրելը, նրան ահաբեկելը և նրա քվեարկության գաղտնիությունը խախտելը:
- Վրաստանում ընտրություններն անցկացվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ Վրաստանի նախագահի ընտրությունների: (3.դ.ա)
- Ակտիվ ընտրական իրավունք ունեն Վրաստանի բոլոր այն քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է մինչև ընտրությունների օրը կամ լրանում է այդ օրը, և որոնք բավարարում են Ընտրական օրենսգրքով սահմանված պայմանները, բացառությամբ այն

անձանց, որոնց ընտրական ակտիվ իրավունքը սահմանափակված է Վրաստանի Սահմանադրությամբ և(կամ) դրան համապատասխան Հնտրական օրենսգրքով:

- Հնտրություններին մասնակցելու իրավունք չունի աջակցություն ստացող Վրաստանի քաղաքացին, որը տեղավորված է համապատասխան ստացիոնար բուժհաստատությունում:

19. Ի՞նչ է նշանակում ուղղակի ընտրական իրավունքը:

- Նույն ընտրատարածքի յուրաքանչյուր ընտրող ունի ձայների հավասար քանակ:
- Արգելվում է ցանկացած արարք, որը սահմանափակում է ընտրողի կամարտահայտումը:
- Վրաստանի խորհրդարանի անդամին, ինքնակառավարվող քաղաքի/ ինքնակառավարվող համայնքի սակրեբուլոյի անդամին, ինքնակառավարվող քաղաքի/ինքնավարվող համայնքի ղեկավարին ընտրողներն ընտրում են ուղղակիորեն: (3.գ.բ)
- Հնտրական գործընթացը հրապարակային է:

Հնտրական օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվարկը (հոդված 5)

20. Ինչպե՞ս են հաշվարկվում Վրաստանի Հնտրական օրենսգրքով սահմանված ժամկետները ընտրական ժամանակահատվածում:

- Օրացուցային օրերով, ներառյալ Վրաստանի աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային և հանգստյան օրերը : (5.1)
- Աշխատանքային օրերով:
- Օրացուցային օրերով, բացառությամբ Վրաստանի աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային և հանգստյան օրերի:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Վրաստանի ընտրական վարչակազմի կարգավիճակը, համակարգը և կազմը (հոդված 7)

21. Ո՞րն է Վրաստանում ընտրական վարչակազմի բարձրագույն մարմինը:

- ԿՀՀ-ն: (7.3)
- ԲՀՀ-ն:
- Հնտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:

22. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:

- Վրաստանի ընտրական վարչակազմը անկախ հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որն իր լիազորությունների շրջանակներում անկախ է այլ պետական մարմիններից և ստեղծվում է Հնտրական օրենսգրքի համաձայն:
- Վրաստանի ընտրական վարչակազմը մասնավոր իրավունքի իրավաբանական անձ է, որն իր լիազորությունների շրջանակում անկախ է այլ պետական մարմիններից և ստեղծվում է Հնտրական օրենսգրքի համաձայն:

- Վրաստանի ընտրական վարչակազմը ոչ առևտրային իրավաբանական անձ է, որն իր լիազորությունների շրջանակներում անկախ է այլ պետական մարմիններից և ստեղծվում է Ընտրական օրենսգրքի համաձայն:
- Վրաստանի ընտրական վարչակազմը անկախ վարչական մարմին է, որն իր լիազորությունների շրջանակներում անկախ է այլ պետական մարմիններից և ստեղծվում է Ընտրական օրենսգրքի համաձայն: (7.1)

23. Որը չի պատկանում ընտրական վարչակազմին:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Քաղաքային ընտրական հանձնաժողովը: (7.2)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Ընտրական հանձնաժողովի աշխատանքի կարգը (հոդված 8)

24. Ո՞ր ժամկետում է կազմվում ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

- Նիստից հետո եռօրյա ժամկետում:
- Նիստից հետո հնգօրյա ժամկետում:
- Նիստից հետո մեկօրյա ժամկետում: (8.8)
- Նիստից հետո տասնօրյա ժամկետում:

25. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք արդյոք ունեն՞ք քվեարկության շենքում լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունք:

- Այո՛, նրանք իրավունք ունեն լուսանկարելու և տեսանկարահանելու ինչպես քվեախցիկի ներսում, այնպես էլ դրանից դուրս:
- Ո՛չ, Ընտրական օրենսգրքով ոչ ոք իրավունք չունի քվեարկության շենքում լուսանկարել և տեսանկարահանել:
- Այո՛, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, բացառությամբ քվեախցիկի, կարող են քվեարկության շենքում իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում: (8.25)
- Ո՛չ, քվեարկության շենքում լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունք ունեն միայն ԿԸՀ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները:

26. Ո՞ր ժամկետում է ընտրական հանձնաժողովը պարտավոր շահագրգիռ անձին ծանոթացնել ընտրական փաստաթղթերը և ընտրությունների վերաբերյալ տեղեկությունը:

- Նրանց պահանջելուց հետո 3 օրվա ընթացքում, իսկ եթե նշված տեղեկության տրամադրումն ավելի շատ ժամանակ է պահանջում՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված կարգով:
- Նրանց պահանջելուց հետո 1 օրվա ընթացքում, իսկ եթե նշված տեղեկության տրամադրումն ավելի շատ ժամանակ է պահանջում՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված կարգով:

- Նրանց պահանջելուց հետո 2 օրվա ընթացքում, իսկ եթե նշված տեղեկության տրամադրումն ավելի շատ ժամանակ է պահանջում՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված կարգով: (8.14)
- Նրանց պահանջելուց հետո 5 օրվա ընթացքում, իսկ եթե նշված տեղեկության տրամադրումն ավելի շատ ժամանակ է պահանջում՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքով սահմանված կարգով:

27. Քվեարկության շենքում իրավունք ունեն գտնվելու.

- ԿԸՀ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները:
- ԿԸՀ և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները:
- Համապատասխան ընտրական հանձնաժողովում գրանցված մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (8.16)

28. Արդյոք ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է:

- Այո՝, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ, թեև պարտավոր է կատարել նրա ցուցումները:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի անդամը իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ և անկախ է իր գործունեության մեջ և ենթարկվում է միայն Վրաստանի Սահմանադրությանը, Օրենքին և համապատասխան ենթաօրենսդրական ակտերին: (8.21)
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի անդամը ենթարկվում է միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ցուցումներին:

29. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն լուսանկարելու և տեսանկարահանելու:

- Այո՝, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն լուսանկարել և տեսանկարահանել ինչպես քվեախցում, այնպես էլ դրանից դուրս:
- Ո՛չ, Վրաստանի ընտրական օրենսգրքի համաձայն՝ քվեարկության շենքում ոչ ոք իրավունք չունի լուսանկարել և տեսանկարահանել:
- Այո՝, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք, բացառությամբ քվեախցիկի, կարող են իրականացնել լուսանկարահանում և տեսանկարահանում: (8.25)
- Ո՛չ, միայն ԿԸՀ, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն ունեն լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունք:

30. Ընտրական հանձնաժողովի նիստը հրավիրվում է.

- Հանձնաժողովի նախագահի կողմից կամ նրա տեղակալի պահանջով: (8.2)
- Հանձնաժողովի քարտուղարի պահանջով:
- Հանձնաժողովի անդամների մեկ հինգերորդի պահանջով:
- Հանձնաժողովի անդամների երկու երրորդի պահանջով:

31. Ընտրական հանձնաժողովի նիստին կարգուկանոնը խախտելու և ընտրական հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելու դեպքում խախտողին հեռացնելու մասին որոշումն ընդունում է.

- Միայն ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրական հանձնաժողովի նիստի քարտուղարը:
- Համապատասխան ընտրական հանձնաժողովը: (8.15)
- Վերադաս ընտրական հանձնաժողովը:

32. Արդյոք ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է:

- Այո՛, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ: (8.21)
- Այո՛, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչն է և կատարում է նրա անմիջական առաջադրանքները:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի անդամն իրեն նշանակող սուբյեկտի ներկայացուցիչը չէ, բացառությամբ կուսակցության կողմից ընտրված անդամների:

33. Եթե ընտրական հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը միաժամանակ կամ հանձնաժողովի քարտուղարը ժամանակավորապես չեն կարող կատարել Ընտրական օրենսգրքով նախատեսված պարտականությունները, և պետք է կատարվի այնպիսի գործողություն, որը հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի առանձնահատուկ իրավագործությանն է պատկանում, ո՞վ է կատարում նրանց պարտականությունները:

- Ընտրական հանձնաժողովի ցանկացած անդամ:
- Ընտրական հանձնաժողովի տարիքով ամենաավագ անդամը:
- Հանձնաժողովի նախագահի կողմից լիազորված անձը:
- Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնակատարը: (8.22)

34. Ընտրական հանձնաժողովի կանոնակարգը.

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է կարգադրությամբ:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է որոշումով: (8.1)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատում է կարգադրությամբ:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատում է հրամանով:

35. Ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմ է.

- Ընտրական օրենսգրքի համաձայն ընտրված հանձնաժողովի անդամների թվի և այն կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամների թվի գումարը, որոնք Ընտրական օրենսգրքի համաձայն ստացել են ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու իրավունք: (8.31)

- Ընտրական օրենսգրքի համաձայն ընտրված հանձնաժողովի անդամների թվի և այն կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամների թվի գումարը, որոնք Ընտրական օրենսգրքի համաձայն ստացել են ընտրություններին մասնակցելու իրավունք:
- Ընտրական օրենսգրքի համաձայն ընտրված հանձնաժողովի անդամների թվի և հանձնաժողովի աշխատակազմի աշխատողների թվի գումարը:
- Այն կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամների թվի գումարը, որոնք ընտրական օրենսգրքի համաձայն ստացել են ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու իրավունք:

36. Ո՞ր մարմինն (անձն) է ընդունում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը:

- ԿԸՀ-ն: (8.1)
- ԿԸՀ նախագահը:
- Վրաստանի նախագահի աշխատակազմը:
- Վրաստանի խորհրդարանը:

37. Ինչպիսի՞ իրավական ակտով է ընդունվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը:

- Հրամանագրով:
- Կարգադրությամբ:
- Որոշումով: (8.1)
- Հրամանով:

38. Որքա՞ն ձայներ են անհրաժեշտ, որպեսզի ընտրատարածքային հանձնաժողովը որոշում կայացնի տեղամասային ընտրական հանձնաժողովից ստացված փաթեթները բացելու և քվեաթերթիկները վերահաշվելու վերաբերյալ:

- Նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ է նիստին ներկա գտնվողների մեծամասնության աջակցությունը:
- Նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ է հանձնաժողովի անդամների ամբողջական կազմի առնվազն երկու երրորդի աջակցությունը:
- Նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ է նիստին ներկա գտնվողների առնվազն երկու երրորդի աջակցությունը: (8.4)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

39. Ի՞նչ կլինի այն դեպքում, եթե ընտրական հանձնաժողովի նիստում քվեարկության ժամանակ ձայները հավասարապես բաշխվեն:

- Հարցը կրկին քվեարկվում է:
- Վճռորոշ է նիստի նախագահի ձայնը: (8.5)
- Որոշումը կհամարվի ընդունված:
- Որոշումը չի համարվի ընդունված:

40. Ո՞վ է ստորագրում ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

- Նիստի նախագահը և ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (8.7)
- Ընտրական հանձնաժողովի նախագահը և տեղակալը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղակալը, քարտուղարը և հանձնաժողովի բոլոր անդամները:

41. Ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերից բացի, մինչև ե՞րբ է տեղամասային ընտրական հանձնաժողովն ստանում, հատկացնում և գրանցում ընտրական փաստաթղթերը:

- Ամեն օր մինչև 18:30:
- Աշխատանքային օրերին մինչև ժամը 18:30:
- Ամեն օր մինչև ժամը 18:00:
- Աշխատանքային օրվա մինչև ժամը 18:00: (8.10)

42. Տեղամասային ընտրական հանձնաժողովից որևէ փաստաթղթի ստացումը դիմումատուն հաստատում է.

- Հանձնաժողովի նիստի արձանագրության վրա ստորագրելով:
- Գործավարության մատյանի վրա ստորագրելով:
- Գրանցամատյանում ստորագրելով: (8.12)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

43. Ինչպե՞ս պետք է վարվի ընտրական հանձնաժողովի անդամը, եթե նա համաձայն չէ հանձնաժողովի որոշման հետ:

- Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է չենթարկվել հանձնաժողովի որոշմանը, որի հետ համաձայն չէ:
- Ընտրական հանձնաժողովի այն անդամը, որը համաձայն չէ հանձնաժողովի որոշմանը, իրավունք ունի գրավոր արտահայտել իր տարբերվող կարծիքը, որը կցվում է արձանագրությանը: (8.9)
- Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է իր գործողությամբ խոչընդոտել հանձնաժողովի այն որոշման կատարումը, որի հետ ինքը համաձայն չէ:
- Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է չհարգել հանձնաժողովի այն որոշումը, որի հետ ինքը համաձայն չէ:

44. Պարտավո՞ր է արդյոք ընտրական հանձնաժողովը ընտրական փաստաթղթերը և ընտրությունների վերաբերյալ տեղեկությունները ծանոթացնել բոլոր շահագրգիռ անձանց, բացառությամբ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

- Ո՛չ, ընտրական հանձնաժողովը պարտավոր չէ բոլոր շահագրգիռ անձանց ծանոթացնել ընտրական փաստաթղթերը և ընտրությունների վերաբերյալ տեղեկությունը:
- Այո՛, ընտրական հանձնաժողովը պարտավոր է բոլոր շահագրգիռ անձանց ծանոթացնել ընտրական փաստաթղթերը և ընտրությունների վերաբերյալ տեղեկությունները նրանց պահանջելուց հետո 2-օրյա ժամկետում, բացառությամբ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերի: (8.14)

- Ո՛չ, ընտրական հանձնաժողովը իրավագոր է ընտրական փաստաթղթերը և ընտրությունների մասին տեղեկությունները նրանց պահանջից հետո 10-օրյա ժամկետում ծանոթացնել որոշ շահագրգիռ անձանց:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովն իրավունք ունի իր հայեցողությամբ որոշ շահագրգիռ անձանց ծանոթացնել ընտրական փաստաթղթերը և ընտրությունների մասին տեղեկությունները:

45. Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստին:

- Այո՛, ընտրական սուբյեկտների մեկական ներկայացուցիչը համապատասխան հանձնաժողովում ունի նիստին ներկա գտնվելու իրավունք: (8.15)
- Այո՛, ընտրական սուբյեկտների անսահմանափակ թվով ներկայացուցիչներ ունեն համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք:
- Ո՛չ, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներն իրավունք չունեն ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստին:
- Ո՛չ, ընտրական հանձնաժողովի նիստին իրավունք ունեն ներկա գտնվել միայն վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները:

46. Ո՞վ պետք է ընտրատեղամասում կրի իր ով լինելը և կարգավիճակն արտացոլող կրծքանշան:

- Միայն ընտրական հանձնաժողովի անդամը:
- Միայն դիտորդները:
- Միայն ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը:
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք: (8.17)

47. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան ներկա է.

- Հանձնաժողովի ամբողջական կազմի երկու երրորդը:
- Հանձնաժողովի ամբողջական կազմի մեծամասնությունը: (8.3)
- Հանձնաժողովի ցուցակային կազմի երկու երրորդը:
- Հանձնաժողովի ցուցակային կազմի մեծամասնությունը.

48. Ընտրական հանձնաժողովի որոշումը կհամարվի ընդունված, եթե դրան աջակցի.

- Ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմի մեծամասնությունը:
- Ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմի երկու երրորդը:
- Ներկա գտնվողների մեծամասնությունը (եթե օրենքով ավելի մեծ քվորում սահմանված չէ), բայց ոչ պակաս, քան ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմի մեկ երրորդը: (8.4)
- Ներկա գտնվողների մեծամասնությունը (եթե օրենքով ավելի մեծ քվորում սահմանված չէ), բայց ոչ պակաս, քան ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմի երկու երրորդը:

49. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում կամ նախագահի հանձնարարությամբ նրա պարտականությունները կատարում է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը: (8.24)

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

50. Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք չունեն.

- Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների համապատասխան հանձնաժողովում հավատարմագրված ներկայացուցիչները:
- Համապատասխան և վերադաս ընտրական հանձնաժողովների աշխատակազմի աշխատակիցները:
- Ընտրական սուբյեկտների մեկական ներկայացուցիչ համապատասխան հանձնաժողովում:
- Ընտրությունների մասնակցող թեկնածուն: (8.15)

51. Քվեարկության շենքում գտնվելու իրավունք չունի.

- Համապատասխան հանձնաժողովում հավատարմագրված լրատվամիջոցի ներկայացուցիչը:
- Համապատասխան հանձնաժողովում գրանցված ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը:
- Ընտրությունների մասնակցող թեկնածուն: (8.16)
- Դիտորդը:

52. Թվարկվածներից ո՞վ իրավունք չունի գտնվել քվեարկության շենքում և դիտարկել քվեարկության ընթացակարգը:

- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովում գրանցված ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը:
- Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները:
- Պաշտպանության նախարարության աշխատակից: (8.16)
- Միջազգային դիտորդական կազմակերպությունների դիտորդներ:

ԿԸՀ կազմը և ԿԸՀ նախագահի ընտրության կարգը (հոդված 10)

53. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- ԿԸՀ նախագահի թեկնածու կարող է լինել Վրաստանի գործունակ քաղաքացին 25 տարեկանից, որն անկուսակցական է, ունի բարձրագույն կրթություն, վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին, ունի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ: (10.4)
- ԿԸՀ նախագահի թեկնածու կարող է լինել Վրաստանի գործունակ քաղաքացին 24 տարեկանից, որն անկուսակցական է, ունի բարձրագույն կրթություն, վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին, ունի առնվազն 4 տարվա աշխատանքային փորձ:
- ԿԸՀ նախագահի թեկնածու կարող է լինել Վրաստանի գործունակ քաղաքացին 21 տարեկանից, որն անկուսակցական է, ունի բարձրագույն կրթություն, վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին, ունի աշխատանքային փորձ:
- ԿԸՀ նախագահի թեկնածու կարող է լինել Վրաստանի գործունակ քաղաքացին 25 տարեկանից, որն անկուսակցական է, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն,

վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին, ունի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

54. Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է.

- Ոչ ավելի, քան 17 անդամներից, այդ թվում, նախագահին և 8 անդամներին ընտրում է Վրաստանի խորհրդարանը, իսկ ոչ ավելի, քան 9 անդամների նշանակում են կուսակցությունները՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
- Ոչ ավելի, քան 17 անդամներից, այդ թվում, նախագահին և 6 անդամներին ընտրում է Վրաստանի խորհրդարանը, իսկ ոչ ավելի, քան 10 անդամների նշանակում են կուսակցությունները՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
- Ոչ ավելի, քան 17 անդամներից, այդ թվում, 10 անդամներին ընտրում է Վրաստանի խորհրդարանը, իսկ ոչ ավելի, քան 7 անդամների նշանակում են կուսակցությունները՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:
- Ոչ ավելի, քան 17 անդամներից, այդ թվում, նախագահին և 7 անդամներին ընտրում է Վրաստանի խորհրդարանը, իսկ ոչ ավելի, քան 9 անդամների նշանակում են կուսակցությունները՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: (10.1)

ԿԸՀ անդամների ընտրության կարգը (հոդված 12)

55. Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել.

- Վրաստանի քաղաքացին 21 տարեկան հասակից:
- Վրաստանի քաղաքացին 23 տարեկան հասակից:
- Վրաստանի քաղաքացին 22 տարեկան հասակից:
- Վրաստանի քաղաքացին 25 տարեկան հասակից: (10.4)

56. Հետևյալ պնդումներից որն է ճիշտ:

- ԿԸՀ անդամ չի կարող ընտրվել/նշանակվել այն անձը, որին Վրաստանի ընտրական օրենսդրության խախտման պատճառով ընտրական հանձնաժողովը կամ դատարանն ազատել է Վրաստանի ընտրական վարչակազմում զբաղեցրած պաշտոնից՝ պաշտոնից ազատելու օրվանից 5 տարվա ընթացքում:
- ԿԸՀ անդամ չի կարող ընտրվել/նշանակվել այն անձը, որի կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատել է Վրաստանի խորհրդարանը:
- ԿԸՀ անդամ կարող է ընտրվել/նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության համար և որի դատվածությունը չի մարվել:
- ԿԸՀ անդամ չի կարող ընտրվել/նշանակվել այն անձը, որին Վրաստանի ընտրական օրենսդրության խախտման պատճառով ընտրական հանձնաժողովը կամ դատարանը ազատել է Վրաստանի ընտրական վարչակազմում զբաղեցրած պաշտոնից՝ պաշտոնից ազատելու օրվանից 4 տարվա ընթացքում: (10.5.բ)

57. ԿԸՀ անդամ կարող է ընտրվել.

- Դիտորդը:

- Անձը, որին Վրաստանի ընտրական օրենսդրության խախտման պատճառով ընտրական հանձնաժողովը կամ դատարանը ազատել է Վրաստանի ընտրական վարչակազմում զբաղեցրած պաշտոնից՝ պաշտոնից ազատելու օրվանից 4 տարվա ընթացքում:
- Դատվածություն չունեցող անձը: (10.5)
- Ընտրական սուբյեկտը/ընտրական սուբյեկտի թեկնածուն, նրա ներկայացուցիչը:

Կուսակցությունների կողմից ԿԸՀ անդամներ նշանակելու և նրանց լիազորության դադարեցման կարգը (հոդված 13)

58. Ստորև թվարկված դեպքերում ե՞րբ իրավունք չունի կուսակցությունը հետ կանչել իր կողմից նշանակված ԿԸՀ անդամին:

- Կուսակցությունն իրավունք չունի ընտրությունների նշանակման օրվանից մինչև վերջնական արդյունքների ամփոփումը հետ կանչել իր կողմից նշանակված ԿԸՀ անդամին: (13.4)
- Կուսակցությունն իրավունք չունի հետ կանչել իր կողմից նշանակված ԿԸՀ անդամին, եթե ԿԸՀ անդամը փոխել է իր քաղաքական հայացքները:
- Կուսակցությունն իրավունք չունի հետ կանչել իր կողմից նշանակված ԿԸՀ անդամին, եթե ԿԸՀ անդամն անդամակցել է հասարակական կազմակերպությանը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

59. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրությունները նշանակելու օրվանից մինչև վերջնական արդյունքների ամփոփումը կուսակցությունն իրավունք ունի նշանակել ԿԸՀ նոր անդամ միայն այն դեպքում, եթե դա պահանջի Վրաստանի նախագահը:
- Ընտրությունները նշանակելու օրվանից մինչև վերջնական արդյունքների ամփոփումը կուսակցությունն իրավունք ունի նշանակել ԿԸՀ նոր անդամ միայն նշանակված անդամի մահվան կամ հրաժարականի դեպքում: (13.4)
- Ընտրությունները նշանակելու օրվանից մինչև վերջնական արդյունքների ամփոփումը կուսակցությունն իրավունք ունի նշանակել ԿԸՀ նոր անդամ միայն այն դեպքում, եթե դա միանձնյա որոշի կուսակցության առաջնորդը:
- Ընտրությունների օրվանից մինչև վերջնական արդյունքների ամփոփումը կուսակցությունն իրավունք ունի նշանակել ԿԸՀ նոր անդամ միայն այն դեպքում, եթե դա որոշի կուսակցության քարտուղարությունը:

ԿԸՀ լիազորությունները (հոդված 14)

60. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- ԿԸՀ-ն որոշումով ստեղծում է ընտրական տարածքներ և ճշտում դրանց սահմանները:
- ԿԸՀ-ն հրամանագրով ստեղծում է ընտրական տարածքներ և ճշտում դրանց սահմանները:
- ԿԸՀ-ն հրամանով ստեղծում է ընտրական տարածքներ և ճշտում դրանց սահմանները:

- ԿԸՀ-ն կարգադրությամբ ստեղծում է ընտրական տարածքներ և (կամ) ճշտում դրանց սահմանները: (14.1.ե)

61. Ի՞նչ իրավական ակտով է ԿԸՀ-ն որոշում ընտրության/հանրաքվեի/ պլեբիստիցի/ քվեաթերթիկների ձևը:

- Որոշումով:
- Կարգադրությամբ: (14.1.ժդ)
- Հրամանագրով:
- Հրամանով:

62. Ի՞նչ իրավական ակտով է ԿԸՀ-ն որոշում ընտրական հանձնաժողովների կնիքների տեսակները:

- Որոշումով:
- Կարգադրությամբ: (14.1.ժդ)
- Հրամանագրով:
- Հրամանով:

63. Ի՞նչ իրավական ակտով է ԿԸՀ-ն ընդունում ընտրական վարչակազմի պաշտոնատար անձանց հավաստագրման կանոնակարգը:

- Որոշումով: (14.1. իե)
- Կարգադրությամբ:
- Հրամանագրով
- Հրամանով:

64. Ի՞նչ իրավական ակտով է ԿԸՀ-ն հաստատում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հատուկ ուսուցման կարգն ու պայմանները:

- Կարգադրությամբ:
- Հրամանագրով:
- Որոշումով: (14.1.ժդ)
- Հրամանով:

65. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի ներքին գործերի նախարարությունը վարում է այն ընտրական հանձնաժողովի անդամների տվյալների բազա, որոնց կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատել է դատարանը:
- Վրաստանի արդարադատության նախարարությունը վարում է այն ընտրական հանձնաժողովի անդամների տվյալների բազա, որոնց կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատել է դատարանը:
- Վրաստանի նախագահի հրամանագրով ստեղծված մրցութային հանձնաժողովը վարում է այն ընտրական հանձնաժողովի անդամների տվյալների բազա, որոնց կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատել է դատարանը:

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը վարում է այն ընտրական հանձնաժողովի անդամների տվյալների բազա, որոնց կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատել է դատարանը: (14.1. իե)

66. Ո՞ր իրավական ակտով է ԿԸՀ-ն ընդունում ընտրական վարչակազմի պաշտոնյաների էթնիկայի կանոնագիրքը:

- Որոշումով: (14.1.իթ)
- Հրամանագրով:
- Կարգադրությամբ:
- Հրամանով:

67. Ո՞ր իրավական ակտով է ԿԸՀ-ն սահմանում քրեակատարողական հիմնարկում ընտրական իրավունք ունեցող մեղադրյալներին/դատապարտյալներին իրազեկելու պայմաններն ու կարգը:

- Կարգադրությամբ:(14.1.դ)
- Որոշումով:
- Հրամանով:
- ԿԸՀ-ն նման լիազորություն չունի:

68. Ո՞ւմ է հաշվետու ԿԸՀ-ն:

- Վրաստանի խորհրդարանին: (14.1.ժե)
- Վրաստանի նախագահին:
- Հանրային պաշտպանին:
- Պետական աուդիտի ծառայությանը:

69. Ո՞վ է պատասխանատու քվեաթերթիկներ տպագրելու և քվեատուփեր պատրաստելու համար Վրաստանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների համար:

- ԿԸՀ-ն: (63.3, 14.1.ժդ)
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- ԲԸՀ-ն:

70. ԿԸՀ ո՞ր իրավական ակտով է դիտորդի կարգավիճակ շնորհվում մեկ այլ պետության իշխանության մարմինների ներկայացուցիչների խմբին:

- ԿԸՀ որոշումով:
- ԿԸՀ-ի կարգադրությամբ: (14.1.ժբ)
- ԿԸՀ նախագահի որոշումով:
- ԿԸՀ նախագահի կարգադրությամբ:

71. Ո՞վ և ի՞նչ ձևով է նշանակում քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը:

- Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը կարգադրությամբ նշանակում է ԿԸՀ-ն: (169¹.2, 14.1. թ)

- Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը հրամանով նշանակում է ԿԸՀ նախագահը:
- Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը կարգադրությամբ նշանակում է Վրաստանի նախագահը:
- Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլ Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում:

72. Տրված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- ԿԸՀ-ն որոշումով ընդունում է Վրաստանի ընտրական վարչակազմի կանոնակարգը:
- ԿԸՀ-ն կարգադրությամբ ստեղծում է ընտրական տարածքներ և ճշտում դրանց սահմանները:
- ԿԸՀ-ն որոշումով նշանակում է արտահերթ, կրկնական և միջանկյալ ընտրություններ, կրկնակի քվեարկություն, ընտրությունների երկրորդ փուլ: (14.1.թ)
- ԿԸՀ-ն կարգադրությամբ նշանակում է արտահերթ, կրկնական և միջանկյալ ընտրություններ, կրկնակի քվեարկություն, ընտրությունների երկրորդ փուլ:

73. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ԿԸՀ-ն որոշումով սահմանում է ընտրողների միասնական ցուցակի ձևավորման լրացուցիչ կարգ և քվեարկության ընթացակարգեր: (14.1.իգ)
- ԿԸՀ-ն որոշումով հաստատում է հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը՝ ԿԸՀ նախագահի ներկայացման հիման վրա:
- ԿԸՀ-ն կարգադրությամբ հաստատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հատուկ ուսուցման կարգն ու պայմանները:
- ԿԸՀ-ն որոշումով սահմանում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրությունների/հանրաքվեի հետ կապված ծախսերի հաշվետվության ձևը:

74. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ԿԸՀ-ն որոշումով սահմանում է արտերկրում տեղակայված Վրաստանի զինված ստորաբաժանումներում ընտրությունների անցկացման կարգն ու ժամկետները:
- ԿԸՀ-ն որոշումով սահմանում է աջակիցների ստորագրությունների նվազագույն չափը ընտրողների նախաձեռնող խմբի կողմից առաջադրված թեկնածուների համար:
- ԿԸՀ-ն որոշումով հաստատում է Վրաստանի ընտրական վարչակազմի ռազմավարական և տարեկան գործողությունների ծրագրերը:
- ԿԸՀ-ն որոշումով հաստատում է հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնի կանոնադրությունը: (14.1.իը)

75. Ո՞վ է պատասխանատու ընտրողների միասնական ցուցակի համակարգչային մշակման և իր պաշտոնական կայքում այն տեղադրելու համար:

- Ներքին գործերի նախարարությունը:
- ԿԸՀ-ն: (14.1.իբ)
- Արդարադատության նախարարությունը:
- Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը:

ԿԸՀ նախագահի, նախագահի տեղակալի և ԿԸՀ քարտուղարի լիազորությունները
(հոդված 15)

76. Ո՞վ է կազմում ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

- ԿԸՀ նախագահը:
- ԿԸՀ նախագահի տեղակալը:
- ԿԸՀ քարտուղարը: (15.4. «ե»)
- ԿԸՀ անդամը:

77. Ո՞վ է գրանցում նախաձեռնող խմբի ներկայացուցիչներին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում քաղաք Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունների համար:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը որոշումով:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարը կարգադրությամբ: (15.4. բ¹)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը կարգադրությամբ:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը որոշումով:

78. Ո՞վ է գրանցում Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուին:

- Վրաստանի նախագահը:
- Վրաստանի խորհրդարանը:
- Թբիլիսիի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- ԿԸՀ նախագահը: (167.4, 15.2.ե)

79. Հետևյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- ԿԸՀ նախագահն իրականացնում է լրիվ վարչական գործառնություններ ԿԸՀ-ում:
- ԿԸՀ նախագահը գրանցում է քաղաք Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուներին:
- ԿԸՀ նախագահը համապատասխան վկայականներ է տալիս ընտրություններին մասնակցող կուսակցությունների և ընտրական դաշինքների ներկայացուցիչներին:
- ԿԸՀ նախագահը նշանակում է հանրաքվե: (15.2)

80. Հետևյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- ԿԸՀ քարտուղարը որոշումով իրականացնում է լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրում և տալիս նրանց հավատարմագրման թերթիկներ: (15.4.դ)
- ԿԸՀ քարտուղարը կազմում է ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները:
- ԿԸՀ քարտուղարը գրանցում է ընտրությունների դիտորդի կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպության կողմից ԿԸՀ-ում նշանակված դիտորդներին և նրանց տալիս դիտորդի վկայականներ:
- ԿԸՀ քարտուղարը բաշխում է ԿԸՀ ներկայացված ընտրական փաստաթղթերը և ԿԸՀ անունով մտից թղթակցությունը:

81. Ո՞վ է ընտրական վարչակազմի ամենաբարձր պաշտոնատար անձը:

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահները:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը: (15.1)

ԿԸՀ աշխատակազմը (հոդված 16)

82. Ի՞նչ իրավական ակտով է սահմանվում ԿԸՀ աշխատակազմի կառուցվածքը, գործունեության կարգը և լիազորությունները:

- ԿԸՀ նախագահի հրամանով:
- ԿԸՀ կանոնակարգով: (16.2)
- ԿԸՀ հատուկ ակտով:
- ԿԸՀ կարգադրությամբ:

83. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրական օրենսգիրքը սահմանում է հաստիքացուցակով նախատեսված ԿԸՀ այն պաշտոնյաների անվանացանկը, որոնց պարտադիր չէ ունենալ ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:
- ԿԸՀ-ն կարգադրությամբ սահմանում է հաստիքացուցակով նախատեսված ԿԸՀ այն պաշտոնյաների անվանացանկը, որոնց պարտադիր չէ ունենալ ընտրական վարչակազմի պաշտոնյայի վկայական:
- ԿԸՀ-ն որոշումով սահմանում է հաստիքացուցակով նախատեսված ԿԸՀ այն պաշտոնյաների անվանացանկը, որոնց պարտադիր չէ ունենալ ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր: (16.5)
- ԿԸՀ կանոնակարգով սահմանվում է հաստիքացուցակով նախատեսված ԿԸՀ այն պաշտոնյաների անվանացանկը, որոնց պարտադիր չէ ունենալ ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:

84. Ո՞վ է իրականացնում ընտրությունների անցկացման կազմակերպչական, իրավական և տեխնիկական ապահովումը:

- Վրաստանի խորհրդարանի բյուրոն:
- ԿԸՀ աշխատակազմը: (16.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի աշխատակազմը:
- ԿԸՀ բյուրոն:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ՝ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոն (հոդված 17)

85. Ո՞վ է իրականացնում հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնի պետական վերահսկողությունը:

- Վրաստանի խորհրդարանը:
- ԿԸՀ-ն: (17.2)

- Ընտրական սուբյեկտները:
- Վրաստանի նախագահը:

86. Ո՞վ է պաշտոնի նշանակում Ուսումնական կենտրոնի ղեկավարին:

- Ուսումնական կենտրոնի ղեկավարին ԿԸՀ համաձայնությամբ պաշտոնի է նշանակում ԿԸՀ նախագահի տեղակալը: ԿԸՀ համաձայնությունը ստացվում է ԿԸՀ որոշումով:
- Ուսումնական կենտրոնի ղեկավարին պաշտոնի է նշանակում ԿԸՀ քարտուղարը «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի և «Հանրային իրավունքի իրավաբանական անձի մասին» Վրաստանի օրենքի համաձայն:
- Ուսումնական կենտրոնի ղեկավարին պաշտոնի է նշանակում ԿԸՀ նախագահը՝ «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի և «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» Վրաստանի օրենքի համաձայն: (17.4)
- Ուսումնական կենտրոնի ղեկավարին Խորհրդարանի համաձայնությամբ պաշտոնի է նշանակում ԿԸՀ նախագահը:

87. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը Ընտրական օրենսգրքի հիման վրա ստեղծված մասնավոր իրավունքի իրավաբանական անձ է:
- Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը Ընտրական օրենսգրքի հիման վրա ստեղծված ոչ առևտրային իրավաբանական անձ է:
- Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը Ընտրական օրենսգրքի հիման վրա ստեղծված հանրային իրավունքի իրավաբանական անձ է: (17.1)
- Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը Ընտրական օրենսգրքի հիման վրա ստեղծված կոոպերատիվ է:

88. Ո՞ր մարմինն (անձն) է սահմանում ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրման կարգը:

- Հանրային իրավունքի իրավաբանական անձի՝ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնի ղեկավարը:
- Հանրային իրավունքի իրավաբանական անձը՝ ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը:
- ԿԸՀ նախագահը:
- ԿԸՀ-ն: (17.3.ե)

89. Ո՞վ է իրականացնում ընտրական վարչակազմի պաշտոնատար անձանց հավաստագրումը:

- Ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրումն իրականացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձը՝ Վրաստանի ազգային ուսումնական կենտրոնը:
- Ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրումն իրականացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձը՝ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը: (17.3.ե)

- Ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրումն իրականացնում է ԿԸՀ աշխատակազմը:
- Ընտրական վարչակազմի պաշտոնյաների հավաստագրումն իրականացնում է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ստեղծումը (հոդված 19)

90. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 5 անդամների 5 տարի ժամկետով ընտրում է ԿԸՀ-ն՝ ամբողջական կազմի առնվազն երկու երրորդով: (19.4)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 6 անդամների 5 տարի ժամկետով ընտրում է ԿԸՀ-ն՝ ամբողջական կազմի ոչ պակաս, քան մեկ երրորդով:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 5 անդամների 5 տարի ժամկետով ընտրում է ԿԸՀ-ն՝ ամբողջական կազմի ոչ պակաս, քան մեկ երրորդով:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 6 անդամների 5 տարի ժամկետով ընտրում է ԿԸՀ-ն առնվազն երկու երրորդով:

91. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Կուսակցության որոշումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու մասին պետք է ներկայացվի ԿԸՀ ընտրությունների նշանակումից հետո 3 օրացուցային օրվա ընթացքում:
- Կուսակցության որոշումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու մասին պետք է ներկայացվի ԿԸՀ ընտրությունների նշանակումից հետո 5 օրացուցային օրվա ընթացքում:
- Կուսակցության որոշումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու մասին պետք է ներկայացվի ԿԸՀ ընտրությունների նշանակումից հետո 7 օրացուցային օրվա ընթացքում: (19.6)
- Կուսակցության որոշումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու մասին պետք է ներկայացվի ԿԸՀ-ին ընտրությունների նշանակումից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում:

92. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որն ստեղծում է ԿԸՀ-ն ներկա գտնվողների մեծամասնությամբ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որն ստեղծում է ԿԸՀ-ն ներկա գտնվողների մեծամասնությամբ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որը ստեղծում է ԿԸՀ-ն ամբողջական կազմի առնվազն երկու երրորդով: (19.1)

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որը ձևավորում է ԿԸՀ-ն ամբողջական կազմի առնվազն մեկ երրորդով:

93. Քանի՞ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ստեղծելու իրավագործություն ունի ԿԸՀ-ն քաղաք Թբիլիսիում:

- ԿԸՀ-ն իրավագործ է կարգադրությամբ Թբիլիսի քաղաքում ստեղծել 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: (19.2)
- ԿԸՀ-ն իրավագործ է որոշումով Թբիլիսի քաղաքում ստեղծել 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
- ԿԸՀ-ն իրավագործ է կարգադրությամբ Թբիլիսի քաղաքում ստեղծել 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
- ԿԸՀ-ն իրավագործ է որոշումով Թբիլիսի քաղաքում ստեղծել 5 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների և ղեկավար անձանց նշանակման/ընտրության կարգը (հոդված 20)

94. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն հանձնաժողովի ոչ պակաս, քան 2 անդամներ: (20.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունի հանձնաժողովի մեկ անդամ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունի Նախագահի հրամանագրով ստեղծված մրցութային հանձնաժողովը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունի Նախագահի կարգադրությամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը:

95. Քանի՞ անգամ անընդմեջ կարող է առաջադրվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի նույն թեկնածուն:

- Նույն թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ անգամ:
- Նույն թեկնածուն կարող է առաջադրվել միայն երկու անգամ: (20.4)
- Նույն թեկնածուն կարող է առաջադրվել միայն երեք անգամ:
- Նույն թեկնածուն կարող է առաջադրվել միայն չորս անգամ:

96. Եթե ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում չի հաջողվել ընտրել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ղեկավար, տվյալ պաշտոնատար անձի պարտականությունը մինչ նրա ընտրությունը կատարում է հանձնաժողովի այն անդամը.

- Որն ընտրությունների ժամանակ ստացել է ամենաշատ ձայներ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ այն անդամը, որը ընտրական հանձնաժողովի անդամ աշխատելու ամենամեծ փորձն ունի:
- Որն ընտրությունների ժամանակ ստացել է ամենաշատ ձայներ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ տարիքով ամենաավագ անդամը:
- Որն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամենատարեց անդամն է:
- Որն ընտրությունների ժամանակ ստացել է ամենաշատ ձայներ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ նրանցից վիճակահանությամբ որոշված անձը: (20.5)

97. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում կուսակցության կողմից նշանակված անդամների լիազորությունները դադարեցվում են.

- Ընտրությունների օրն ավարտվելուց անմիջապես հետո:
- Ամփոփիչ արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո:
- Վերջնական արդյունքը ԿԸՀ նախագահի կողմից ստորագրելուց անմիջապես հետո:
- Ընտրությունների վերջնական արդյունքները հայտարարելուն պես: (20.9)

98. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրվելու/նշանակվելու դեպքում անձն իրավագոր է 3-օրյա ժամկետում կատարել Ընտրական օրենսգրքով սահմանված գործունեության սահմանափակման և ծառայության անհամատեղելիության պահանջները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրվելու/նշանակվելու դեպքում անձը պարտավոր է 3-օրյա ժամկետում կատարել Ընտրական օրենսգրքով սահմանված գործունեության սահմանափակման և ծառայության անհամատեղելիության պահանջները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրվելու/նշանակվելու դեպքում անձն իրավագոր է 7-օրյա ժամկետում կատարել Ընտրական օրենսգրքով սահմանված գործունեության սահմանափակման և ծառայության անհամատեղելիության պահանջները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրվելու/նշանակվելու դեպքում անձը պարտավոր է 7-օրյա ժամկետում կատարել Ընտրական օրենսգրքով սահմանված գործունեության սահմանափակման և ծառայության անհամատեղելիության պահանջները: (20.18)

99. Քանի՞ անդամից է բաղկացած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

- Ոչ ավելի, քան 13 անդամից:
- Ոչ ավելի, քան 17 անդամից: (20.1)
- Ոչ ավելի, քան 14 անդամից:
- Ոչ ավելի, քան 15 անդամից:

100. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի թեկնածությունն առաջադրելու իրավունք ունի հանձնաժողովի ոչ պակաս, քան 2 անդամ: Նույն թեկնածուին կարելի է առաջադրել.

- Միայն մեկ անգամ.
- Միայն երկու անգամ: (20.4)
- Միայն երեք անգամ:
- Միայն չորս անգամ:

101. Ստորև թվարկվածներից որ պնդումն է ճիշտ.

- ԿԸՀ-ի կողմից ընտրվելիք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել անկուսակցական, բարձրագույն կրթություն ունեցող անձը, որը վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին և ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր: (20.11)
- ԿԸՀ-ի կողմից ընտրվելիք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել անկուսակցական իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող անձը, որը վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին և ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:
- ԿԸՀ-ի կողմից ընտրվելիք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել անկուսակցական, միջնակարգ կրթություն ունեցող անձը, որը վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին և ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:
- ԿԸՀ-ի կողմից ընտրվելիք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել անկուսակցական, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը, որը վարժ տիրապետում է Վրաստանի պետական լեզվին և ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:

102. Ո՞վ կարող է մասնակցել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրելու մրցույթին:

- Մրցույթին մասնակցելու իրավունք ունի 18 տարին լրացած Վրաստանի գործունակ քաղաքացին, որը բավարարում է Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները:
- Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Վրաստանի գործունակ քաղաքացին 21 տարեկանից, իսկ բացառություն դեպքերում 18 տարեկանից և որը բավարարում է Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները:
- Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները բավարարող Վրաստանի գործունակ քաղաքացին 21 տարեկանից: (20.12)
- Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները բավարարող Վրաստանի գործունակ քաղաքացին 25 տարեկանից:

103. Ստորև թվարկվածներից ո՞վ չի կարող ընտրվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

- Անձ, որին վարչական տույժ է նշանակված մանր խուլիգանության համար:
- Անձ, որի նկատմամբ որպես պատժամիջոց է կիրառվել տուգանք:
- Անձ, որին Վրաստանի ընտրական օրենսդրությունը խախտելու համար Վրաստանի ընտրական հանձնաժողովը կամ դատարանն ազատել է Վրաստանի ընտրական վարչակազմում զբաղեցրած պաշտոնից՝ աշխատանքից ազատվելու օրվանից 4 տարվա ընթացքում: (20.17)

- Անձ, որն աշխատում է բանկային ոլորտում:

104. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածուն մրցութի համար ներկայացված հայտին չպետք է կցի.

- Ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագրի ֆոտոպատճենը:
- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի ֆոտոպատճենը:
- Աշխատավարձի տեղեկանք նախորդ աշխատանքի վայրից: (20.13)
- Բարձրագույն կրթությունը (նաև ակադեմիական (գիտական աստիճանը)՝ առկայության դեպքում) հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունները (հոդված 21)

105. Ի՞նչ իրավական ակտով է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դիտորդի կարգավիճակ շնորհում Ընտրական օրենսգրքով նախատեսված տեղական ոչ ձեռնարկատիրական (ոչ առևտրային) իրավաբանական անձանց:

- Կարգադրությամբ: (21.ը)
- Հրամանով
- Հրամանագրով:
- Որոշումով:

106. Ո՞ր ընտրական հանձնաժողովն է ապահովում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների որակավորման բարձրացման նպատակով սեմինարների և ուսումնական դասընթացների անցկացումը:

- ԿԸՀ-ն:
- ԲԸՀ-ն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (21.ժբ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:

107. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընտրատարածքում ապահովում է ընտրությունների, հանրաքվեների և պլեբիսցիտի նշանակումը և անցկացումը, վերահսկում է Վրաստանի ընտրական օրենսդրության կատարումը և ապահովում դրա միաբնույթ կիրառումը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընտրատարածքում ապահովում է ընտրությունների, հանրաքվեների և պլեբիսցիտի անցկացումը, վերահսկում է Վրաստանի ընտրական օրենսդրության կատարումը և ապահովում դրա միաբնույթ կիրառումը: (21. ա)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր լիազորության շրջանակներում ընտրատարածքում ապահովում է միայն ընտրությունների անցկացումը, վերահսկում է Վրաստանի ընտրական օրենսդրության կատարումը և ապահովում դրա միաբնույթ կիրառումը:

- Ոչ մի պնդում ճիշտ չէ:

108. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ձայների վերահաշվարկի մասին որոշում կայացնելու դեպքում այս մասին ո՞ւմ պետք է տեղյակ պահի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պետք է այդ մասին տեղեկացնի ԿՀՀ անդամներին և նրանց ներկայացուցիչներին և նրանց ցանկության դեպքում ապահովի նրանց մասնակցությունը վերահաշվարկի գործընթացին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պետք է տեղեկացնի միայն այն ընտրական սուբյեկտներին, որոնց ներկայացուցիչները ընտրական տեղամասում ներկա են գտնվել քվեաթերթիկները հաշվելուն, նրանց ցանկության դեպքում ապահովել նրանց մասնակցությունը վերահաշվարկի գործընթացին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը այդ մասին պետք է տեղեկացնի բոլոր ընտրական սուբյեկտներին և դիտորդական կազմակերպություններին, որոնց ներկայացուցիչները ներկա են գտնվել ընտրատեղամասում քվեաթերթիկները հաշվելուն, նրանց ցանկության դեպքում ապահովել նրանց մասնակցությունը վերահաշվարկի գործընթացին: (21.ե)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը չունի պարտավորություն որևէ մեկի տեղեկություն տրամադրել վերահաշվարկի գործընթացի մասին:

109. Ստորև տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը չի կարող սեփական նախաձեռնությամբ ստուգել տեղամասային ընտրական հանձնաժողովների, նրանց պաշտոնատար անձանց գործողությունների ու որոշումների օրինականությունը և խախտում հայտնաբերելու դեպքում ընդունել համապատասխան որոշում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ ստուգել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովների որոշումների օրինականությունը, իսկ պաշտոնատար անձանց գործողությունների ու որոշումների օրինականությունը ստուգում է ԿՀՀ-ն և խախտում հայտնաբերելու դեպքում ընդունում համապատասխան որոշում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ ստուգել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովների, դրանց պաշտոնատար անձանց և որոշումների օրինականությունը և խախտումներ հայտնաբերելու դեպքում կայացնել համապատասխան որոշում (21.ե).
- Ոչ մի պնդում ճիշտ չէ:

110. Թվարկաձևերից ո՞րն է ճիշտ պնդում.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ընտրատարածքում առկա ընտրական տեղամասերից պատահականության սկզբունքով հանձնաժողովի նիստում ընտրել 5 ընտրական տեղամաս, բացել այդ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված փաթեթները և վերահաշվել քվեարկության արդյունքները:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընտրատարածքում առկա ընտրական տեղամասերից պատահականության սկզբունքով հանձնաժողովի նիստում ընտրել 10 ընտրական տեղամաս, բացել այդ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված փաթեթները և վերահաշվել քվեարկության արդյունքները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ընտրատարածքում առկա ընտրական տեղամասերից պատահականության սկզբունքով հանձնաժողովի նիստում ընտրել 10 ընտրական տեղամաս, բացել այդ տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված փաթեթները և վերահաշվել քվեաթերթիկները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընտրատարածքում առկա ընտրական տեղամասերից պատահականության սկզբունքով հանձնաժողովի նիստում ընտրել 5 ընտրական տեղամաս, բացել այդ տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված փաթեթները և վերահաշվարկել քվեարկության արդյունքները: (21.դ²)

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները (հոդված 22)

111. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը համապատասխան վկայական է տալիս ընտրված սակրեբուլոյի անդամին (բացառությամբ քաղաք Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի):
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը համապատասխան վկայական է տալիս ընտրված սակրեբուլոյի անդամին (բացառությամբ քաղաք Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի): (22.1.է)
- ԲԸՀ նախագահը համապատասխան վկայական է տալիս սակրեբուլոյի ընտրված անդամին (բացառությամբ քաղաք Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի):
- ԿԸՀ նախագահը համապատասխան վկայական է տալիս սակրեբուլոյի ընտրված անդամին (բացառությամբ քաղաք Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի):

112. Ի՞նչ իրավական ակտով է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը իրականացնում լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրումը:

- Հրամանով:
- Հրամանագրով:
- Որոշումով:
- Կարգադրությամբ: (22.3. դ)

113. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում կատարում է լրիվ վարչական գործառնություններ: (22.1.ա)
- Տնօրինում է ԿԸՀ ֆինանսական միջոցները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովին է փոխանցում սակրեբուլոյի անդամ ընտրված անձանց լիազորությունը ստուգելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

114. Ո՞վ է տեղամասային ընտրական հանձնաժողովներում գրանցում ընտրություններին մասնակցող կուսակցության և ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցիչներին:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (22.3.բ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- ԿԸՀ նախագահը:

Ընտրական տեղամասեր (հոդված 23)

115. Ընտրական տեղամասում քվեարկությունն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման անցկացնելու դեպքում քանի՞ ընտրողի համար է ստեղծվում ընտրական տեղամաս, բացառությամբ Ընտրական օրենսգրքով նախատեսված բացառիկ դեպքերի:

- Ոչ պակաս, քան 10 և ոչ ավելի, քան 1500 ընտրողի:
- Ոչ պակաս, քան 20 և ոչ ավելի, քան 1500 ընտրողի: (23.2)
- Ոչ պակաս, քան 50 և ոչ ավելի, քան 1500 ընտրողի:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

116. Ո՞վ է ստեղծում ընտրական տեղամասերը, և ո՞վ է իրավագոր որոշելու դրանց սահմաններն ու համարները:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (23.2)
- ԿԸՀ-ն:
- Վրաստանի խորհրդարանը:
- Ընտրական տեղամասի ղեկավար անձը:

117. Այլ պետությունում ընտրատեղամաս ստեղծվո՞ւմ է:

- Ոչ պակաս, քան 50 և ոչ ավելի, քան 3 000 ընտրողների համար: (23.7)
- Ոչ պակաս, քան 25 և ոչ ավելի, քան 3 000 ընտրողների համար:
- Ոչ պակաս, քան 50 և ոչ ավելի, քան 2 000 ընտրողների համար:
- Ոչ պակաս, քան 20 և ոչ ավելի, քան 1500 ընտրողների համար:

118. Որտե՞ղ է փակցվում տեղեկությունը՝ ընտրական տեղամասի սահմանների և ընտրական տեղամասում ընդգրկված բոլոր բնակելի շենք-շինությունների հասցեների նշմամբ (եթե այդպիսին կա):

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում: (23.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի շենքում:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի շենքում:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

119. Ո՞վ է ամփոփում այլ պետությունում ստեղծված ընտրական տեղամասերի արդյունքները:

- Սաբուրթալյի № 03 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Արտաքին գործերի նախարարությունը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (23.7)
- Վրաստանի հյուպատոսությունը:

120. Ստեղծված ընտրական տեղամասում ընդգրկված բոլոր շենք-շինությունների ցանկը և հասցեն ճշգրտում է.

- Համապատասխան բնակավայրի շրջանային վարչությունը:
- Վրաստանի արդարադատության նախարարության տեղական անձնագրային ծառայությունը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (23.5)
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ստեղծումը (հոդված 24)

121. Քանի՞ անդամից է բաղկացած տեղամասային ընտրական հանձնաժողովը:

- Ոչ ավելի, քան 17 անդամից: (24.1)
- Ոչ ավելի, քան 13 անդամից:
- Ոչ ավելի, քան 14 անդամից:
- Ոչ ավելի, քան 12 անդամից:

122. Ստորև թվարկվածներից ո՞վ կարող է ընտրվել/նշանակվել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ:

- Դատված անձը, ում նկատմամբ պատժամիջոցի տեսքով նշանակվել է տուգանք: (24.6.գ)
- Վրաստանի խորհրդարանի անդամը:
- Նախարարության դեպարտամենտների ղեկավարները:
- Դատավորի օգնականը:

123. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (24.2)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին իսկ նիստում ընտրում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրում է Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց նշանակում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

124. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Այլ պետությունում ստեղծված տեղամասային հանձնաժողովի 8 անդամի ընտրում է №1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

- Այլ պետությունում ստեղծված տեղամասային հանձնաժողովի 6 անդամի ընտրում է ԿՀՀ-ն:
- Այլ պետությունում ստեղծված տեղամասային հանձնաժողովի 8 անդամի ընտրում է ԿՀՀ-ն: (24.3)
- Այլ պետությունում ստեղծված տեղամասային հանձնաժողովի 6 անդամի ընտրում է №1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

125. Ո՞ր պնդումն է ճիշտ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հավաստագիր չի պահանջվում.

- Այն անձից, որն ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր:
- Այն անձից, որն ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի հավաստագիր:
- Լիազորված կուսակցության կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամից:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (24.51)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընտրությունը/նշանակումը (հոդված 25)

126. Ու՞մ պետք է ներկայացվի լիազորված կուսակցության որոշումը այլ պետությունում ստեղծված տեղամասային հանձնաժողովի անդամի հետևանքի և նրան փոխարինող նշանակելու մասին:

- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- ԿՀՀ-ին: (25.9)

127. Ե՞րբ է սկսում իր գործունեությունը նորաստեղծ տեղամասային ընտրական հանձնաժողովը:

- Ընտրությունների օրվանից 30 օր առաջ (25.14)
- Ընտրությունների օրվանից 35 օր առաջ:
- Ընտրությունների օրվանից 40 օր առաջ:
- Ընտրությունների օրվանից 34 օր առաջ:

128. Ո՞վ է հրապարակում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ցուցակը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ցուցակը ԿՀՀ պաշտոնական կայքում հրապարակում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (25.7)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ցուցակը ԿՀՀ պաշտոնական կայքում հրապարակում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ցուցակը հրապարակում է խորհրդարանը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ցուցակը հրապարակում է տեղական ինքնակառավարման մարմինը:

129. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ ընտրելու որոշման մեջ պետք է նշվի.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հասցեն:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հասցեն:
- Ընտրված անձի ծննդյան ամսաթիվը:
- Ընտրված անձի անունը և ազգանունը: (25.12)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրությունը (հոդված 25¹)

130. Ո՞ր պնդումն է ճիշտ: Մրցութին մասնակցող անձից տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի հավաստագիր չի պահանջվում այն դեպքում, եթե.

- Ունի ընտրական վարչակազմի պաշտոնյայի հավաստագիր: (25¹.6)
- Ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հավաստագիր:
- Ունի հանրային ծառայողի հավաստագիր:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

131. Ո՞վ է իրավագոր ընտրելու տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (25¹.2)
- Տեղամասային հանձնաժողովի նախագահը միանձնյա:
- ԿԸՀ-ն:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունը (հոդված 26)

132. Ո՞ր ընտրական հանձնաժողովն է ընտրողներին բաժանում ընտրողի թերթիկները:

- ԿԸՀ-ն:
- ԲԸՀ-ն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը: (26.2.գ)

133. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որը ստեղծվում է ԿԸՀ-ի և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված/ընտրված անձանց կողմից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որը ստեղծվում է Ընտրական օրենսգրքով

սահմանված սուբյեկտներից, ԿԸՀ-ի և վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված/ընտրված անձանցից: (26.1)

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի ժամանակավոր տարածքային մարմին է, որը ստեղծվում է միայն ԿԸՀ-ի կողմից նշանակված անձանցից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական վարչակազմի մշտական տարածքային մարմին է, որը ստեղծվում է միայն վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նշանակված անձանցից:

134. Ե՞րբ և որտե՞ղ պետք է փակցվի տեղամասային ընտրական հանձնաժողովի և նրա նախագահի ցանկացած կարգադրություն:

- Հենց հաջորդ օրը այն փակցվում է ընտրատեղամասում: (26.3)
- Այն չի փակցվում ընտրատեղամասում:
- Երրորդ օրը այն փակցվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի շենքում:
- Հենց երկրորդ օրը հրապարակվում է տեղական ՋԼՄ-ների միջոցով:

135. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ամբողջական կազմի մեծամասնության որոշումով վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը: (26.2.ե)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ամբողջական կազմի մեկ երրորդի որոշումով վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ամբողջական կազմի երեք չորրորդի որոշումով վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ամբողջական մեկ չորրորդի որոշումով վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու հարցը:

136. Քվեարկության օրը ընտրության գործընթացի և քվեարկության նախապատրաստման հետ կապված դիմումներն ու բողոքները քննարկում է.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը: (26.2. ը)

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի լիազորությունները (հոդված 27)

137. Ստորև թվարկվածներից, ում իրավասության մեջ է ներառված տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի օգնականի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի: (27.3. «ա»)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի:

138. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորություններին չեն պատկանում.

- Լրիվ վարչական գործառույթների իրականացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում: (27.3, 62.3)
- Հանձնաժողովի կարգադրությունների նախագծերի պատրաստումը:
- Հանրային տեղեկությունների տրամադրումը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրության կազմումը:

139. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անունով մտից թղթակցությունը ստանում և բաշխում է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (27.1.գ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

140. Տեղամասային ընտրական հանձնաժողովի հանրային տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձն է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (27.3.բ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի դրա համար իրավագոր անդամը:

Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների կարգապահական պատասխանատվության միջոցները (հոդված 28)

141. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ.

- Մեկ կարգապահական խախտման համար կարող է կիրառվել միայն կարգապահական պատասխանատվության մեկ միջոց: (28.3)
- Մեկ կարգապահական խախտման համար նպատակահարմար է կիրառել կարգապահական պատասխանատվության միայն մեկ միջոց:

- Մեկ կարգապահական խախտման համար երաշխավորվում է կիրառել կարգապահական պատասխանատվության մեկ միջոց:
- Մեկ կարգապահական խախտման համար հնարավոր է կիրառել կարգապահական պատասխանատվության երկու միջոց:

142. Ո՞վ է կարգապահական խախտում թույլ տալու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի նկատմամբ կիրառում կարգապահական պատասխանատվության միջոց:

- Միայն ԿԸՀ նախագահը:
- Միայն ԿԸՀ-ն:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (28.2)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

143. Ստորև թվարկված կարգապահական պատասխանատվության ո՞ր միջոցի կիրառում է նախատեսում Ընտրական օրենսգիրքը:

- Նկատողություն:
- Խիստ նկատողություն:
- Դիտողություն: (28.2)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

144. Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար ստորև թվարկվածներից ո՞րը չի հանդիսանում Ընտրական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված կարգապահական խախտում:

- Անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը:
- Պաշտոնեական պարտականությունները մեղավորությամբ չկատարելը:
- Անհարգելի պատճառով 2 անգամ անընդմեջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստից բացակայելը: (28.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգի կոպիտ խախտումը:

145. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի նկատմամբ կարգապահական խախտումներ կատարելու համար կարող է կիրառվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցը.

- Դիտողություն:
- Նախազգուշացում:
- Պաշտոնեական վարձատրության/պաշտոնեական վարձատրության մի մասի պահում:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (28.2)

[Ընտրական հանձնաժողովի անդամի/ղեկավար անձի լիազորության վաղաժամկետ դադարեցումը \(հոդված 29\)](#)

146. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ.

- Ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է ԿԸՀ որոշումով (բացառությամբ կուսակցությունների կողմից նշանակված անդամների), եթե բացահայտվել է ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակին անհամատեղելի գործունեության փաստ:
- Ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է ԿԸՀ նախագահի հրամանագրով (բացառությամբ կուսակցությունների կողմից նշանակված անդամների), եթե բացահայտվել է ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակին անհամատեղելի գործունեության փաստ:
- Ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է վերադաս ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ (բացառությամբ կուսակցությունների կողմից նշանակված անդամների), եթե բացահայտվել է ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակին անհամատեղելի գործունեության փաստ: (29.1)
- Ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է վերադաս ընտրական հանձնաժողովի հրամանով (բացառությամբ կուսակցությունների կողմից նշանակված անդամների), եթե բացահայտվել է ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակին անհամատեղելի գործունեության փաստ:

147. Ստորև թվարկված պնդումներից ո՞րը չի հանդիսանում ընտրական հանձնաժողովի անդամի լիազորության վաղաժամկետ դադարեցման հիմք:

- Եթե ընտրական հանձնաժողովի անդամն ընտրվելու դեպքում 5-օրյա ժամկետում չի դադարեցնում ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակին անհամատեղելի գործունեությունը և(կամ) ծառայությունը: (29.1.ա)
- Անհարգելի պատճառով 2 ամիս անընդմեջ ԿԸՀ կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի/անդամի լիազորությունը չկատարելու կամ ԿԸՀ կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստից 3 անգամ անընդմեջ բացակայելու դեպքում:
- Ընտրական հանձնաժողովի անդամ նշանակող կուսակցության կողմից օրենքով սահմանված կարգով նրան հետ կանչելիս՝ հետկանչի մասին դիմում ներկայացնելու դեպքում:
- Եթե առկա է դատարանի մեղադրական դատավճիռը, կամ եթե ընտրական հանձնաժողովի անդամի կողմից Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումը հաստատվել է դատարանի կողմից՝ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում:

148. Ի՞նչ իրավական ակտով է վաղաժամկետ ազատվում զբաղեցրած պաշտոնից ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

- Խորհրդարանի որոշումով:
- ԿԸՀ նախագահի կարգադրությամբ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ: (29.3)
- ԿԸՀ նախագահի հրամանագրով.

149. Ի՞նչ է տեղի ունենում ընտրված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մահվան դեպքում:

- ԿԸՀ-ն նշված փաստն ընդունում է ի գիտություն, ինչը ձևակերպվում է ԿԸՀ նիստի արձանագրային գրառումով: (29.4)
- ԿԸՀ-ն ի գիտություն է ընդունում նշված փաստը, ինչը ձևակերպում է համապատասխան որոշումով:
- Վրաստանի խորհրդարանն ի գիտություն է ընդունում նշված փաստը, ինչը ձևակերպվում է Վրաստանի խորհրդարանի իրավաբանական հանձնաժողովի նիստի արձանագրային գրառումով:
- Վրաստանի խորհրդարանն ի գիտություն է ընդունում նշված փաստը, ինչը ձևակերպվում է Վրաստանի խորհրդարանի լիազումար նիստի արձանագրային գրառումով:

150. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Արգելվում է նույն հիմքով ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնանկության հարցը 6 ամսվա ընթացքում բարձրացնել անընդմեջ երկու անգամ: (29.5)
- Արգելվում է նույն հիմքով ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնանկության հարցը 3 ամսվա ընթացքում բարձրացնել անընդմեջ երկու անգամ:
- Արգելվում է նույն հիմքով ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնանկության հարցը 6 ամսվա ընթացքում բարձրացնել անընդմեջ երեք անգամ:
- Արգելվում է նույն հիմքով ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնանկության հարցը 5 ամսվա ընթացքում բարձրացնել անընդմեջ երկու անգամ:

151. Ո՞ր հանրային հիմնարկը և ի՞նչ ձևով է ի գիտություն ընդունում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրված անդամի մահվան փաստը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրված անդամի մահվան փաստը ի գիտություն է ընդունում խորհրդարանը, ինչը ձևակերպվում է խորհրդարանի նիստի արձանագրային գրառումով:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրված անդամի մահվան փաստը ի գիտություն է ընդունում ԿԸՀ-ն, ինչը ձևակերպվում է ԿԸՀ նիստի արձանագրային գրառումով: (29.4)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրված անդամի մահվան փաստը ի գիտություն է ընդունում Նախարարների կաբինետը, ինչը ձևակերպվում է Նախարարների կաբինետի նիստի արձանագրային գրառումով:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

152. Ո՞ր պնդումն է ճիշտ.

- Քվեարկության օրվան նախորդող վերջին 25 օրվա ընթացքում արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հետկանչ:
- Քվեարկության օրվան նախորդող վերջին 35 օրվա ընթացքում արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հետկանչ:
- Քվեարկության օրվան նախորդող վերջին 30 օրվա ընթացքում արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հետկանչ:

- Քվեարկության օրվան նախորդող վերջին 20 օրվա ընթացքում արգելվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի հետևանք: (29.9)

153. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Արգելվում է նույն հիմքով 6 ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ բարձրացնել ընտրական հանձնաժողովի նախագահի/նախագահի տեղակալի/քարտուղարի պաշտոնանկ անելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը: (29.5)
- Արգելվում է նույն հիմքով 7 ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ բարձրացնել ընտրական հանձնաժողովի նախագահի/նախագահի տեղակալի/քարտուղարի պաշտոնանկ անելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը:
- Արգելվում է նույն հիմքով 8 ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ բարձրացնել ընտրական հանձնաժողովի նախագահի/նախագահի տեղակալի/քարտուղարի պաշտոնանկ անելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը:
- Արգելվում է նույն հիմքով 9 ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ բարձրացնել ընտրական հանձնաժողովի նախագահի/նախագահի տեղակալի/քարտուղարի պաշտոնանկ անելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը:

Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտերը (հոդված 30)

154. Թվարկվածներից ո՞րն է պատկանում տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտերին:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (30.1.գ)

155. Ստորև թվարկվածներից ո՞ր իրավական ակտն ընդունելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

- Հրաման:
- Որոշում:
- Կարգադրություն: (30.1. գ)
- Կարգադրություն և հրաման:

156. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտին:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը: (30.1)
- ԿԸՀ նախագահի հրամանը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

157. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- ԿԸՀ նախագահի հրամանը:
- ԿԸՀ նախագահի կարգադրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հրամանը: (30.1)

158. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- ԿԸՀ որոշումը:
- ԿԸՀ կարգադրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը: (30.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

159. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- ԿԸՀ նախագահի որոշումը: (30.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը:

160. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- ԿԸՀ քարտուղարի կարգադրությունը:
- ԿԸՀ ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- ԿԸՀ հրամանագիրը: (30.1)

161. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- ԿԸՀ քարտուղարի հրամանը: (30.1)
- ԿԸՀ ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

162. Թվարկվածներից ո՞րը չի պատկանում ընտրական վարչակազմի իրավական ակտերին:

- ԿԸՀ որոշումը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը: (30.1)
- ԿԸՀ նախագահի հրամանը:
- ԿԸՀ-ի կարգադրությունը:

163. Ստորև թվարկվածներից ո՞ր իրավական ակտն ընդունելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

- Հրաման:
- Որոշում:
- Կարգադրություն: (30.1. գ)
- Կարգադրություն և հրաման:

164. Ստորև թվարկվածներից ո՞ր իրավական ակտն ընդունելու իրավունք ունի ԿԸՀ նախագահը:

- Միայն կարգադրություն:
- Կարգադրություն և հրաման: (30.1.ա)
- Որոշում:
- Հրամանագիր, հրաման և կարգադրություն:

165. Ո՞րը չի հանդիսանում Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտ:

- ԿԸՀ որոշումը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- ԿԸՀ քարտուղարի կարգադրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը. (30.1.բ)

166. Քվեարկության/ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները.

- Անհատական վարչաիրավական ակտեր են: (30.4)
- Նորմատիվ վարչաիրավական ակտեր են:
- Կարող են լինել ինչպես նորմատիվ վարչաիրավական, այնպես էլ անհատական վարչաիրավական ակտեր:
- Իրավական ակտ չեն:

167. Ստորև թվարկվածներից ո՞րը Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտ չէ:

- ԿԸՀ որոշումը:
- ԿԸՀ նախագահի կարգադրությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի որոշումը: (30.1)

168. Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտ չէ.

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի հրամանագիրը. (30.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը:

169. Ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- ԿԸՀ նախագահի որոշումը պարտադիր է կատարման համար Վրաստանի ողջ տարածքում:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը պարտադիր է կատարման համար համապատասխան ընտրատարածքի ողջ տարածքում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը պարտադիր է կատարման համար համապատասխան ընտրական տեղամասի ողջ տարածքում:
- Ցանկացած ընտրական հանձնաժողովի նախագահի որոշում պարտադիր է կատարման համար Վրաստանի ողջ տարածքում: (30.6)

170. Վրաստանի ընտրական վարչակազմի իրավական ակտեր են.

- ԿԸՀ հրամանագիրը:
- ԿԸՀ կարգադրությունը և հրամանագիրը:
- ԿԸՀ որոշումը և կարգադրությունը: (30.1.ա)
- ԿԸՀ հրամանը:

Ընտրողների միասնական ցուցակը և դրա ձևավորման կարգը (հոդված 31)

171. Ընտրողի ո՞ր տվյալները չեն ներառվում ընտրողների միասնական ցուցակում:

- Ազգանունը և անունը:
- Հայրանունը: (31.2)
- Վրաստանի քաղաքացու անձնական համարը:
- Ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

172. Թվարկվածներից ո՞ր տվյալը չի ներառվում ընտրողների միասնական ցուցակում:

- Ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը: (31.2)
- Հասցեն՝ ըստ Վրաստանի քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի:
- Ընտրողների միասնական ցուցակում գրանցման ամսաթիվը:

173. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների մասին տվյալներում/ընտրացուցակներում փոփոխություններ կատարելը մերժելու մասին կարող է բողոքարկվել համապատասխան շրջանային/քաղաքային դատարան այն հրապարակվելուց հետո՝ 2 օրվա ընթացքում: (31.10)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների մասին տվյալներում/ընտրացուցակներում փոփոխություններ կատարելը մերժելու մասին կարող է բողոքարկվել համապատասխան շրջանային/քաղաքային դատարան այն հրապարակվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների մասին տվյալներում/ընտրացուցակներում փոփոխություններ կատարելը մերժելու մասին կարող է բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հրապարակվելուց հետո՝ 2 օրվա ընթացքում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների մասին տվյալներում/ընտրացուցակներում փոփոխություններ կատարելը մերժելու մասին

կարող է բողոքարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հրապարակվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում:

174. Ընտրողների միասնական ցուցակում ընտրողի մասին տվյալները, որպես կանոն, ներառվում են.

- Ըստ նրա փաստացի բնակության վայրի:
- Ըստ նրա աշխատավայրի:
- Ըստ նրա գրանցման վայրի: (31.3)
- Ըստ նրա ընտրած վայրի:

175. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի բնագավթված տարածքից հարկադիր տեղահանված քաղաքացուն ընտրողների միասնական ցուցակում ընդգրկում են ըստ նրա փաստացի բնակության վայրի: (31.3)
- Վրաստանի բնագավթված տարածքից հարկադիր տեղահանված քաղաքացուն ընտրողների միասնական ցուցակում ընդգրկում են ըստ նրա աշխատանքի վայրի:
- Վրաստանի բնագավթված տարածքից հարկադիր տեղահանված քաղաքացուն ընտրողների միասնական ցուցակում ընդգրկում են ըստ նրա գրանցման վայրի:
- Վրաստանի բնագավթված տարածքից հարկադիր տեղահանված քաղաքացուն ընտրողների միասնական ցուցակում ընդգրկում են ըստ նրա կողմից ընտրված վայրի:

176. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Որպես կանոն, ընտրությունների օրվան նախորդող վերջին 14 օրվա ընթացքում արգելվում է փոփոխություններ կատարել ընտրացուցակներում:
- Որպես կանոն, ընտրությունների օրվան նախորդող վերջին 15 օրվա ընթացքում արգելվում է փոփոխություններ կատարել ընտրացուցակներում:
- Որպես կանոն, ընտրությունների օրվան նախորդող վերջին 13 օրվա ընթացքում արգելվում է փոփոխություններ կատարել ընտրացուցակներում:
- Որպես կանոն, ընտրությունների օրվան նախորդող վերջին 12 օրվա ընթացքում արգելվում է փոփոխություններ կատարել ընտրացուցակներում: (31.13)

177. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրողների միասնական ցուցակը ԿԸՀ որոշումով սահմանված կարգով գրանցված, ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրատեղամասերի:
- Ընտրողների միասնական ցուցակը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված, ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրական տեղամասերի: (31.1)
- Ընտրողների միասնական ցուցակը ԿԸՀ նախագահի հրամանով սահմանված կարգով գրանցված, ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրական տեղամասերի:

- Ընտրողների միասնական ցուցակը ԿԸՀ նախագահի հրամանով սահմանված կարգով գրանցված, պասիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրական տեղամասերի:

178. Ընտրատեղամաս եկած քաղաքացին չի կարողացել իր տվյալները գտնել ընտրողների միասնական ցուցակում: Հանձնաժողովը վերստուգել է ընտրողների ցուցակը և բացատրել, որ նրա 18 տարին լրանում է ընտրությունների օրը, և նա իրավունք չունի մասնակցելու ընտրություններին: Հանձնաժողովի պատասխանն արդյոք օրինակա՞ն է:

- Հանձնաժողովի պատասխանն օրինական է, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրողների միասնական ցուցակում ներառվում են այն անձանց տվյալները, որոնց 21 տարին լրացել է ընտրությունների օրը:
- Հանձնաժողովի պատասխանն օրինական չէ, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրողների միասնական ցուցակում ներառվում են այն անձանց տվյալները, որոնց 16 տարին լրացել է ընտրությունների օրը:
- Հանձնաժողովի պատասխանն օրինական չէ, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրողների միասնական ցուցակում ներառվում են այն անձանց տվյալները, որոնց 18 տարին լրանում է ընտրությունների օրվա դրությամբ: (31.5. ա)
- Հանձնաժողովի պատասխանն օրինական է, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ընտրողների միասնական ցուցակում ներառվում են այն անձանց տվյալները, որոնց 18 տարին լրացել է ընտրությունների նախորդ օրը:

179. Տրված պնդումներից ո՞ր պնդումը ճիշտ չէ: Ընտրողների միասնական ցուցակը կազմվում է.

- Պետական ծառայությունների զարգացման գործակալության տվյալների բազայում առկա, համապատասխան տարածքում ըստ բնակության վայրի՝ գրանցված անձանց, այդ թվում՝ ըստ այն անձանց մասին տվյալների, որոնց 18 տարին լրանում է ընտրությունների օրվա դրությամբ, ինչպես նաև մահացածների տվյալների:
- Մունիցիպալիտետի համապատասխան մարմինների կողմից այն անձանց մասին փոխանցված տվյալների հիման վրա, որոնք մահացած են, սակայն նրանց ընտանիքի անդամները չեն դիմել Պետական ծառայությունների զարգացման գործակալություն՝ մահվան վկայական ստանալու համար, ինչպես նաև այն փողոցների և բնակելի տների մասին փոխանցված տվյալների հիման վրա, որոնց անվանումը/համարը փոխվել է:
- Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության քննչական ծառայության կողմից տրամադրված այն անձանց վերաբերյալ տվյալների հիման վրա, որոնց նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում շրջակա միջավայրի պահպանության դեմ ուղղված հանցագործություն կատարելու պատճառով: (31.5)
- Վրաստանի արտաքին գործերի նախարարության կողմից փոխանցված այն ընտրողների մասին տվյալների հիման վրա, որոնք Վրաստանի հյուպատոսական հաշվառման մեջ են:

180. Ո՞վ է կարգադրությամբ որոշում այն ընտրողի գրանցման հարցը, որը քվեարկությանը մասնակցելու համար օրենքով սահմանված ժամկետում չի կարողացել գրանցվել, դիմում և համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (31.12)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:

- ԿԸՀ-ն:
- ԿԸՀ նախագահը:

181. Ո՞ր պնդումն է ճիշտ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակը (առանց լուսանկարների) փոխանցում է.

- Սկսած ընտրություններին նախորդող 25-րդ օրվանից, սակայն ոչ ուշ, քան 3 օր առաջ ճշգրտված ցուցակների վերջնական, հանրային տեղեկության համար հատկացված տարբերակները:
- Սկսած ընտրություններին նախորդող 25-րդ օրվանից, սակայն ոչ ուշ, քան 2 օր առաջ ճշգրտված ցուցակների վերջնական, հանրային տեղեկության համար հատկացված տարբերակները:
- Սկսած ընտրություններին նախորդող 30-րդ օրվանից, սակայն ոչ ուշ, քան 3 օր առաջ ճշգրտված ցուցակների վերջնական, հանրային տեղեկության համար հատկացված տարբերակները:
- Սկսած ընտրություններին նախորդող 30-րդ օրվանից, սակայն ոչ ուշ, քան 2 օր առաջ ճշգրտված ցուցակների վերջնական, հանրային տեղեկության համար հատկացված տարբերակները: (31.11)

182. Ո՞ր պնդումն է ճիշտ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրական հանձնաժողովի համար հատկացված ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները փոխանցում է.

- Քվեարկությունից ոչ ուշ, քան 6 ժամ առաջ:
- Քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ: (31.11)
- Քվեարկությունից ոչ ուշ, քան 18 ժամ առաջ:
- Քվեարկությունից ոչ ուշ, քան 24 ժամ առաջ:

183. Համաձայն Վրաստանի Ընտրական օրենսգրքի, ի՞նչ է ընտրողների միասնական ցուցակը:

- Ընտրողների միասնական ցուցակը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված, պասիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրատեղամասերի:
- Ընտրողների միասնական ցուցակը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված, ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրատեղամասերի: (31.1)
- Ընտրողների միասնական ցուցակը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված՝ ակտիվ և պասիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրատեղամասերի:
- Ընտրողների միասնական ցուցակը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված, ակտիվ ընտրական իրավունք ունեցող անձանց ցուցակ է, որը բաժանվում է ըստ ընտրատարածքների:

184. Քվեարկության օրվանից քանի՞ օր առաջ կարող է ընտրողը պահանջել ընտրողների միասնական ցուցակում փոփոխություն կատարել անձնություն հայտնաբերելու դեպքում:

- Ոչ ուշ, քան 14 օր առաջ:
- Ոչ ուշ, քան 15 օր առաջ:
- Ոչ ուշ, քան 12 օր առաջ:
- Ոչ ուշ, քան 18 օր առաջ: (31.7)

185. Ընտրողների միասնական ցուցակի ձևավորմանը չեն մասնակցում.

- Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը: (31.5)
- Վրաստանի ներքին գործերի նախարարությունը:
- Վրաստանի արդարադատության նախարարությունը:
- Մունիցիպալիտետի մարմինները:

186. Ճի՞շտ է արդյոք պնդումը, որ ընտրողների միասնական ցուցակը կազմվում է Վրաստանի պաշտպանության նախարարության ծառայողների մասին փոխանցված տվյալների հիման վրա:

- Այո՛, եթե նրանց ծառայության պայմանները պահանջում են, որ նրանք գտնվեն իրենց գրանցման վայրից տարբեր հասցեում, որը պատկանում է այլ ընտրատարածքի: (31.5.դ)
- Այո՛, եթե նրանք նման ցանկություն ունեն:
- Ո՛չ, քանի որ քվեարկության օրը նրանք արձակուրդ է պատկանում, որպեսզի ընտրություններին մասնակցեն՝ ըստ իրենց մշտական բնակության վայրի:
- Ո՛չ, քանի որ նրանք իրավունք չունեն մասնակցելու մեծամասնական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Ընտրողների հատուկ ցուցակ (հոդված 32)

187. Ստորև թվարկվածներից ո՞ւմ չեն ընդգրկում ընտրողների հատուկ ցուցակում:

- Ընտրական վարչակազմի այն պաշտոնյաներին, ովքեր ընտրական հանձնաժողովներում գործունեության պատճառով ընտրությունների օրը չեն կարող մասնակցել ընտրություններին՝ ըստ իրենց գրանցման վայրի:
- Այն ընտրողներին, որոնք բուժման նպատակով պառկած են հիվանդանոցում և, ելնելով իրենց առողջական վիճակից, քվեարկության օրվա դրությամբ չեն կարող դուրս գրված լինել հիվանդանոցից:
- Ընտրողներին, որոնք քվեարկության օրը կալանքի տակ են գտնվում:
- Վրաստանի նախագահին: (32.1)

188. Ո՞վ պետք է ապահովի այն ընտրողների ցուցակի կազմումը, որոնք քվեարկության օրը գտնվում են այլ պետությունում և որոնք գտնվում են Վրաստանի հյուպատոսական հաշվառման:

- Այս անձանց ցուցակը կազմում է Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը: (32.1.ե)
- Այս անձանց ցուցակը կազմում է Վրաստանի արդարադատության նախարարությունը:
- Այս անձանց ցուցակը կազմում է համապատասխան հյուպատոսական հիմնարկի ղեկավարը:
- Այս անձանց ցուցակը կազմում է ԿԸՀ-ն:

189. Ո՞վ է պատասխանատու ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված այն ընտրողների տվյալների ճշգրտության համար, որոնք առողջական վիճակի պատճառով բուժման համար պառկած են հիվանդանոցում և մինչև քվեարկության օրը չեն կարող դուրս գրված լինել այս հիմնարկից:

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան բուժօգնականի ղեկավարը: (32.1.բ, 32.2)

190. Ո՞վ է պատասխանատու ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված Վրաստանի պաշտպանության նախարարության, Վրաստանի ներքին գործերի նախարարության, Վրաստանի արդարադատության նախարարության համակարգում ընդգրկված պետական ենթագերատեսչային հիմնարկի՝ Հատուկ քրեակատարողական ծառայության, Վրաստանի պետական անվտանգության ծառայության, Վրաստանի հետախուզական ծառայության և Պետական պաշտպանության հատուկ ծառայության զինծառայողների տվյալների ճշգրտության համար:

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան զինվորական ստորաբաժանումների/գորամասերի հրամանատարները: (32.1.դ, 32.2)

191. Ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկում են.

- Ընտրական վարչակազմի պաշտոնյաներին: (32.1)
- Տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաներին:
- Դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձանց:
- Ներքին տեղահանված անձանց:

192. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակները հաստատում է կարգադրությամբ և հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակները անհապաղ փոխանցում տեղամասային ընտրական հանձնաժողովին, իսկ քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ փոխանցում է ընտրական հանձնաժողովի համար նախատեսված տարբերակները: (32.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակները հաստատում է կարգադրությամբ և հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակները անհապաղ փոխանցում տեղամասային ընտրական հանձնաժողովին, իսկ քվեարկությունից ոչ ուշ, քան 24 ժամ առաջ փոխանցում է ընտրական հանձնաժողովի համար նախատեսված տարբերակները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակները հաստատում է կարգադրությամբ և հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակները անհապաղ փոխանցում տեղամասային ընտրական հանձնաժողովին, իսկ

քվեարկությունից ոչ ուշ, քան 72 ժամ առաջ փոխանցում է ընտրական հանձնաժողովի համար նախատեսված տարբերակները:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցակները հաստատում է կարգադրությամբ և հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակները և ընտրական հանձնաժողովի համար նախատեսված տարբերակները անհապաղ փոխանցում տեղամասային ընտրական հանձնաժողովին:

193. Քրեակատարողական հիմնարկի ղեկավարն ո՞ւմ է փոխանցում քվեարկության օրը կալանքի տակ գտնվող անձանց ցուցակը:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովին:
- ԿԸՀ-ին և տեղամասային ընտրական հանձնաժողովին:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (32,1 գ)

194. Ո՞վ է հաստատում հատուկ ցուցակները:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարգադրությամբ: (32.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշումով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը կարգադրությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշումով:

195. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրողների հատուկ ցուցակում ընտրողին ընդգրկելու դեպքում ընտրական տեղամասի ընտրողների միասնական ցուցակում կատարվում է համապատասխան նշում և հաստատվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով: (32.4)
- Ընտրողների հատուկ ցուցակում ընտրողին ընդգրկելու դեպքում ընտրական տեղամասի ընտրողների միասնական ցուցակում կատարվում է համապատասխան նշում և հաստատվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:
- Ընտրողների հատուկ ցուցակում ընտրողին ընդգրկելու դեպքում ընտրական տեղամասի ընտրողների միասնական ցուցակում կատարվում է համապատասխան նշում և հաստատվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի ստորագրություններով:
- Ընտրողների հատուկ ցուցակում ընտրողին ընդգրկելու դեպքում ընտրական տեղամասի ընտրողների միասնական ցուցակում կատարվում է համապատասխան նշում և հաստատվում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի ստորագրությամբ:

196. Ո՞վ է սահմանում ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկվելիք այն ընտրողների ցուցակը, ովքեր բուժում են ստանում հիվանդանոցում կամ այլ ստացիոնար բուժհաստատությունում և, ելնելով իրենց առողջական վիճակից, քվեարկության օրվա դրությամբ չեն կարողանա դուրս գրված լինել այս հաստատությունից:

- Վրաստանի բռնագավթված տարածքներից ներքին տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության և սոցալապահովման նախարարությունը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Համապատասխան բուժհաստատության ղեկավարը: (32.1.բ)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

197. Ո՞վ է պատասխանատու ընտրողների հատուկ ցուցակում ընդգրկված տվյալների ճշգրտության համար:

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան հիմնարկի ղեկավարը, ով ցուցակը փոխանցել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (32.2)
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

198. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններում Վրաստանի պաշտպանության նախարարության զինծառայողը, որը քվեարկության օրը տեղակայված է համապատասխան տեղաբաշխման վայրում, ընտրությունների օրվա դրությամբ մշտական կարգով, ընտրությունների օրվանից առաջ առնվազն 6 ամսով և ընտրությունների օրվանից հետո առնվազն 6 ամսով և ավելի ժամկետով.

- Չի մասնակցում սակրեբուլոյի ոչ մեծամասնական, ոչ համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին:
- Չի մասնակցում սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին:
- Մասնակցում է սակրեբուլոյի միայն համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններին:
- Մասնակցում է սակրեբուլոյի ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին: (հոդված 32.6ա)

Շարժական քվեատուփի ցուցակը (հոդված 33)

199. Թվարկվածներից ո՞ր դեպքում են ընտրողին ընդգրկում շարժական քվեատուփի ցուցակում:

- Եթե ընտրողը ներքին տեղահանված անձ է:
- Եթե ընտրողը ծառայում է Վրաստանի պետական սահմանին տեղակայված զորամասում կամ ընտրատեղամասից հեռու տեղակայված սահմանային ոստիկանության ստորաբաժանումում: (33.1)
- Եթե ընտրողը Վրաստանի ընտրական վարչակազմի պաշտոնյա է:
- Եթե ընտրողը տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնյա է:

200. Ո՞ր պնդումն է ճիշտ: Այն ընտրողների թիվը, որոնք առողջական պատճառներով չեն կարող քվեարկության շենք գնալ, չպետք է գերազանցի ընտրական տեղամասում ընտրողների միասնական ցուցակում առկա ընտրողների 3 տոկոսը: Նշված քանակը լրացնելուց հետո

ընտրողներին շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկելու նպատակահարմարության մասին որոշում է կայացում.

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (33.4)
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

201. Որտե՞ղ է նշվում ընտրողի տեղափոխումը շարժական քվեատուփի ցուցակ, և այն ո՞ւմ կողմից պետք է հաստատվի:

- Ընտրողների միասնական ցուցակում, որը հաստատվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի ստորագրություններով:
- Ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում, ինչը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով: (33.2. բ)
- Ընտրողների հատուկ ցուցակում, ինչը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ստորագրություններով.
- Ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում, ինչը հաստատվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի ստորագրություններով:

202. Շարժական քվեատուփի ցուցակում ընտրողը չի ընդգրկվում, եթե.

- Գտնվում է կալանքի տակ:
- Բուժում է անցնում հիվանդանոցում կամ այլ ստացիոնար բուժօգնականությունում և այնտեղ բացվում է ընտրատեղամաս: (33.1.գ)
- Առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ ընտրատեղամաս:
- Ծառայում է Վրաստանի պետական սահմանին տեղակայված զորամասում կամ ընտրատեղամասից հեռու տեղակայված սահմանային ոստիկանության զորամասում:

203. Ի՞նչ պետք է անի ընտրողը, եթե քվեարկության օրը չի կարող գնալ քվեարկության շենք:

- Պետք է դիմի ԿԸՀ-ին մինչև քվեարկության օրվա նախորդ օրը ժամը 18-ը՝ շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջով:
- Պետք է դիմի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության օրվանից առնվազն 2 օր առաջ՝ շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջով:
- Պետք է դիմի տեղամասային ընտրական հանձնաժողով շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջով՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 11 օր առաջ: (33.2)
- Պետք է դիմի տեղամասային ընտրական հանձնաժողով մինչև քվեարկության օրվան նախորդող օրվա ժամը 18-ը՝ շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու պահանջով:

204. Շարժական քվեատուփի ցուցակը կազմվում է ընտրողների միասնական և հատուկ ցուցակների հիման վրա, եթե.

- Ընտրողը գտնվում է արտերկրում:

- Ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է:
- Ընտրողը գտնվում է կալանքի տակ: (33.1.բ)
- Ընտրողը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ է:

Ընտրողների ցուցակների հրապարակումը (հոդված 34).

205. Ի՞նչ պետք է նշվի ընտրացուցակի «Փաստացի վիճակ» սյունակում այն ընտրողի ազգանվան երկայնքով, որը գտնվում է այլ պետությունում, սակայն Վրաստանի հյուպատոսական հաշվառման մեջ չէ:

- «Հյուպատոսական հաշվառման մեջ է»:
- «Գտնվում է արտերկրում»: (34.2. բ)
- «Գրանցված է արտասահմանում»:
- Պետք չէ որևէ բան նշել:

206. Ո՞ւմ է նշանակվում պատասխանատվություն այն դեպքում, երբ ընտրացուցակները և դրանց հետ կապված բողոքներ ներկայացնելու օրենքով սահմանված կարգը փակցված չեն տեղամասային ընտրական հանձնաժողովում և քվեարկության շենքում, սույն օրենքով սահմանված կարգով նրան փոխանցելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատակցին, որը խախտել է Ընտրական օրենսգրքի վերը նշված պահանջը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: (34.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ԿԸՀ-ին:

207. Ո՞ւմ է նշանակվում պատասխանատվություն այն դեպքում, երբ ընտրացուցակները և դրանց հետ կապված բողոքներ ներկայացնելու օրենքով սահմանված կարգը փակցված չեն տեղամասային ընտրական հանձնաժողովի և քվեարկության շենքում:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: (31.11, 34.1)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ԿԸՀ-ին:

Ընտրողի թերթիկ (հոդված 35)

208. Թվարկվածներից ո՞ր տվյալը նշված չէ ընտրողի թերթիկում:

- Քվեարկության շենքի հասցեն և հարկը:
- Ընտրական տեղամասի համարը:
- Ընտրողի համարը ընտրացուցակում:
- Փաստացի բնակության վայրը: (35.1)

209. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասի տարածքում գրանցված և ընտրացուցակներում ընդգրկված բոլոր ընտրողներին քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ փոխանցում է ընտրողի թերթիկ: (35.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասի տարածքում գրանցված և ընտրացուցակներում ընդգրկված բոլոր ընտրողներին քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 1 օր առաջ փոխանցում է ընտրողի թերթիկ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասի տարածքում գրանցված և ընտրացուցակներում ընդգրկված բոլոր ընտրողներին քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ փոխանցում է ընտրողի թերթիկ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասի տարածքում գրանցված և ընտրացուցակներում ընդգրկված բոլոր ընտրողներին քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 ժամ առաջ փոխանցում է ընտրողի թերթիկ:

210. Արդյոք ընտրությանը մասնակցելու համար պարտադիր է ընտրողի թերթիկի առկայությունը:

- Պարտադիր է, քանի որ ընտրողի թերթիկ չստանալը քվեարկությանը մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմք է:
- Պարտադիր չէ, քանի որ թերթիկ չստանալը քվեարկությանը մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմք չէ: (35.2)
- Պարտադիր է միայն արտերկրում բնակվող Վրաստանի քաղաքացիների համար:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Ընտրական սուբյեկտների գրանցումը (հոդված 36).

211. Ընտրություններին մասնակցելու իրավունք ստանալու համար ո՞վ է գրանցում ընտրական սուբյեկտին:

- Համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահը: (36.1)
- Արդարադատության նախարարությունը:
- Դատարանը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

212. Ընտրական սուբյեկտները գրանցման նպատակով ի՞նչ ձևով պետք է դիմեն համապատասխան ընտրական հանձնաժողով:

- Խնդրանքով:
- Դիմումով: (36.2)
- Հայցադիմումով:
- Միջնորդությամբ:

213. Ո՞վ և ի՞նչ ժամկետում պետք է տեղեկացնի ընտրական սուբյեկտի ներկայացուցչին ընտրական գրանցումը մերժելու մասին:

- Գրանցումը մերժելու մասին որոշումը ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից ընտրական սուբյեկտի ներկայացուցչին պետք է անհապաղ տեղեկացվի: (36.3)

- Գրանցումը մերժելու մասին որոշումն ընտրական հանձնաժողովի կողմից պետք է տեղեկացվի ընտրական սուբյեկտի ներկայացուցչին որոշումն ընդունելուց ոչ ուշ, քան 3 օր հետո:
- Գրանցումը մերժելու մասին որոշումն ընտրական հանձնաժողովը պետք է տեղեկացնի ընտրական սուբյեկտի ներկայացուցչին որոշումն ընդունելուց ոչ ուշ, քան 2 օր հետո:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

214. Ո՞ր ժամկետում ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն ունի իրավունք ստանալու ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը գրանցումը մերժելու մասին:

- Պահանջը ներկայացնելուց ոչ շուտ, քան 24 ժամ հետո:
- Պահանջը ներկայացնելուց ոչ ուշ, քան 3 օր հետո:
- Պահանջելուն պես: (36.3)
- Ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 5 օրում:

215. Ընտրական սուբյեկտների գրանցումը մերժելու դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահն ո՞ւմ պետք է անհապաղ տեղեկացնի իր որոշումը:

- Խորհրդարանին:
- Նախագահին:
- Ոչ մեկին:
- Կուսակցության/ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցչին: (36.3)

Ընտրողների նախաձեռնող խումբը (հոդված 36¹)

216. Ո՞վ կարող է լինել նախաձեռնող խմբի անդամ:

- Վրաստանի ցանկացած քաղաքացի:
- Վրաստանի քաղաքացին 16 տարեկանից:
- Վրաստանի քաղաքացին 18 տարեկանից: (36¹. 2)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Աջակիցների ցուցակները (հոդված 37)

217. Ո՞վ է սահմանում աջակիցների ցուցակի ձևանմուշը և ի՞նչ իրավական ակտով:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սահմանում է որոշումով:
- ԿԸՀ-ն այն սահմանում է կարգադրությամբ: (37.2)
- ԿԸՀ նախագահը սահմանում է հրամանագրով:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը սահմանում է որոշումով:

218. Ընտրական սուբյեկտի ընտրություններին մասնակցելու նախաձեռնությունը աջակիցների ցուցակի ձևանմուշի վրա ո՞ւմ ստորագրությամբ պետք է լինի հաստատված:

- Ընտրողների ստորագրություններով: (37.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ստորագրություններով:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

- Բարձրագույն ընտրական հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

Աջակիցների ցուցակների ստուգումը (հոդված 38)

219. Ի՞նչ ժամկետում պետք է ավարտվի կուսակցության աջակիցների ցուցակի ստուգումը:

- Այն ներկայացնելուց հետո 10 օրվա ընթացքում: (38.5)
- Այն ներկայացնելուց հետո 14 օրվա ընթացքում:
- Այն ներկայացնելուց հետո 15 օրվա ընթացքում:
- Այն ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում:

220. Ի՞նչ ժամկետում պետք է ավարտվի թեկնածուի աջակիցների ցուցակի ստուգումը:

- Ցուցակը ներկայացնելու օրվանից 20-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան ցուցակը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 8 օր առաջ:
- Ցուցակը ներկայացնելու օրվանից 10-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան ցուցակը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 5 օր առաջ:
- Այն ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում: (38.5)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

221. Ո՞ր դեպքերում անվավեր կհամարվի աջակիցների ցուցակում ընտրողի ստորագրությունը:

- Բոլոր պատասխանները ճիշտ են: (38.3)
- Այն դեպքում, եթե նշված չէ կամ թերի է նշված ընտրողի անունը և ազգանունը:
- Այն դեպքում, եթե նշված չէ կամ թերի է նշված ընտրողի ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Այն դեպքում, եթե թերի կամ ոչ ճիշտ է նշված Վրաստանի քաղաքացու անձնական համարը:

222. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Աջակիցների ցուցակներին ծանոթանալու իրավունք ունեն միայն ԿԸՀ անդամները, համապատասխան ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և ԿԸՀ համապատասխան ծառայության աշխատակիցները, իսկ դատարան հայց ներկայացնելու դեպքում՝ նաև դատարանը:
- Աջակիցների ցուցակներին ծանոթանալու իրավունք ունեն միայն նախագահը, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները և ԿԸՀ համապատասխան ծառայության աշխատակիցները, իսկ դատարան հայց ներկայացնելու դեպքում՝ նաև դատարանը:
- Աջակիցների ցուցակներին ծանոթանալու իրավունք ունեն միայն ԿԸՀ անդամները և ԿԸՀ համապատասխան ծառայության աշխատակիցները, իսկ դատարան հայց ներկայացնելու դեպքում՝ նաև դատարանը:
- Աջակիցների ցուցակներին ծանոթանալու իրավունք ունեն միայն ԿԸՀ անդամները, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամները և ԿԸՀ համապատասխան ծառայության աշխատակիցները, իսկ դատարան հայց ներկայացնելու դեպքում՝ նաև դատարանը: (38.7)

223. Աջակիցների ցուցակի ստուգման գործընթացին ներկա գտնվելու իրավունք ունեն.

- Քննիչը:
- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը: (38.6)
- Ընտրական օբյեկտի ներկայացուցիչը:
- Արդարադատության բարձրագույն խորհրդի անդամը:

224. Ո՞ր ընտրական սուբյեկտի աջակիցների ցուցակներն է ստուգում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

- Սակրեբուլյի անդամության թեկնածուի:
- Ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի թեկնածուի:
- Կուսակցության: (38.1)
- Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուի:

225. Ո՞վ է ստուգում ընտրողների նախաձեռնող խմբի կողմից մեծամասնական ընտրատարածքում առաջադրված սակրեբուլյի անդամության թեկնածուի աջակիցների ցուցակները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (38.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- ԿԸՀ-ն:

226. Ո՞վ է ստուգում ընտրողների նախաձեռնող խմբի կողմից առաջադրված քաղաք Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուի աջակիցների ցուցակները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի արդարադատության նախարարությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: (38.1)

227. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ ընտրական հանձնաժողովի կողմից սուբյեկտին օրենքով սահմանված կարգով աջակիցների ցուցակի անվավեր ճանաչված մասը վերադարձնելուց հետո, սահմանված ժամկետում ընտրական սուբյեկտը աջակիցների ցուցակները կրկին անճշտությամբ է ներկայացնում:

- Նրան տրվում է 5-օրյա ժամկետ՝ բացերը լրացնելու համար:
- Նրան տրվում է 3-օրյա ժամկետ՝ բացերը լրացնելու համար:
- Նրան տրվում է 2-օրյա ժամկետ՝ բացերը լրացնելու համար:
- Աջակիցների ցուցակն ամբողջությամբ չեղարկվում է, և ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ մերժվում է ընտրական սուբյեկտի ընտրական գրանցումը: (38.2)

228. Ո՞ր ժամկետում են ոչնչացվում աջակիցների ցուցակները:

- Աջակիցների ցուցակները ոչնչացվում են ընտրական գրանցման պատճառով դատարան հայց ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո 3 օրում:

- Աջակիցների ցուցակները ոչնչացվում են ընտրական գրանցման պատճառով դատարան հայց ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո 10 օրում: (38.7)
- Աջակիցների ցուցակները ոչնչացվում են ընտրական գրանցման պատճառով դատարան հայց ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո 5 օրում:
- Աջակիցների ցուցակները ոչնչացվում են ընտրական գրանցման պատճառով դատարան հայց ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո 7 օրում:

Ընտրական սուբյեկտի հերթական համարը որոշելը (հոդված 38¹)

229. Խորհրդարանական ընտրություններից քանի՞ օր առաջ պետք է որոշվի ընտրական սուբյեկտի հերթական համարը:

- Ընտրողների նախաձեռնող խմբերի համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ, իսկ կուսակցությունների համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 55 օր առաջ: (38¹.1)
- Ընտրողների նախաձեռնող խմբերի համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ, իսկ կուսակցությունների համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ:
- Ընտրողների նախաձեռնող խմբերի համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ, իսկ կուսակցությունների համար՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

230. Գրանցված կուսակցական ցուցակներն իր պաշտոնական կայքում հրապարակում է.

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (38¹.11)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Տեղական և միջազգային դիտորդները (հոդված 39)

231. Տեղական դիտորդական կազմակերպության տեղական դիտորդ կարող է լինել.

- Վրաստանի քաղաքացին 16 տարեկանից:
- Վրաստանի քաղաքացին 18 տարեկանից: (39.4)
- Օտար երկրի քաղաքացին 16 տարեկանից:
- Օտար երկրի քաղաքացին 18 տարեկանից:

232. Նույն տեղական դիտորդական կազմակերպությունն իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ ոչ ավելի, քան.

- Մեկ դիտորդ: (39.3)
- Երկու դիտորդ:
- Չորս դիտորդ:
- Հինգ դիտորդ:

233. Ո՞վ չի կարող լինել տեղական դիտորդական կազմակերպության տեղական դիտորդ:

- Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամը:
- Դատավորը:
- Դատախազության պաշտոնատար անձը:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (39.4)

234. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրությունները դիտարկելու իրավունք ունեն տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունները, որոնք բավարարում են «Վրաստանի Ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված պայմանները և կգրանցվեն ԿԸՀ-ում կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում: (39.1)
- Ընտրությունները դիտարկելու իրավունք ունեն տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունները, որոնք բավարարում են «Վրաստանի Ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված պայմանները և կգրանցվեն ԿԸՀ-ում կամ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովում:
- Ընտրությունները դիտարկելու իրավունք ունեն տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունները, որոնք բավարարում են «Վրաստանի Ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքով սահմանված պայմանները և կգրանցվեն համապատասխան ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովում:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

235. Որտե՞ղ պետք է գրանցվի ընտրություններին միջազգային դիտորդական կազմակերպության ներկայացուցչի թարգմանիչը:

- ԿԸՀ-ում: (39. 7)
- Հյուպատոսությունում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Գրանցում անհրաժեշտ չէ:

236. Քանի՞ միջազգային դիտորդի միջոցով է միջազգային կազմակերպությունն իրականացնում դիտորդություն մեկ ընտրական տեղամասում:

- Ոչ ավելի, քան երեք միջազգային դիտորդների միջոցով:
- Ոչ ավելի, քան հինգ միջազգային դիտորդների միջոցով:
- Ոչ ավելի, քան տասը միջազգային դիտորդների միջոցով:
- Ոչ ավելի, քան երկու միջազգային դիտորդների միջոցով: (39.6)

Դիտորդական կազմակերպությունների գրանցումը (հոդված 40)

237. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցված տեղական դիտորդական կազմակերպությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում նշանակված դիտորդների ցուցակը պետք է ներկայացնի.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարին:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարին: (40.7)

238. Ո՞վ պետք է գրանցված դիտորդական կազմակերպությանը տրամադրի դիտորդի վկայականներ (կրծքանշաններ):

- Ընտրական հանձնաժողովի գրասենյակը:
- Ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (40.9)
- Ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը.

239. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Միջազգային դիտորդական կազմակերպությունը ընտրությունները դիտարկելու նպատակով գրանցվում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Միջազգային դիտորդական կազմակերպությունը ընտրությունները դիտարկելու նպատակով գրանցվում է Արտաքին գործերի նախարարությունում:
- Միջազգային դիտորդական կազմակերպությունը ընտրությունները դիտարկելու նպատակով գրանցվում է ԿԸՀ-ում: (40.1)
- Միջազգային դիտորդական կազմակերպությունը ընտրությունները դիտարկելու նպատակով գրանցվում է Արդարադատության նախարարությունում:

240. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- ԿԸՀ-ում գրանցված տեղական դիտորդն իրավունք ունի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի Օրգանական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ դիտորդություն իրականացնել միայն ԿԸՀ-ում:
- ԿԸՀ-ում գրանցված տեղական դիտորդն իրավունք ունի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի Օրգանական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ դիտորդություն իրականացնել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- ԿԸՀ-ում գրանցված տեղական դիտորդն իրավունք ունի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի Օրգանական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ դիտորդություն իրականացնել համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովում:
- ԿԸՀ-ում գրանցված տեղական դիտորդն իրավունք ունի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի Օրգանական օրենքով սահմանված կարգի պահպանմամբ դիտորդություն իրականացնել բոլոր մակարդակների ցանկացած ընտրական հանձնաժողովում: (40.8)

241. Ո՞վ է գրանցում այն տեղական դիտորդական կազմակերպությունը, որը դիտորդություն է իրականացնում 1 ընտրատարածքում:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (40. 2)

- ԿԸՀ-ն:
- ԲԸՀ-ն:

242. Դիտորդների գրանցման նպատակով տեղական դիտորդական կազմակերպության կողմից համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացված դիտորդների ցուցակում ներառվում են դիտորդի.

- Ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Կրթությունը:
- Սոցիալական դրությունը:
- Ազգանունը, անունը, գրանցման վայրը և Վրաստանի քաղաքացու անձնական համարը: (40.7)

243. Ինչպիսի՞ն է դիտորդական կազմակերպության գրանցումը մերժելու մասին ընտրական հանձնաժողովի կարգադրությունը բողոքարկելու կարգը:

- Ընտրական հանձնաժողովի կարգադրությունը այն ընդունելուց հետո, 2 օրվա ժամկետում կարող է բողոքարկվել դատարան: (40.5)
- Ընտրական հանձնաժողովի կարգադրությունը դիտորդական կազմակերպության գրանցումը մերժելու մասին չի բողոքարկվում:
- Ընտրական հանձնաժողովի կարգադրությունը այն ընդունելուց հետո 3 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:
- Ընտրական հանձնաժողովն իրավունք չունի մերժելու դիտորդական կազմակերպության գրանցումը:

244. Ինչպիսի՞ իրավական ակտով է որոշում կայացնում ընտրական հանձնաժողովը դիտորդական կազմակերպության գրանցումը մերժելու մասին:

- Հրամանով:
- Հրամանագրով:
- Որոշումով:
- Կարգադրությամբ: (40.5)

Դիտորդի իրավունքները (հոդված 41)

245. Ինչի՞ իրավունք չունի դիտորդը:

- Ազդել ընտրողների ազատ կամարտահայտության վրա:
- Քարոզչություն իրականացնել ընտրողների համար որևէ ընտրական սուբյեկտի օգտին:
- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանիշը և նշանը:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (41.2)

246. Ստորև թվարկվածներից ինչի՞ իրավունք չունի դիտորդը:

- Ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին և դիտարկել դրանք:
- Մասնակցել քվեատուփերի զննությանը նախքան դրանց կապարակնքելը և դրանք բացելուց հետո:

- Միջամտել ընտրական հանձնաժողովի գործառնություններին և գործունեությանը: (41.2.ա)
- Ընտրողից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ և հատուկ ծրար ունի իր ձեռքում:

247. Ստորև թվարկվածներից ինչի՞ իրավունք չունի դիտորդը:

- Ընտրողից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ և հատուկ ծրար ունի իր ձեռքում:
- Քվեարկության օրը քվեարկության շենքում ներկա գտնվել առանց կրծքանշանի: (41.2.ե)
- Բողոքարկել ընտրական հանձնաժողովի գործողությունները Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ծանոթանալ ընտրական հանձնաժողովների կողմից կազմված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններին և համապատասխան ընտրական հանձնաժողովից պահանջել և ստանալ այդ արձանագրությունների պատճենները:

248. Ստորև թվարկվածներից ինչի՞ իրավունք ունի դիտորդը:

- Ընտրողից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ և հատուկ ծրար ունի իր ձեռքում: (41.1.ժա)
- Ազդել ընտրողների ազատ կամարտահայտության վրա:
- Քարոզչություն իրականացնել ընտրողների համար որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ նրա դեմ:
- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանիշը և նշանը:

249. Դիտորդն իրավունք չունի.

- Քվեարկության օրվա ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացրած կազմակերպության մեկ այլ գրանցված ներկայացուցչի (այսպիսինի առկայության դեպքում):
- Մասնակցել քվեատուփերի զննությանը մինչև դրանց կապարակնքվելը և բացվելուց հետո:
- Դիտարկել ընտրողների ձայների հաշվելն այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են քվեաթերթիկի տեսանելիություն:
- Քարոզչություն իրականացնել ընտրողների համար որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ նրա դեմ: (41.2 գ)

250. Թվարկվածներից ինչի՞ իրավունք ունի դիտորդը.

- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանիշ:
- Քվեարկության օրը ներկա գտնվել քվեարկության շենքում առանց կրծքանշանի:
- Քվեարկության օրը ցանկացած ժամանակ փոխարինել իրեն առաջադրած կազմակերպության գրանցված ներկայացուցչին: (41.1. գ)
- Ընտրողին կոչ անել աջակցել որևէ ընտրական սուբյեկտի:

251. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Մունիցիպալիտետի մարմիններ ընտրելիս՝ ընտրողների նախաձեռնող խումբն իրավունք ունի նշանակել միայն մեկական ներկայացուցիչ համապատասխան ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում:

- Մունիցիպալիտետի մարմիններ ընտրելիս՝ ընտրողների նախաձեռնող խումբն իրավունք ունի նշանակել միայն չորսական ներկայացուցիչ համապատասխան ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում:
- Մունիցիպալիտետի մարմիններ ընտրելիս՝ ընտրողների նախաձեռնող խումբն իրավունք ունի նշանակել միայն երեքական ներկայացուցիչ համապատասխան ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում:
- Մունիցիպալիտետի մարմիններ ընտրելիս՝ ընտրողների նախաձեռնող խումբն իրավունք ունի նշանակել միայն երկուական ներկայացուցիչ համապատասխան ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում: (42.2)

252. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրական սուբյեկտի ոչ մի ներկայացուցիչ իրավունք չունի ներկա գտնվել համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստերին, պահանջել ելույթ ունենալ և կարծիք արտահայտել, որոշում կայացնել այս կամ այն հարցի վերաբերյալ:
- Ընտրական սուբյեկտի միայն 2 ներկայացուցիչ իրավունք ունի ներկա գտնվել համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստերին, պահանջել ելույթ ունենալ և կարծիք արտահայտել, որոշում կայացնել այս կամ այն հարցի վերաբերյալ:
- Ընտրական սուբյեկտի միայն 1 ներկայացուցիչ իրավունք ունի ներկա գտնվել համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստերին, պահանջել ելույթ ունենալ և կարծիք արտահայտել, որոշում կայացնել այս կամ այն հարցի վերաբերյալ: (42.5)
- Ընտրական սուբյեկտի բոլոր ներկայացուցիչներն իրավունք ունի ներկա գտնվել համապատասխան ընտրական հանձնաժողովի նիստերին, պահանջել ելույթ ունենալ և կարծիք արտահայտել, որոշում կայացնել այս կամ այն հարցի վերաբերյալ:

253. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ կարող է նշանակվել ցանկացած անձ, օրենքով որևէ սահմանափակում սահմանված չէ:
- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ չի կարող նշանակվել այն անձը, որն ընտրությունների նշանակման պահից ընտրական սուբյեկտ կամ ընտրական սուբյեկտի թեկնածու էր/է: (42.22.ա)
- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ կարող է նշանակվել Վրաստանի անգործունակ քաղաքացին 18 տարեկան հասակից:
- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ կարող է նշանակվել Վրաստանի գործունակ քաղաքացին 16 տարեկան հասակից:

254. Ընտրական սուբյեկտը ԿԸՀ-ում ներկայացուցիչ նշանակելու համար դիմում է ներկայացնում.

- ԿԸՀ քարտուղարին:
- Վրաստանի խորհրդարանին:
- Միջազգային դիտորդներին:
- ԿԸՀ նախագահին: (42.3)

255. Համապատասխան տեղեկատվության ամբողջական ներկայացման դեպքում n° վ և h° նշ ժամկետում է գրանցում ԿԸՀ-ում ընտրական սուբյեկտի ներկայացուցչին:

- ԿԸՀ քարտուղարը՝ 24 ժամվա ընթացքում:
- ԿԸՀ նախագահը՝ 24 ժամվա ընթացքում: (42.3)
- ԿԸՀ քարտուղարն անհապաղ:
- ԿԸՀ նախագահն անհապաղ:

256. Ստորև թվարկվածերից n° ըն է ստորագրում քաղաքական կուսակցության ներկայացուցչի նշանակման մասին դիմումը:

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Քաղաքական կուսակցության ղեկավար անձը: (42.4)
- Համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահը:

257. Ընտրական սուբյեկտը տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկայացուցիչ նշանակելու մասին դիմումով պետք է դիմի.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարին: (42.3¹)

258. Քանի՞ ներկայացուցիչ նշանակելու իրավունք ունի ընտրություններին անկախ մասնակցող կուսակցությունը ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովում:

- Ընդամենը երկու: (42.2)
- Ընդամենը երեք:
- Ընդամենը մեկ:
- Ընդամենը հինգ:

259. Ընտրական սուբյեկտը ե՞րբ իրավունք ունի հետ կանչել և (կամ) փոխարինել իր ներկայացուցչին.

- Ընտրություններից ոչ ուշ, քան 7 օր առաջ:
- Ընտրություններից ոչ ուշ, քան 5 օր առաջ:
- Ընտրություններից ոչ ուշ, քան 3 օր առաջ:
- Ցանկացած ժամանակ, բացառությամբ քվեարկության օրվա նախորդ օրվա և քվեարկության օրվա: (42.6)

Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները (հոդված 44)

260. Հետևյալներից n° մ լիազորության մեջ է մտնում մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման հարցի վերաբերյալ որոշում կայացնելը:

- ԿԸՀ նախագահի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի:
- Համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի:

- Համապատասխան ընտրական հանձնաժողովի քարտուղարի: (44.2)

261. Մինչև քվեարկության օրը ի՞նչ ժամկետում պետք է համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացվի մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման մասին դիմումը:

- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ:
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ:
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ: (44.3)
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 6 օր առաջ:

262. Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների միևնույն կազմակերպությունը քվեարկության օրը քանի՞ ներկայացուցիչ կարող է ունենալ ընտրատեղամասում:

- Չորսից ոչ ավելի:
- Երկուսից ոչ ավելի: (44.5)
- Երեքից ոչ ավելի:
- Մեկից ոչ ավելի:

263. Մի քանի ընտրատարածքների տարածքում աշխատող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրումն իրականացնում են.

- ԿԸՀ նախագահը կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները:
- ԿԸՀ նախագահը և քարտուղարը:
- ԿԸՀ քարտուղարը կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների քարտուղարները: (44.2)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները և քարտուղարները:

264. Համապատասխան ընտրական հանձնաժողովի քարտուղարը մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրումը մերժելու դեպքում հրապարակում է.

- Որոշում:
- Կարգադրություն: (44.4)
- Հրաման:
- Բանաձև:

Նախընտրական քարոզարշավ (քարոզչություն) (հոդված 45)

265. Ստորև թվարկվածներից ո՞ր հիմնարկում չի արգելված նախընտրական քարոզչության իրականացումը:

- Վրաստանի խորհրդարանում: (45.5)
- Դատարանում:
- Վրաստանի գործադիր իշխանության հիմնարկներում:
- Զորամասում:

266. Նախընտրական քարոզչությանը մասնակցելու իրավունք ունի.

- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը: (45.4)
- Բարեգործական կազմակերպությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Դատավորը:

267. Նախընտրական քարոզարշավը (քարոզչությունը) արգելվում է հետևյալ հիմնարկի շենքում.

- Թատրոնի:
- Վրաստանի արդարադատության նախարարության: (45.5)
- Ազատ համալսարանի:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

268. Ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի:
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, բացառությամբ Վրաստանի հանրային պաշտպանի:
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, այդ թվում, օտար երկրի քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը: (45.4.գ)
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու և քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, բացառությամբ Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի անդամների:

269. Ո՞ր պնդումն է ճիշտ.

- Նախընտրական քարոզչություն իրականացնելու կամ քարոզարշավին մասնակցելու իրավունք չունի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը: (45.4.ա)
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու կամ քարոզարշավին մասնակցելու իրավունք ունեն կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները:
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու կամ քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Նախընտրական քարոզչություն իրականացնելու կամ քարոզարշավին մասնակցելու իրավունք ունի տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

270. Ո՞վ է սահմանում ընտրական սուբյեկտների ընտրական միջոցառումների անցկացման ժամանակացույցը մունիցիպալիտետի մարմինների կողմից նախընտրական քարոզչության նպատակով հատկացված շենք-շինություններում:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (45.9)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- ԿԸՀ-ն:
- Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները:

271. Երբվանի՞ց է սկսվում նախընտրական քարոզարշավը (քարոզչությունը):

- Ընտրությունների օրվանից 60 օր առաջ: (45.1)
- Ընտրությունները նշանակելու օրվանից 1 օր առաջ:
- Քվեարկության օրվանից 30 օր առաջ:
- Քվեարկության օրվանից 45 օր առաջ:

272. Քվեարկության շենքի մուտքից որքա՞ն հեռավորության վրա է թույլատրվում տեղադրել քարոզչական նյութեր:

- Քվեարկության շենքի մուտքից 30 մետր հեռավորության վրա:
- Քվեարկության շենքի մուտքից 25 մետր հեռավորության վրա: (45.12)
- Քվեարկության շենքի մուտքից 35 մետր հեռավորության վրա:
- Քվեարկության շենքի մուտքից 40 մետր հեռավորության վրա:

273. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելված չէ:
- Քվեարկության օրը քվեարկության շենքում նախընտրական քարոզչությունն արգելված չէ, այն դեպքում, եթե գործողությունն իրականացնում է կուսակցության կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Քվեարկության օրը քվեարկության շենքում արգելվում է նախընտրական քարոզչությունը: (45.11)
- Քվեարկության օրը քվեարկության շենքում արգելված չէ նախընտրական քարոզչությունն այն դեպքում, եթե գործողությունն իրականացնում է կուսակցության կողմից նշանակված ներկայացուցիչը:

Քարոզչական նյութերը (հոդված 46)

274. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տպագիր քարոզչական նյութերի օրինակները պետք է ներկայացվեն այն ընտրական հանձնաժողովին, որտեղ գրանցվել է ընտրական սուբյեկտը: (46.7)
- Տպագիր քարոզչական նյութերի օրինակները չպետք է ներկայացվեն այն ընտրական հանձնաժողովին, որտեղ գրանցվել է ընտրական սուբյեկտը:
- Տպագիր քարոզչական նյութերի օրինակները պետք է ներկայացվեն ցանկացած ընտրական հանձնաժողովին:
- Տպագիր քարոզչական նյութերի օրինակները պետք է ներկայացվեն տեղամասային ընտրական հանձնաժողովին:

275. Ո՞ր պնդումը ճիշտ չէ:

- Արգելվում է նախընտրական պաստառներ փակցնել պաշտամունքային շենքերի վրա:
- Արգելվում է նախընտրական պաստառներ փակցնել դատարանի շենքի վրա:
- Արգելվում է նախընտրական պաստառներ փակցնել շրջանային վարչության շենքի վրա:

- Արգելվում է նախընտրական պաստառներ փակցնել ցանկացած դեպքում մասնավոր սեփականության վրա: (46.2)

276. Ո՞ր մարմինն է պարտավոր տեղադրել ստենդներ և տեղեր հատկացնել ընտրական պաստառներ փակցնելու և ցուցադրելու համար:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Մունիցիպալիտետի մարմինը: (46.4)
- Վրաստանի խորհրդարանը:

277. Ի՞նչ ժամկետում պետք է ընտրական սուբյեկտն ապահովի քարոզչական նյութերի հեռացումը:

- Ընտրություններից ոչ ուշ, քան 5 օր առաջ:
- Ընտրությունների վերջնական արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո 2 ամսվա ժամկետում:
- Ընտրությունների վերջնական արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հետո 15-օրյա ժամկետում: (46.8)
- Ընտրություններից ոչ ուշ, քան 5 օր հետո:

Նախընտրական քարոզարշավի տեղեկատվական ապահովումը (հոդված 51)

278. Ո՞ր սկզբունքը պետք է պահպանի հեռարձակողը՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում հասարակական-քաղաքական հաղորդումներ հեռարձակելիս և ընտրությունները լուսաբանելիս:

- Դիսպոզիտիվության և արդարության:
- Հրապարակայնության և մարդասիրության:
- Թափանցիկության և մրցունակության:
- Անաչառության և արդարության: (51.1)

Ընտրությունների/հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ֆինանսական ապահովումը (հոդված 52)

279. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրությունների/հանրաքվեների նախապատրաստման և անցկացման համար Վրաստանի ընտրական վարչակազմի կողմից կատարվող ծախսերը և նրա գործունեությունը լիազորությունների իրականացման ընթացքում ֆինանսավորվում են ընտրական սուբյեկտների կողմից:
- Ընտրությունների/հանրաքվեների նախապատրաստման և անցկացման համար Վրաստանի ընտրական վարչակազմի կողմից կատարվող ծախսերը և նրա գործունեությունը լիազորությունների իրականացման ընթացքում ֆինանսավորվում են միջազգային կազմակերպությունների կողմից:

- Ընտրությունների/հանրաքվեների նախապատրաստման և անցկացման համար Վրաստանի ընտրական վարչակազմի կողմից կատարվող ծախսերը և նրա գործունեությունը լիազորությունների իրականացման ընթացքում ֆինանսավորվում են Համաշխարհային բանկի կողմից:
- Ընտրությունների/հանրաքվեների նախապատրաստման և անցկացման համար Վրաստանի ընտրական վարչակազմի կողմից կատարվող ծախսերը և նրա գործունեությունը լիազորությունների իրականացման ընթացքում ֆինանսավորվում են Վրաստանի պետական բյուջեից: (52.1)

280. Վրաստանի ընտրական վարչակազմն, ի դեմս ԿԸՀ-ի, իրավունք ունի.

- Ստանալ դրամաշնորհ իրավագոր անձից: (52.5)
- Ստանալ դրամաշնորհ Վրաստանի խորհրդարանի համաձայնությամբ:
- Ստանալ դրամաշնորհ Վրաստանի ֆինանսների նախարարության համաձայնությամբ:
- Ստանալ դրամաշնորհ Պետական աուդիտի ծառայության համաձայնությամբ:

Ընտրությունների/հանրաքվեի համար անհրաժեշտ դրամական միջոցները (հոդված 53)

281. Ընտրական հանձնաժողովների կողմից ընտրությունների համար անհրաժեշտ դրամական միջոցների բաշխման և օգտագործման կարգը սահմանում է.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշումով: (53.3)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարգադրությամբ:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հրամանագրով:
- Վրաստանի խորհրդարանը որոշումով:

282. Ո՞ր իրավական ակտով է սահմանվում ընտրական հանձնաժողովների կողմից ընտրությունների համար անհրաժեշտ դրամական միջոցների բաշխման և օգտագործման կարգը:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումով: (53.3)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ:
- Ֆինանսների նախարարի հրամանով:

Ընտրությունների/հանրաքվեի քարոզարշավի ծախսերը (հոդված 54)

283. Նշվածներից ընտրական սուբյեկտը ո՞ւմ պետք է տեղեկություն ներկայացնի այն բանկային հաշվի մասին, որից կֆինանսավորվեն նախընտրական քարոզչության համար անհրաժեշտ ծախսերը:

- Վրաստանի խորհրդարանին:
- ԿԸՀ-ին:
- Հակակոռուպցիոն բյուրոյին: (54.4)
- Վրաստանի ֆինանսների նախարարությանը:

284. Ի՞նչը կհամարվի ընտրական քարոզչության ծախս:

- Քարոզչության ծախս է համարվում թեկնածուի/թեկնածուների անձնական գույքը:
- Քարոզչության ծախս է համարվում թեկնածուի/թեկնածուների ընտանիքի անդամների գույքը:
- Քարոզչության ծախս է համարվում ընտրական սուբյեկտի նախընտրական քարոզչության համար նախատեսված և համապատասխան բանկային հաշվին փոխանցված միջոցների հանրագումարը: (54.5)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Քվեարկության շենքի կազմակերպումը (հոդված 58)

285. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Յուրաքանչյուր 700 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն մեկ քվեարկության տեղ:
- Յուրաքանչյուր 1000 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն մեկ քվեարկության տեղ:
- Յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն երեք քվեարկության տեղ:
- Յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է նախատեսված լինի մեկ քվեարկության տեղ: (58.4 «ա»)

286. Ի՞նչ պայմանով են պետական իշխանության և մունիցիպալիտետի մարմինները ընտրական հանձնաժողովներին փոխանցում ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ շենք-շինություններն ու գույքը:

- Ընտրական հանձնաժողովներին նման շենք-շինություններն ու գույքը փոխանցվում են ժամանակավորապես և անհատույց: (58. 1)
- Ընտրական հանձնաժողովներին նման շենք-շինություններն ու գույքը փոխանցվում են մշտական և անհատույց:
- Ընտրական հանձնաժողովներին նման շենք-շինություններն ու գույքը փոխանցվում են ժամանակավորապես և վարձակալության պայմանագրով:
- Ընտրական հանձնաժողովներին նման շենք-շինություններն ու գույքը փոխանցվում են ժամանակավորապես և լիզինգով:

287. Ո՞ր դեպքերում կարող է տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղակայվել և քվեարկության վայր տրամադրվել այն շենքում, որտեղ տեղակայված է մունիցիպալիտետի մարմինը՝ սակրեբուլոն:

- Թույլ չի տրվում ցանկացած դեպքում:
- Երկրում հայտարարված պատերազմական դրության ժամանակ:
- Այն դեպքում, երբ ընտրատեղամասի տարածքում չկա այլ, համապատասխան շենք օրենքով սահմանված կարգով քվեարկություն անցկացնելու համար: (58.2.բ)
- Այն դեպքում, երբ սակրոբուլոյի կողմից զբաղեցված շենքում տեղամասային ընտրական հանձնաժողովի տեղակայվելու մասին առկա է Վրաստանի նախագահի հրամանագիր:

288. Ո՞ր դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովը կարող է տեղակայվել և քվեարկության տեղ տրամադրվել այն շենքում, որտեղ տեղակայված է ընտրական սուբյեկտը՝ քաղաքական կուսակցությունը:

- Ոչ մի դեպքում թույլ չի տրվում: (58.2.ա)
- Երկրում հայտարարված պատերազմական դրության ժամանակ:
- Այն դեպքում, երբ ընտրատեղամասի տարածքում չկա այլ, համապատասխան շենք օրենքով սահմանված կարգով քվեարկություն անցկացնելու համար:
- Այն դեպքում, երբ քաղաքական կուսակցության կողմից զբաղեցրած շենքում տեղամասային ընտրական հանձնաժողովի տեղակայման մասին առկա է Վրաստանի նախագահի հրամանագիրը:

289. Հետևյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- Յուրաքանչյուր 300 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն 1 քվեարկելու տեղ: (58.4.ա)
- Յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է նախատեսված լինի առնվազն 1 քվեարկելու տեղ:
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է տեղադրվի թափանցիկ քվեատուփ:
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցվի ԿԸՀ կողմից սահմանված քվեաթերթիկը լրացնելու կարգը:

290. Հետևյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- Եթե քվեաթերթիկում ընդգրկված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, այդ մասին հայտարարությունը պետք է փակցվի տեսանելի տեղում ինչպես ընտրատեղամասում, այնպես էլ գաղտնի քվեարկության խցիկում:
- Քվեարկության թափանցիկությունն ապահովելու համար քվեախցիկում թույլատրվում է լուսանկարել և տեսանկարահանել: (58.6)
- Քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար քվեախցիկում արգելվում է լուսանկարել և տեսանկարահանել:
- Յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է տրամադրվի առնվազն 1 քվեարկության տեղ:

291. Եթե քվեաթերթիկում ընդգրկված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին, հայտարարությունն այդ մասին պետք է փակցվի տեսանելի տեղում:

- Միայն ընտրատեղամասում:
- Միայն քվեախցիկում:
- Քվեարկության շենքում և գաղտնի քվեարկության խցիկներում: (58.5)
- Տեղը որոշում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Քվեարկության օրը քվեարկության շենքում և դրա հարակից տարածքում կարգուկանոնի պահպանումը (հոդված 59)

292. Քվեարկության շենքից ընտրական սուբյեկտի ներկայացուցչին հեռացնելու մասին որոշումը կայացնում է.

- Տեղամասային հանձնաժողովի նախագահը միանձնյա:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը: (59.5)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

293. Ո՞ւմ համար է կատարման համար պարտադիր տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կայացված որոշումը՝ կապված քվեարկության շենքում կարգուկանոնի պահպանելու հետ:

- Միայն ընտրողների համար:
- Միայն հանձնաժողովի անդամների համար:
- Միայն դիտորդների համար:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: (59.2)

294. Ո՞վ է պատասխանատու ընտրությունների օրը քվեարկության շենքում կարգուկանոնի պահպանման համար:

- Պարեկային ծառայության աշխատակիցները:
- Կարգադրիչները:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (59.1)
- ԿԸՀ-ն:

295. Քվեարկության օրը հանձնաժողովի աշխատանքին խանգարելու և կարգը խախտելու դեպքում ո՞վ է որոշում կայացնում խախտողին տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքից հեռացնելու մասին:

- Որոշումը կայացնում է վերադաս ընտրական հանձնաժողովը:
- Որոշումը կայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովը: (59.4)
- Որոշումը կայացնում է ԿԸՀ-ն:
- Որոշումը կայացնում է ԿԸՀ նախագահը:

296. Ո՞ւմ պահանջով կարող են կանչվել և քվեարկության շենքում գտնվել ոստիկանության աշխատակիցներ, եթե քվեարկության շենքում վտանգ է ստեղծվում Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան քվեարկության անցկացմանը:

- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի: (59.6)

297. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության շենքում կարգուկանոն պահպանելու նպատակով ընդունած որոշումների կատարումը պարտադիր է.

- Միայն հանձնաժողովի անդամների համար:
- Միայն հանձնաժողովի անդամների և դիտորդների համար:
- Միայն հանձնաժողովի անդամների, դիտորդների և վերահսկողների համար:
- Ընտրական հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց և ընտրողի համար: (59.2)

Քվեարկության ժամանակը և վայրը (հոդված 60)

298. Քվեարկությունն անցկացվում է քվեարկության շենքում ընտրությունների (քվեարկության) օրը.

- Ժամը 07:00-ից մինչև 20:00:
- Ժամը 08:00-ից մինչև 20:00: (60.1)
- Ժամը 07:30-ից մինչև 20:00:
- Ժամը 08:30-ից մինչև 20:00:

299. Որքա՞ն ժամանակ կարող է ընտրողը գտնվել քվեարկության շենքում:

- Մուտք գործելուց հետո 5 րոպեի ընթացքում:
- Մուտք գործելուց հետո 7 րոպեի ընթացքում:
- Մուտք գործելուց հետո 10 րոպեի ընթացքում, որը կարող է ավելացվել կամ կրճատվել ըստ անհրաժեշտության:
- Քվեարկության համար անհրաժեշտ ժամանակվա ընթացքում: (60.5)

300. Ո՞վ է քվեարկության շենքը ժամանակավոր փակվելուց հետո որոշում կայացնում քվեարկության շենքը բացելու և քվեարկությունը շարունակելու մասին:

- Միանձնյա որոշում է կայացնում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Չայների մեծամասնությամբ կայացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Չայների մեծամասնությամբ կայացնում է ԿԸՀ-ն:
- Միանձնյա որոշում է կայացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (60.3)

301. Ի՞նչ որոշում չի կարող կայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովը:

- Քվեարկությունը դադարեցնելու մասին որոշումը հաստատելու մասին:
- Ընտրատեղամասը ժամանակավորապես փակելու մասին որոշումը հաստատելու մասին:
- Քվեարկության շենքը ժամանակավոր փակելու վերաբերյալ հանձնաժողովի նախագահի որոշումը չեղարկելու մասին:
- Ընտրությունները հաջորդ օր տեղափոխելու մասին: (60.3)

302. Եթե քվեարկությունը դադարեցված է հայտարարվում:

- Այն այլևս չի վերականգնվում: (60.4)
- Այն վերականգնվում է նույն տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումով:
- Այն վերականգնվում է նույն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումով:
- Այն վերականգնվում է վերադաս ընտրական հանձնաժողովի որոշումով:

303. Ե՞րբ է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը հայտարարում ավարտված դժվարամատչելի վայրերում ստեղծված ընտրական տեղամասերում:

- Ժամը 20-ին, քանի որ բոլոր տեղամասերում քվեարկությունն ավարտվում է նույն ժամին:
- Ցանկացած ժամանակ մինչև ժամը 20-ը, եթե ընտրացուցակում ընդգրկված բոլոր ընտրողները մասնակցել են քվեարկությանը: (60.6)
- Մինչև ժամը 20-ը ցանկացած ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցել է ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների կեսից ավելին:
- Դժվարամատչելի վայրերում ընտրական տեղամասեր ընդհանրապես չեն ստեղծվում:

Ընտրական տեղամասը բացելը (հոդված 61).

304. Ընտրական տեղամասում քվեարկությունն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման անցկացնելու դեպքում ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից վիճակահանությամբ ընտրվում է առնվազն 1 ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ յուրաքանչյուր 350 ընտրողի համար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից վիճակահանությամբ ընտրվում է առնվազն 1 ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ յուրաքանչյուր 300 ընտրողի համար: (60¹.4.բ.բ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից վիճակահանությամբ ընտրվում է առնվազն 1 ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ յուրաքանչյուր 450 ընտրողի համար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից վիճակահանությամբ ընտրվում է առնվազն 1 ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ յուրաքանչյուր 400 ընտրողի համար:

305. Քվեարկության օրը օրենքով սահմանված ժամանակ ընտրական տեղամասը բացվել է: Տեղամասի բացելուց հետո պարզվել է, որ հանձնաժողովի անդամների թիվը 9-ից պակաս է: Ո՞ւմ և ի՞նչ ժամկետում պետք է տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղեկություն տրամադրի տվյալ փաստի մասին:

- Անհապաղ պետք է հայտնի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Անհապաղ պետք է հայտնի վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (61.1)
- Փաստը բացահայտելուց հետո 2 ժամվա ընթացքում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Անհապաղ ԿԸՀ-ին:

306. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ հանձնաժողովի անդամներից որոշում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 3 անդամի: (անհրաժեշտության դեպքում)
- Ընտրական տեղամասը բացելուց հետո մինչև քվեարկությունը սկսելը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ որոշում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամի: (անհրաժեշտության դեպքում)
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամի: (անհրաժեշտության դեպքում) (60¹.1, 60¹.4.ա)
- Ընտրական տեղամասը բացելուց հետո մինչև քվեարկությունը սկսելը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշում է շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի 3 անդամի: (անհրաժեշտության դեպքում)

307. Թվարկվածներից որ պնդումը ճիշտ չէ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից անցկացված հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությամբ պետք է որոշվի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը, որը նաև ստուգում է ընտրողների նշմարումը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից անցկացված հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությամբ պետք է որոշվի նախագահի պարտականությունը կատարող հանձնաժողովի անդամը նրա բացակայության դեպքում: (60¹.4)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից անցկացված հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությամբ պետք է որոշվեն ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամները, որոնք նաև տրամադրում են քվեաթերթիկներ, քվեաթերթիկի դիմերեսին համապատասխան տեղում ստորագրելուց և հատուկ կնիքով վավերացնելուց հետո:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից անցկացված հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխման վիճակահանությամբ պետք է որոշվի քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը:

308. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթները բաշխելու արդյունքները քվեարկության օրը գրառեց քվեարկության օրվա գործավարության մատյանում: Արդյոք հանձնաժողովի նախագահը ճիշտ վարվեց:

- Այո՛, քանի որ քվեարկության օրվա գործավարության մատյանում նման գրառում կատարելու իրավունք ունեն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

- Ո՛չ, քանի որ քվեարկության օրվա գործավարության մատյանում նման գրառում կատարելու իրավունք ունեն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Ո՛չ, քանի որ քվեարկության օրվա գործավարության մատյանում տվյալները մուտքագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը: (60¹.8)
- Ո՛չ, քանի որ քվեարկության օրվա գործավարության մատյանում նման գրառում կատարելու իրավունք ունեն հանձնաժողովի այն անդամը, որին վիճակահանության արդյունքներով հանձնարարվել էր վարել այս մատյանը:

309. Հանձնաժողովի անդամի վիճակահանությամբ որոշված գործառույթը ժամանակավորապես հանձնաժողովի մեկ այլ անդամի փոխանցվում է միայն.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի թույլտվությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ: (601.9)

310. Ընտրական տեղամասում քվեարկությունն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման անցկացնելու դեպքում, եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կրկնակի վիճակահանություն է անցկացնում՝ ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին որոշելու համար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի մեկ այլ անդամի/անդամների հանձնարարում է կատարել լրացուցիչ գործառույթ: Դրա անհնարինության դեպքում նա նվազեցնում է ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը: (60¹.10.ա)
- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթը համատեղում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ոչ մի պատասխան ճիշտ չէ:

311. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը գրանցում իրականացնելիս նկատել (հայտնաբերել) է խախտում, այս բողոքի գրանցման վերաբերյալ որոշումը սահմանված կարգով կայացնում է հանձնաժողովի նախագահը:
- Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը գրանցում իրականացնելիս նկատել (հայտնաբերել) է խախտում, այս բողոքի գրանցման վերաբերյալ որոշումը սահմանված կարգով կայացնում է հանձնաժողովի քարտուղարը:
- Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը գրանցում իրականացնելիս նկատել (հայտնաբերել) է խախտում, այս բողոքի գրանցման վերաբերյալ որոշումը սահմանված կարգով կայացնում է հանձնաժողովը: (61.5)

- Եթե քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը գրանցում իրականացնելիս նկատել (հայտնաբերել) է խախտում, այս բողոքի գրանցման վերաբերյալ որոշումը սահմանված կարգով կայացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

312. Ընտրությունների օրը, մինչ քվեարկության ընթացակարգը սկսելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր ընտրողների գրանցում իրականացնողի փոխանցեց քվեաթերթիկների երկուական նոթատետր: Խախտվե՞լ է արդյոք Ընտրական օրենսգրքի պահանջը:

- Ընտրական օրենսգրքի պահանջը խախտվել է, քանի որ ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի պետք է փոխանցվի բոլոր տեսակների քվեաթերթիկների մեկական նոթատետր: (61.7)
- Ընտրական օրենսգրքի պահանջը չի խախտվել, քանի որ ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի պետք է փոխանցվի բոլոր տեսակների քվեաթերթիկների երկուական նոթատետր:
- Ընտրական օրենսգրքի պահանջը խախտվել է, քանի որ ընտրողների յուրաքանչյուր գրանցում իրականացնողի պետք է փոխանցվի բոլոր տեսակների քվեաթերթիկների երեքական նոթատետր:
- Ընտրական օրենսգրքի պահանջը խախտվել է, ընտրողների գրանցում իրականացնողներին չպետք է փոխանցվեին քվեաթերթիկների նոթատետրեր, քանի որ քվեաթերթիկն ընտրողին պետք է փոխանցի հանձնաժողովի նախագահը:

313. Ինչպե՞ս են որոշվում Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները:

- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները որոշվում են վիճակահանությամբ: (60՝.4.ա)
- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները որոշվում են ընտրական հանձնաժողովի անդամների միջև անվանական քվեարկությամբ:
- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները որոշվում են ըստ նրանց ցանկության:
- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներ են որոշվում հանձնաժողովի ամենատարեց անդամները:

314. Ո՞վ է որոշում տեղամասային ընտրական հանձնաժողովի այն անդամին գործառույթներ շնորհելու հարցը, որը հանձնաժողով կներկայանա վիճակահանության ընթացակարգի ավարտից հետո:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (60՝.7)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

315. Ե՞րբ պետք է բացվի քվեարկության օրվա գործավարության մատյանը:

- Ընտրատեղամասը բացվելուց ոչ ուշ, քան 3 ժամ հետո:
- Ընտրատեղամասը բացվելուց 3 ժամ առաջ:

- Ընտրատեղամասը բացվելուց անմիջապես հետո: (61.2.ա)
- Ընտրատեղամասը բացվելուց ոչ ուշ, քան 2 ժամ հետո:

316. Հիմնական և շարժական քվեատուփերում ստուգողական թերթիկները տեղադրվում են.

- Ընտրատեղամասը բացվելուց անմիջապես հետո:
- Հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխումից անմիջապես հետո:
- Քվեարկության օրվա առավոտյան ժամը 8-ին:
- Առաջին ընտրողի գալուց հետո: (61.10)

317. Ո՞ր պատասխանն է սխալ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշում է.

- Հատուկ ծրարը հանձնաժողովի կնիքով վավերացնող հանձնաժողովի անդամին: (60¹.4)
- Քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին:
- Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին:
- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին:

318. Ո՞վ է ստորագրում ստուգողական թերթիկները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և առաջին ընտրողը:
- Առաջին ընտրողը և տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները: (61.10)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:
- Միայն առաջին ընտրողը:

319. Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամ որոշելու վիճակահանությանը մասնակցում են.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված անդամները: (60¹.2, 60¹.6)
- Քաղաքական կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

320. Քանի՞ օրինակից են լրացնում ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ստուգողական թերթիկը:

- Մեկ օրինակից:
- Երկու օրինակից:
- Երեք օրինակից: (61.10)
- Չորս օրինակից:

321. Ընտրական տեղամասում քվեարկությունն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման դեպքում, ո՞ր պնդումն է ճիշտ:

- Եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, հանձնաժողովի քարտուղարը քվեարկության սենյակում կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը:
- Եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, ընտրողների գրանցում իրականացնողը քվեարկության սենյակում կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը:
- Ոչ մի պատասխան ճիշտ չէ:
- Եթե քվեարկության օրը չի ներկայացել ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի մեկ այլ անդամի է հանձնարարում կատարել լրացուցիչ գործառույթ: Եթե դա հնարավոր չէ, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը կատարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը: (60¹.10.գ)

322. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Եթե քվեարկության օրը չի ներկայացել քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթը կատարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Եթե քվեարկության օրը չի ներկայացել քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթը կատարում է ընտրողների գրանցում իրականացնողը:
- Եթե քվեարկության օրը չի ներկայացել քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը կամ նրա լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի մեկ այլ անդամի է հանձնարարում լրացուցիչ գործառույթի կատարումը կամ քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթը ինքն է կատարում: (60¹.10.դ)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

323. Ո՞վ է պատասխանատու քվեատուփում զետեղված լրացված ստուգողական թերթիկի երրորդ օրինակը պահելու համար, որը հետագայում օգտագործվում է ստուգողական թերթիկն այլ օրինակների հետ համեմատելու համար:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (61.10)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

Քվեարկության օրվա գործավարության մատյանը (հոդված 62)

324. Ո՞վ իրավունք ունի ընտրական ընթացակարգի հետ առնչությամբ արտահայտած որևէ դիտողություն, պահանջ կամ բողոք արտացոլել քվեարկության օրվա գործավարության մատյանում:

- Միայն հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը:
- Միայն հանձնաժողովի անդամները և քարտուղարը:
- Միայն ընտրողները և դիտորդները:
- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք: (62.9)

325. Ո՞վ է ստորագրում քվեարկության օրվա գործավարության մատյանը փակվելուց հետո:

- Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, նախագահը և նրա տեղակալը:
- Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, նախագահը, նրա տեղակալը և վերջին ընտրողը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: (62.11)
- Քվեարկության օրը քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

326. Որտե՞ղ են արտացոլվում ընտրական տեղամասում քվեարկության գործընթացի և քվեարկության ընթացքի վերաբերյալ բողոքները, դժգոհությունները և դիտողությունները:

- Ընտրությունների ամփոփիչ արձանագրության մեջ:
- Ընտրությունների օրվա գործավարության մատյանում: (62.1)
- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ:
- Հատուկ արձանագրության մեջ:

327. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության օրվա գործավարության մատյանն այսպես կոչված թելակարված գիրք է: Թելը՝ ժապավենը, կապարակնքվում է, կապարակնքվելիք թերթի վրա ստորագրում է միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, և այն կնքվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքով:
- Քվեարկության օրվա գործավարության մատյանն այսպես կոչված թելակարված գիրք է: Թելը՝ ժապավենը, կապարակնքվում է, կապարակնքվելիք թերթի վրա ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, և այն կնքվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքով:
- Քվեարկության օրվա գործավարության մատյանն այսպես կոչված թելակարված գիրք է: Թելը՝ ժապավենը, կապարակնքվում է, կապարակնքվելիք թերթի վրա ստորագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, և այն կնքվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքով:
- Քվեարկության օրվա գործավարության մատյանն այսպես կոչված թելակարված գիրք է: Թելը՝ ժապավենը, կապարակնքվում է, կապարակնքվելիք թերթի վրա ստորագրում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը, և այն կնքվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կնիքով: (62.5)

328. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Գործավարության մատյանի բոլոր էջերը, բացառությամբ առաջինի, պետք է համարակալված լինեն, և յուրաքանչյուր էջի վրա պետք է նշվեն ընտրատարածքի և ընտրական տեղամասի համարները:
- Գործավարության մատյանի բոլոր էջերը, բացառությամբ երկուսի, պետք է համարակալված լինեն, և յուրաքանչյուր էջի վրա պետք է նշվեն ընտրատարածքի և ընտրական տեղամասի համարները:
- Գործավարության մատյանի բոլոր էջերը, բացառությամբ վերջին մեկի, պետք է համարակալված լինեն, և յուրաքանչյուր էջի վրա պետք է նշվեն ընտրատարածքի և ընտրական տեղամասի համարները:
- Գործավարության մատյանի բոլոր էջերը պետք է համարակալված լինեն, և յուրաքանչյուր էջի վրա պետք է նշվեն ընտրատարածքի և ընտրական տեղամասի համարները: (62.5)

329. Ո՞վ է պարտավոր գրանցել քվեարկության օրվա բոլոր ընտրական ընթացակարգերը և գործավարության մատյանում նշել դրանց կատարման ժամանակը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նախագահի հետ միասին: (62.3)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները:

Քվեաթերթիկը և հատուկ ծրարը (հոդված 63).

330. Մտորն թվարկվածներից ո՞ր իրավական ակտի հիման վրա է տպվում քվեաթերթիկը:

- ԿԸՀ որոշման:
- ԿԸՀ կարգադրության: (63.1)
- ԿԸՀ նախագահի հրամանի:
- ԿԸՀ նախագահի հրամանագրի:

331. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- Այն ընտրական տեղամասերի համար, որտեղ կան տեսողության պատճառով սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողներ, տեղամասային ընտրական հանձնաժողովն ապահովում է այնպիսի տեխնոլոգիայի կիրառում, որն այս ընտրողներին կտա քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու հնարավորություն:
- Այն ընտրական տեղամասերի համար, որտեղ կան տեսողության պատճառով սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողներ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ապահովում է այնպիսի տեխնոլոգիայի կիրառում, որն այս ընտրողներին կտա քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու հնարավորություն:
- Այն ընտրական տեղամասերի համար, որտեղ կան տեսողության պատճառով սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողներ, ԿԸՀ-ն ապահովում է

այնպիսի տեխնոլոգիայի կիրառում, որն այս ընտրողներին կտա քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու հնարավորություն: (63.2)

- Ոչ մի պատասխան ճիշտ չէ:

332. Թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեաթերթիկների տպագրության գործընթացը դիտարկելու իրավունք ունեն (դրանց պատրաստման յուրաքանչյուր վայրում) օրենքով սահմանված կարգով նշանակված համապատասխան ընտրական հանձնաժողովի 2 անդամներ և Ընտրական օրենսգրքի հիման վրա գրանցված դիտորդական կազմակերպությունները, որոնք համաձայնության հիման վրա ներկայացնում են ոչ ավելի, քան 3 դիտորդ: (63.3)
- Քվեաթերթիկների տպագրության գործընթացը դիտարկելու իրավունք ունեն (դրանց պատրաստման յուրաքանչյուր վայրում) օրենքով սահմանված կարգով նշանակված համապատասխան ընտրական հանձնաժողովի 2 անդամներ և Ընտրական օրենսգրքի հիման վրա գրանցված դիտորդական կազմակերպությունները, որոնք համաձայնության հիման վրա ներկայացնում են ոչ ավելի, քան 1 դիտորդ:
- Քվեաթերթիկների տպագրության գործընթացը դիտարկելու իրավունք ունեն (դրանց պատրաստման յուրաքանչյուր վայրում) օրենքով սահմանված կարգով նշանակված համապատասխան ընտրական հանձնաժողովի 2 անդամներ և Ընտրական օրենսգրքի հիման վրա գրանցված դիտորդական կազմակերպությունները, որոնք համաձայնության հիման վրա ներկայացնում են ոչ ավելի, քան 4 դիտորդ:
- Քվեաթերթիկների տպագրության գործընթացը դիտարկելու իրավունք ունեն (դրանց պատրաստման յուրաքանչյուր վայրում) օրենքով սահմանված կարգով նշանակված համապատասխան ընտրական հանձնաժողովի 2 անդամներ և Ընտրական օրենսգրքի հիման վրա գրանցված դիտորդական կազմակերպությունները, որոնք համաձայնության հիման վրա ներկայացնում են ոչ ավելի, քան 2 դիտորդ:

333. Ո՞վ է պատասխանատու մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի (բացառությամբ Վրաստանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի սակրեբուլոյի) ընտրությունների համար քվեաթերթիկներում մուտքագրվելիք տվյալների ճշգրտության համար:

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (63.3)
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Տպարանը, որը տպագրում է քվեաթերթիկները:

334. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Համապատասխան կարգադրությունն ընդունելուց հետո, 4-օրյա ժամկետում, համապատասխան ընտրական հանձնաժողովը հրապարակում է տվյալներ քվեաթերթիկների տպագրման և քվեատուփերի պատրաստման վայրի, ինչպես նաև քվեաթերթիկների տպագրության և քվեատուփեր պատրաստելու համար պատասխանատու անձանց վերաբերյալ:
- Համապատասխան կարգադրությունն ընդունելուց հետո, 3-օրյա ժամկետում, համապատասխան ընտրական հանձնաժողովը հրապարակում է տվյալներ քվեաթերթիկների տպագրման և քվեատուփերի պատրաստման վայրի, ինչպես նաև

քվեաթերթիկների տպագրության և քվեատուփեր պատրաստելու համար պատասխանատու անձանց վերաբերյալ:

- Համապատասխան կարգադրությունն ընդունելուց հետո, 2-օրյա ժամկետում, համապատասխան ընտրական հանձնաժողովը հրապարակում է տվյալներ քվեաթերթիկների տպագրման և քվեատուփերի պատրաստման վայրի, ինչպես նաև քվեաթերթիկների տպագրության և քվեատուփեր պատրաստելու համար պատասխանատու անձանց վերաբերյալ: (63. 4)
- Համապատասխան կարգադրությունն ընդունելուց հետո, 5-օրյա ժամկետում, համապատասխան ընտրական հանձնաժողովը հրապարակում է տվյալներ քվեաթերթիկների տպագրման և քվեատուփերի պատրաստման վայրի, ինչպես նաև քվեաթերթիկների տպագրության և քվեատուփեր պատրաստելու համար պատասխանատու անձանց վերաբերյալ:

335. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեաթերթիկների տպագրության պատվերը կատարողն անձամբ է կրում պատասխանատվություն քվեաթերթիկներում ներառված տեղեկությունների ճշգրտության համար:
- Քվեաթերթիկների տպագրության պատվերը կատարողն անձամբ է կրում պատասխանատվություն, որ տպագրված և համապատասխան ընտրական հանձնաժողովին փոխանցված քվեաթերթիկների թիվը ճշգրտորեն համապատասխանի պատվիրված թվին, և իր մոտ չտպագրվեն կամ չտարածվեն ավելորդ քվեաթերթիկներ: (63.5)
- Քվեաթերթիկների տպագրության պատվերը կատարողն անձամբ է կրում պատասխանատվություն որակի համար:
- Ոչ մի պնդում ճիշտ չէ:

336. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեաթերթիկները ճշգրիտ հաշվառելու նպատակով յուրաքանչյուր տեսակի քվեաթերթիկ համարակալվում է հաջորդաբար և էջակապվում 25-25 հատանոց նոթատետրերի տեսքով:
- Քվեաթերթիկները ճշգրիտ հաշվառելու նպատակով յուրաքանչյուր տեսակի քվեաթերթիկ համարակալվում է հաջորդաբար և էջակապվում 30-30 հատանոց նոթատետրերի տեսքով:
- Քվեաթերթիկները ճշգրիտ հաշվառելու նպատակով յուրաքանչյուր տեսակի քվեաթերթիկ համարակալվում է հաջորդաբար և էջակապվում 50-50 հատանոց նոթատետրերի տեսքով: (63.7)
- Քվեաթերթիկները ճշգրիտ հաշվառելու նպատակով յուրաքանչյուր տեսակի քվեաթերթիկ համարակալվում է հաջորդաբար և էջակապվում 75-75 հատանոց նոթատետրերի տեսքով:

337. Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկների պահպանման և ըստ նշանակման տրամադրման համար պատասխանատու են.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և տնտեսական ծառայության ղեկավարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: (63.6)

338. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- ԿԸՀ-ն քվեարկությունից ոչ ուշ, քան 2 օր առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները: (63.9)
- ԿԸՀ-ն քվեարկությունից ոչ ուշ, քան 12 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները:
- ԿԸՀ-ն քվեարկությունից ոչ ուշ, քան 1 օր առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները:
- ԿԸՀ-ն քվեարկությունից ոչ ուշ, քան 9 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները:

339. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 3 ժամ առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկները և հատուկ ծրարները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 9 ժամ առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկները և հատուկ ծրարները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկները և հատուկ ծրարները: (63. 9)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 6 ժամ առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովներին է փոխանցում քվեաթերթիկները և հատուկ ծրարները:

340. Ընտրողը քվեաթերթիկի ստացումը հաստատում է ստորագրելով.

- Գործավարության մատյանում:
- Գրանցամատյանում:
- Ընտրողների ցուցակում: (63.23)
- Ցուցադրական արձանագրությունում:

341. ԿԸՀ կարգադրության հիման վրա նրա իսկ սահմանված նմուշի համաձայն տպագրվել են քվեաթերթիկներ վրացերեն, արխագերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: ԿԸՀ-ն արդյոք օրինական էր գործում:

- Ո՛չ, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն քվեաթերթիկները կարող են տպագրվել միայն վրացերեն, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերեն:
- Ո՛չ, քանի որ ըստ Ընտրական օրենսգրքի՝ քվեաթերթիկները կարող են տպագրվել միայն վրացերեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղում թարգմանվել թարգանչի կողմից:
- Այո՛, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն քվեաթերթիկները կարող են տպագրվել վրացերեն, Աբխազիայում՝ նաև աբխազերեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տեղի բնակչությանը հասկանալի այլ լեզվով: (63.1)
- Այո՛, սակայն քվեաթերթիկները տպագրվում են ԿԸՀ նախագահի որոշման հիման վրա:

342. Քանի՞ օրինակից պետք է կազմվի ընդունման-հանձնման ակտը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովին քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները փոխանցելիս:

- Երկու օրինակից: (63.10)
- Երեք օրինակից:
- Չորս օրինակից:
- Հինգ օրինակից:

343. Քվեաթերթիկ տրամադրելիս ի՞նչ է նշվում քվեաթերթիկում ընտրական սուբյեկտին ընտրություններից հանելու դեպքում:

- Ընտրական սուբյեկտի անվան/անվանման երկայնքով դրվում է «Ընտրություններից վտարված է» գրությամբ դրոշմակնիք:
- Ընտրական սուբյեկտի անվան/անվանման երկայնքով դրվում է «Չունի ընտրություններին մասնակցելու իրավունք» գրությամբ դրոշմակնիք:
- Ընտրական սուբյեկտին ընտրություններից հանելու դեպքում, քվեաթերթիկ տրամադրելիս քվեաթերթիկում ընտրական սուբյեկտի անվան/անվանման երկայնքով դրվում է «Ընտրություններից հանված է» գրությամբ դրոշմակնիք: (63.15)
- Անհրաժեշտ չէ նշում անել:

344. Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի ընտրությունների ժամանակ, եթե մեծամասնական թեկնածուն առաջադրվել է ընտրողների նախաձեռնող խմբի կողմից, ի՞նչ պետք է նշվի քվեաթերթիկների առջևի էջում:

- Քվեաթերթիկում հերթական համարի երկայնքով նշվում է «Անկախ»: (63.12. «դ»)
- Քվեաթերթիկում հերթական համարի երկայնքով նշվում է «Ազատ»:
- Քվեաթերթիկի հերթական համարի երկայնքով նշվում է ներկայացնող ընտրական սուբյեկտի անվանումը:
- Քվեաթերթիկի հերթական համարի երկայնքով նշվում է «անկուսակցական»:

345. Հանրաքվեի քվեաթերթիկում պետք է նշվի քաղաքացիներին ուղղված հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հարցադրումը և այս հարցադրմանը պատասխանելու հնարավոր տարբերակները.

- «Այո» և «Ոչ»: (63.12.ե)
- «Հա» և «ոչ»:
- «Համաձայնում եմ» և «Չեմ համաձայնում»:

- «Համաձայն եմ» և «Համաձայն չեմ»:

346. Թվարկվածներից ո՞ր դեպքում է տեղամասային ընտրական հանձնաժողովը տրամադրում քվեաթերթիկը (քվեաթերթիկները) և հատուկ ծրարները ընտրողների ցուցակի հիման վրա:

- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական (Վրաստանի քաղաքացու անձնագիր) կամ կենսաթոշակային վկայական ներկայացնելու դեպքում:
- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայական (Վրաստանի քաղաքացու անձնագիր) կամ վարորդական վկայական ներկայացնելու դեպքում:
- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական (ID քարտ), Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վավերական ոչ էլեկտրոնային (առանց էլեկտրոնային կրիչի) վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր ներկայացնելու դեպքում: (63.19)
- Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայական (Վրաստանի քաղաքացու անձնագիր), վարորդական վկայական, կենսաթոշակային վկայական կամ ուսանողական տոմս ներկայացնելու դեպքում:

347. Ո՞ւմ սեփականությունն է համարվում քվեաթերթիկը:

- ԿԸՀ սեփականություն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սեփականություն:
- Պետական սեփականություն: (63.16)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի սեփականություն:

348. Ինչպիսի՞ն է յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հատուկ ծրարների քանակի և ընտրատեղամասում ընտրողների ընդհանուր թվի հարաբերակցությունը:

- Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հատուկ ծրարների թիվը երկու անգամ ավելի է ընտրատեղամասում ընտրողների ընդհանուր թվից:
- Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հատուկ ծրարների թիվը հարյուրով ավելի է ընտրատեղամասի ընտրողների ընդհանուր թվից:
- Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հատուկ ծրարների թիվը հավասար է ընտրատեղամասում ընտրողների ընդհանուր թվին: (63.8)
- Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին փոխանցված հատուկ ծրարների թիվը երեք անգամ ավելի է ընտրատեղամասում ընտրողների ընդհանուր թվից:

Ընտրողների նշմարումը (հոդված 64)

349. Ստորև թվարկվածներից ո՞ր ընտրողների նկատմամբ չի կիրառվում նշմարում:

- Այն ընտրողների նկատմամբ, որոնք քվեարկությանը մասնակցում են շարժական քվեատուփի միջոցով:
- Վրաստանի զինված ուժերում ծառայող ընտրողների նկատմամբ:
- Մինչև 23 տարեկան ընտրողների նկատմամբ:

- Հիվանդանոցներում և այլ ստացիոնար բուժհաստատություններում գտնվող ընտրողների նկատմամբ: (64.5)

350. Ո՞ր դեպքերում չի կիրառվում նշմարումը:

- Այն դեպքում, երբ ընտրողը վնասել է աջ ձեռքի բթամատի և ցուցամատի եղունգները:
- Այն դեպքում, երբ ընտրողը քվեարկության օրը գտնվում է քրեակատարողական հիմնարկում: (64.5)
- Այն դեպքում, երբ ընտրողը վնասել է աջ և ձախ ձեռքի բթամատի և ցուցամատի եղունգները:
- Նշմարում անցնելը ցանկացած դեպքում անհրաժեշտ ընթացակարգ է:

351. Ստորև տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:

- Ընտրողը, որը կանցնի նշմարումը ստուգելու ընթացակարգը, կտեղափոխվի գրանցման սեղանի մոտ, որտեղ ընտրողների գրանցում իրականացնողը կիրականացնի նրա նշմարում, և նա կստանա քվեաթերթիկ: (64.3)
- Ընտրողը, որը կանցնի նշմարումը ստուգելու ընթացակարգը, քվեաթերթիկները կտեղադրի հատուկ ծրարի մեջ և այն տուփի մեջ զետեղելուց հետո կհեռանա ընտրատեղամասից:
- Ընտրողը, որը կանցնի նշմարումը ստուգելու ընթացակարգը, կտեղափոխվի քվեարկության սենյակ, որտեղ կվերցնի իր համար հատկացված քվեաթերթիկը:
- Ընտրողը, որը կանցնի նշմարումը ստուգելու ընթացակարգը, կտեղափոխվի գրանցման սեղանի մոտ, որտեղ ընտրողների գրանցում իրականացնողը կիրականացնի նրա նշմարում, որից հետո նա կտեղափոխվի քվեարկության սենյակ, որտեղ կվերցնի իր համար հատկացված քվեաթերթիկը:

352. Ո՞ր դեպքերում է հնարավոր միննույն անձի նկատմամբ նշմարման կրկնական կիրառում:

- Նշմարման կրկնական կիրառում թույլ չի տրվում ցանկացած դեպքում:
- Այն դեպքում, երբ ընտրողի աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի վրա եղունգն այնպես է վնասված, որ անհնար է նշմարման իրականացումը:
- Այն դեպքում, երբ ընտրողն արդեն անցել է նշմարման ընթացակարգը և մասնակցել քվեարկությանը:
- Այն դեպքում, երբ ընտրական հանձնաժողովի անդամի մոտ կասկած է առաջացել նշմարման ընթացակարգի պատճառով: (64.4)

353. Ո՞ր պնդումն է սխալ.

- Նշմարում չի կիրառվում քրեակատարողական հիմնարկներում:
- Նշմարում չի կիրառվում հիվանդանոցներում: (հիվանդների նկատմամբ)
- Նշմարում չի կիրառվում բարձրլեռնային բնակավայրերում բացված ընտրատեղամասերում: (64.5)
- Նշմարում կիրառվում է շարժական քվեատուփի միջոցով քվեարկելիս:

354. Ընտրողը, որը հրաժարվել է անցնել նշմարման ընթացակարգը, քվեարկության մասնակցելու իրավունք.

- Չունի: (64.3)
- Ունի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումով:
- Ունի՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումով:
- Ունի՝ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումով:

355. Ե՞րբ է կատարվում ընտրատեղամասում ընտրողների նշմարումը:

- Գրանցման գրասեղանի մոտ՝ մինչև քվեաթերթիկներ ստանալը: (64.3)
- Գրանցումն անցնելուց և քվեաթերթիկը ստանալուց հետո:
- Քվեաթերթիկը լրացնելուց առաջ:
- Քվեաթերթիկը լրացնելուց հետո՝ հատուկ ծրարը ստանալիս:

Քվեարկության անցկացումը (հոդված 65).

356. Քվեարկությանը մասնակցելու համար ընտրողին քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) է/են տրամադրում.

- Հանձնաժողովի նախագահը:
- Ընտրողներին գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (65.2. «բ»)
- Հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Հանձնաժողովի քարտուղարը:

357. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է քվեարկության օրը, երկու անգամ՝ ժամը 12:30-ին և 17-ին, հաշվել ընտրացուցակում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը և այդ թիվը, համապատասխան ժամի նշմամբ, մուտքագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է քվեարկության օրը, երկու անգամ՝ ժամը 12-ին և 17-ին, հաշվել ընտրացուցակում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը և այդ թիվը, համապատասխան ժամի նշմամբ, մուտքագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում: (65.6)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է քվեարկության օրը, երկու անգամ՝ ժամը 12-ին և 17:30-ին, հաշվել ընտրացուցակում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը և այդ թիվը, համապատասխան, ժամի նշմամբ, մուտքագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է քվեարկության օրը, երկու անգամ՝ ժամը 12:30-ին և 17:30-ին, հաշվել ընտրացուցակում մասնակցող քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրությունների թիվը և այդ թիվը, համապատասխան ժամի նշմամբ, մուտքագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում:

358. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է կատարում ընտրողի նշմարում:

- Ընտրողի նշմարումն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (65.2. բ)
- Ընտրողի նշմարումն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրողի նշմարումն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը:
- Ընտրողի նշմարումն իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

359. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեաթերթիկ տրամադրելիս նրա դիմերեսի (առջևի էջի) համապատասխան վանդակում ստորագրում է և քվեաթերթիկը հատուկ կնիքով վավերացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Քվեաթերթիկ տրամադրելիս նրա դիմերեսի (առջևի էջի) համապատասխան վանդակում ստորագրում է և քվեաթերթիկը հատուկ կնիքով վավերացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Քվեաթերթիկ տրամադրելիս նրա դիմերեսի (առջևի էջի) համապատասխան վանդակում ստորագրում է և քվեաթերթիկը հատուկ կնիքով վավերացնում ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (65.2.բ)
- Քվեաթերթիկ տրամադրելիս նրա դիմերեսի (առջևի էջի) համապատասխան վանդակում ստորագրում է և քվեաթերթիկը հատուկ կնիքով վավերացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

360. Ո՞վ ունի իրավունք, որ լրացված քվեաթերթիկը գետեղի հատուկ ծրարի մեջ:

- Միայն ընտրողը: (65. 2. դ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և ընտրողը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և ընտրողը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը և ընտրողը:

361. Ընտրական հանձնաժողովի ո՞ր անդամն է ընտրողին տալիս հատուկ ծրար:

- Ընտրողին հատուկ ծրար տալիս է տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցում իրականացնող անդամը:
- Ընտրողը հատուկ ծրարը վերցնում է քվեարկության սենյակում դրված սեղանից ինքնուրույն: (65. 2. դ)
- Ընտրողին հատուկ ծրար տալիս է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրողին հատուկ ծրար տալիս է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

362. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության ժամանակ չի կարելի, որ քվեատուփին միաժամանակ մոտենան մեկից ավելի ընտրողներ: (65. 2. ե)
- Քվեարկության ժամանակ չի կարելի, որ քվեատուփին միաժամանակ մոտենան երկուսից ավելի ընտրողներ:
- Քվեարկության ժամանակ առանց հանձնաժողովի նախագահի թույլտվության չի կարելի, որ քվեատուփին միաժամանակ մոտենան մեկից ավելի ընտրողներ:
- Քվեարկության ժամանակ առանց հանձնաժողովի նախագահի թույլտվության չի կարելի, որ քվեատուփին միաժամանակ մոտենան երկուսից ավելի ընտրողներ:

363. Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը վնասել է քվեաթերթիկը/քվեաթերթիկները, ապա նա պետք է այդ մասին տեղեկացնի.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: (65.4)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցում իրականացնող անդամին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեատուփը և հատուկ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամին:

364. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներն ունեն իրավունք մինչև քվեարկության խցիկ մտնելը և քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ դնելը ընտրողից պահանջել ցույց տալ, որ նա ձեռքում ունի միայն Ընտրական օրենսգրքով սահմանված քանակի քվեաթերթիկ և հատուկ ծրար:
- Միայն դիտորդներն ունեն իրավունք մինչև քվեարկության խցիկ մտնելը և քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ դնելը ընտրողից պահանջել ցույց տալ, որ նա ձեռքում ունի միայն Ընտրական օրենսգրքով սահմանված քանակի քվեաթերթիկ և հատուկ ծրար:
- Միայն միջազգային դիտորդներն ունեն իրավունք մինչև քվեարկության խցիկ մտնելը և քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ դնելը ընտրողից պահանջել ցույց տալ, որ նա ձեռքում ունի միայն Ընտրական օրենսգրքով սահմանված քանակի քվեաթերթիկ և հատուկ ծրար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն մինչև քվեարկության խցիկ մտնելը և քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ դնելը ընտրողից պահանջել, որ ցույց տա, որ նա ձեռքում ունի միայն Ընտրական օրենսգրքով սահմանված քանակի քվեաթերթիկ և հատուկ ծրար: (65. 5)

365. Ընտրողի կողմից ներկայացված փաստաթղթում նշված ընտրողի գրանցման տվյալները համապատասխանում են ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողը անհամապատասխան է համարել այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը: Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ընտրողների գրանցում իրականացնողը խնդրում է ընտրողին լքել ընտրական տեղամասը:
- Ընտրողների գրանցում իրականացնողն իր մոտ նշում է տվյալ փաստը և քվեաթերթիկ է տրամադրում ընտրողին:
- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը կատարելուց հետո ընտրողին կտրամադրի քվեարկությանը մասնակցելու իրավունք: (65.2¹)
- Ընտրողների գրանցում իրականացնողը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը կատարելուց հետո խնդրում է ընտրողին լքել ընտրական տեղամասը, քանի որ ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը:

366. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Եթե քվեարկության ընթացքում խախտվել է քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովն ընդհատում է քվեարկության գործընթացը և կարգադրությամբ որոշում կայացնում քվեատուփը կրկին կապարակնիքելու և քվեարկությունը շարունակելու մասին: (65.7)
- Եթե քվեարկության ընթացքում խախտվել է քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովն ընդհատում է քվեարկության գործընթացը և հրամանով որոշում կայացնում քվեատուփը նորից կապարակնիքելու և քվեարկությունը շարունակելու մասին:
- Եթե քվեարկության ընթացքում խախտվել է քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովն ընդհատում է քվեարկության գործընթացը և որոշումով կայացնում վճիռ քվեատուփը կրկին կապարակնիքելու և քվեարկությունը շարունակելու մասին:
- Եթե քվեարկության ընթացքում խախտվել է քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովը ընդհատում է քվեարկության գործընթացը և հրամանագրով կայացնում որոշում քվեատուփը կրկին կապարակնիքելու և քվեարկությունը շարունակելու մասին:

367. Ժամը քանիսի՞ն է փակվում քվեարկության շենքը:

- Ժամը 18-ին:
- Ժամը 19-ին:
- Ժամը 21-ին:
- Ժամը 20-ին: (65.8)

368. Ընտրողի կողմից ներկայացրած փաստաթղթում ընտրողի գրանցման տվյալները համապատասխանում են ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն անհամապատասխան է համարել այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը: Ո՞րն է ճիշտ պնդում:

- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է ընտրական տեղամասում գտնվող դիտորդին:

- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: (65. 2¹)
- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Ընտրողների գրանցում իրականացնողը դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին:

369. Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ո՞ր դեպքերում պետք է ընտրողին թույլ տա ներս մտնել քվեարկության սենյակ:

- Եթե ընտրողը նշմարում չի ունենա արված, նրան թույլ կտրվի մասնակցել քվեարկությանը: Քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ընտրողին թույլ կտա մուտք գործել քվեարկության սենյակ միայն այն դեպքում, եթե նա ներկայացնի Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող վկայական (ID-քարտ), Վրաստանի քաղաքացու վավերական ոչ էլեկտրոնային (տեղեկության էլեկտրոնային կրիչ չունեցող) վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, և ընտրողների համար հատկացված գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող չի գտնվի: (65.2. «ա»)
- Եթե ընտրողը նշմարում չի ունենա արված, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ընտրողին թույլ կտա մուտք գործել քվեարկության սենյակ միայն այն դեպքում, եթե նա ներկայացնի Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր, և ընտրողի համար նախատեսված գրանցման սեղանի մոտ երեքից ավելի ընտրող չի գտնվի:
- Եթե ընտրողը նշմարում չի ունենա արված, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ընտրողին թույլ կտա մուտք գործել քվեարկության սենյակ միայն այն դեպքում, եթե նա ներկայացնի Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր և ընտրողի համար նախատեսված գրանցման սեղանի մոտ հինգից ավելի ընտրող չի գտնվի:
- Եթե ընտրողը նշմարում չի ունենա արված, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը ընտրողին թույլ կտա մուտք գործել քվեարկության սենյակ միայն այն դեպքում, եթե նա ներկայացնի Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր և ընտրողի համար նախատեսված գրանցման սեղանի մոտ չորսից ավելի ընտրող չի գտնվի:

370. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացելու լրացված քվեաթերթիկը կամ այլ կերպ խախտելու քվեարկության գաղտնիությունը: (65.2 դ)
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացելու լրացված քվեաթերթիկը և դրանով իսկ խախտելու քվեարկության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրողն ինքն է հրաժարվում քվեարկության գաղտնիությունից:
- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացելու լրացված քվեաթերթիկը և դրանով խախտելու քվեարկության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրողն ինքն է հրաժարվում քվեարկության գաղտնիությունից և դա համաձայնեցված է համապատասխան հանձնաժողովի նախագահի հետ:

- Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը և դրանով էլ ավելի ապահովելու քվեարկության թափանցիկությունը:

371. Ստորև թվարկվածներից ո՞վ կարող է հրավիրվել գաղտնի քվեարկության խցիկ՝ օգնելու այն ընտրողին, որն ինքնուրույն չի կարող լրացնել քվեաթերթիկը:

- Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը:
- Թեկնածուն:
- Այլ ընտրող: (65.3)
- Միջազգային կազմակերպության դիտորդը:

372. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի անկյունը կտրվում է, վրան կգրվի «Թերություն ունի», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և կպահվի առանձին:
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի անկյունը ընտրողի ներկայությամբ կկտրվի, վրան կգրվի «Վնասված է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և կպահվի առանձին: (65.4)
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի մի անկյունը ընտրողի ներկայությամբ կկտրվի, վրան կգրվի «Անվավեր է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և կպահվի առանձին:
- Քվեարկության ժամանակ վնասված քվեաթերթիկի/հատուկ ծրարի մի անկյունը ընտրողի ներկայությամբ կկտրվի, վրան կգրվի «Վնասված է», կստորագրի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և կպահվի առանձին:

373. Քվեարկության ընթացակարգերից ո՞րն է անցնում ընտրողը առաջին հերթին:

- Ընտրողի նշմարումը:
- Քվեաթերթիկի ստացումը:
- Ընտրողների նշմարման ստուգումը: (65.2)
- Ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշումը ընտրողի ներկայացրած փաստաթղթում և ընտրացուցակում:

374. Թվարկվածներից ո՞րն է քվեարկության ընթացակարգերի ճիշտ հաջորդականությունը.

- Նշմարում, քվեաթերթիկի ստացում, քվեաթերթիկի վրա հանձնաժողովի անդամի կողմից ստորագրում, գրանցում իրականացնողի կողմից գրանցման տվյալների և ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշում ընտրողի կողմից ներկայացրած փաստաթղթում և ընտրացուցակում, քվեարկություն, քվեաթերթիկի կնքում և ծրարի տրամադրում, նշմարման ստուգում, քվեաթերթիկի տեղադրում քվեատուփի մեջ:
- Նշմարում, քվեաթերթիկի ստացում, հանձնաժողովի անդամի կողմից քվեաթերթիկի կնքում է ստորագրում, քվեարկություն, քվեաթերթիկի վրա հանձնաժողովի անդամի ստորագրում և ծրարի տրամադրում, նշմարման ստուգում, քվեաթերթիկի տեղադրում քվեատուփի մեջ և գրանցում իրականացնողի կողմից գրանցման տվյալների և ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշում ընտրողի կողմից ներկայացրած փաստաթղթում և ընտրացուցակում:

- Նշմարման ստուգում, գրանցում իրականացնողի կողմից գրանցման տվյալների և ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշում ընտրողի կողմից ներկայացրած փաստաթղթում և ընտրացուցակում, նշմարում, գրանցում իրականացնողի և ընտրողի կողմից ընտրողների ցուցակի համապատասխան պնդումն ստորագրում և կնքում, քվեարկում, ծրարի ստացում, ծրարի մեջ քվեաթերթիկի զետեղում, ծրարի տեղադրում քվեատուփի մեջ: (65.2)
- Գրանցում իրականացնողի կողմից գրանցման տվյալների և ընտրողի լուսանկարի համապատասխանության որոշում ընտրողի կողմից ներկայացրած փաստաթղթում և ընտրացուցակում, նշմարման ստուգում, քվեաթերթիկի ստացում, հանձնաժողովի անդամի կողմից քվեաթերթիկի ստորագրում, քվեարկություն, քվեաթերթիկի վրա ստորագրության ստուգում, կնքում, ծրարի ստացում և նշմարում, քվեաթերթիկի տեղադրում քվեատուփի մեջ:

375. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք արդյոք ունեն՞ իրավունք ընտրողից պահանջել մինչև գաղտնի քվեարկության խցիկ մտնելը ցույց տալ, որ ձեռքում ունի միայն օրենքով սահմանված թվով քվեաթերթիկ:

- Այո՛, ընտրողը պարտավոր է կատարել այս պահանջը: (65.5)
- Այո՛, չնայած ընտրողը պարտավոր չէ կատարել այս պահանջը:
- Ո՛չ, քանի որ դրանով կարող է խախտվել քվեարկության գաղտնիությունը:
- Ո՛չ, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները դրա իրավունքը չունեն:

376. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը.

- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը, եթե համարում է, որ ընտրողը սխալ է լրացրել քվեաթերթիկը:
- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:
- Իրավունք ունի բացելու լրացված քվեաթերթիկը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումով:
- Իրավունք չունի բացելու լրացված քվեաթերթիկը: (65.2.դ)

377. Ո՞ր ակտով է հնարավոր քվեարկության ժամանակ քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտելուց հետո քվեատուփը նորից կապարակնափելու և քվեարկությունը շարունակելու մասին որոշում կայացնել:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հրամանով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ: (65.7)
- Համապատասխան սակրեբուլոյի նախագահի հրամանով:

378. Ինչպիսի՞ որոշում պետք է կայացնի տեղամասային ընտրական հանձնաժողովն այն ընտրողների առնչությամբ, որոնք մինչև քվեարկության շենքը փակվելը չեն հասցրել քվեարկել:

- Ընտրողներին պետք է ազատել տան շենքն առանց քվեարկելու:

- Հանձնաժողովի անդամներից մեկը պետք է հաշվառի հերթում կանգնած ընտրողների ազգանուններն ու անունները, և միայն նրանց պետք է տրվի քվեարկությանը մասնակցելու իրավունք: (65.8)
- Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ որոշում կայացնեն հաջորդ օրը քվեարկություն անցկացնելու մասին, որին կարող են մասնակցել միայն քվեարկությունը դադարեցնելու պահին հերթում կանգնած ընտրողները:
- Ընտրողներին հնարավորություն տան ընտրություն կատարել, շարունակեն հերթում կանգնել, թե ընտրություններին մասնակցելու համար ներկայանան հաջորդ օրը:

379. Ընտրողը, ով չի կարողանում ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունի իրեն գաղտնի քվեարկության խցիկում օգնելու համար հրավիրելու.

- Դիտորդի:
- Ընտրական հանձնաժողովի անդամի:
- Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի:
- Ընտրական տեղամասում գտնվող այլ ընտրողի: (65.3)

Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունը (հոդված 66)

380. Թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ.

- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողների նշմարման ընթացակարգ ընտրողի համաձայնության դեպքում:
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողի նշմարման ընթացակարգ միայն բացառիկ դեպքերում:
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը նախատեսում է ընտրողի նշմարման ընթացակարգ: (66.7)
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության գործընթացը չի նախատեսում ընտրողի նշմարման ընթացակարգ:

381. Ինչպե՞ս են որոշվում քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից շարժական քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող վերահսկողները:

- Վերահսկողները որոշվում են քվեարկության ժամանակ քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միջև գաղտնի քվեարկությամբ:
- Վերահսկողները որոշվում են քվեարկության ժամանակ քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միջև անվանական քվեարկությամբ:
- Վերահսկողները որոշվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից:
- Վերահսկողները որոշվում են քվեարկության ժամանակ քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից ըստ իրենց ցանկության: (66.4)

382. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քանի՞ անդամ է մասնակցում շարժական քվեատուփի միջոցով քվեարկության անցկացմանը:

- Ընտրական հանձնաժողովի 1 անդամ:

- Ընտրական հանձնաժողովի 2 անդամ: (66. 4)
- Ընտրական հանձնաժողովի 3 անդամ:
- Ընտրական հանձնաժողովի 4 անդամ:

383. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Շարժական քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներն անձամբ ստորագրում և հատուկ կնիքով վավերացնում են քվեաթերթիկը և հատուկ ծրարը:
- Շարժական քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներին նախագահի կողմից փոխանցվում են հատուկ ծրարներ և ընտրողների գրանցում իրականացնողի կողմից ստորագրված անհրաժեշտ քանակությամբ քվեաթերթիկներ:
- Շարժական քվեատուփն ուղեկցող ընտրական հանձնաժողովի անդամներին նախագահի կողմից փոխանցվում են հատուկ ծրարներ և ընտրողների գրանցում իրականացնողի կողմից ստորագրված և հատուկ կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ քվեաթերթիկներ: (66.3)
- Ոչ մի պնդում ճիշտ չէ:

384. Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգն անցկացվում է.

- Առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 18-ը:
- Առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 18-ը:
- Առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 19-ը: (66.1)
- Առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան ժամը 20-ը:

385. Ո՞վ իրավունք չունի քվեարկելու շարժական քվեատուփի միջոցով:

- Կալանքի մեջ գտնվող անձինք:
- Ընտրողները, որոնք առողջական վիճակի պատճառով չեն կարողանում ինքնուրույն գնալ քվեարկության շենք:
- Ընտրողները, որոնք բուժման նպատակով պառկած են հիվանդանոցում և այնտեղ չի բացվում ընտրական տեղամաս:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ: (66.2; 33.1)

386. Ընտրական օրենսգրքի համաձայն՝ քվեարկության օրը ժամը քանիսին պետք է շարժական քվեատուփը վերադարձվի ընտրական տեղամաս:

- Ոչ ուշ, քան ժամը 20-ին: (66.1)
- Ոչ ուշ, քան ժամը 21-ին:
- Ոչ ուշ, քան ժամը 19-ին:
- Ոչ ուշ, քան ժամը 18-ին:

387. Շարժական քվեատուփի միջոցով քվեարկելու ժամանակ տրանսպորտային միջոց օգտագործելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- Իրավագոր է տրանսպորտային միջոցում տեղ հատկացնել ընտրական տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ ընտրված 2 դիտորդի համար:

- Պարտավոր է տրանսպորտային միջոցում տեղ հատկացնել ընտրական տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ ընտրված 2 դիտորդի համար: (66.5)
- Իրավագոր է տրանսպորտային միջոցում տեղ հատկացնել ընտրական տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ ընտրված 3 դիտորդի համար:
- Պարտավոր է տրանսպորտային միջոցում տեղ հատկացնել ընտրական տեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ ընտրված 3 դիտորդի համար:

388. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 19-ին, իսկ շարժական քվեատուփի ճեղքը քվեարկության վերջում կապարակնքվում է այնպես, որ անհնար լինի այն բացել առանց կապարակնիքը վնասելու: (66.1, 66.10)
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 19-ին, իսկ շարժական քվեատուփը քվեարկությունն ավարտվելիս այլևս չի կապարակնքվում:
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 18-ին, իսկ շարժական քվեատուփը քվեարկությունն ավարտվելիս այնպես է կապարակնքվում, որ անհնար լինի բացել այն՝ առանց կապարակնիքը վնասելու:
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է քվեարկության օրը ժամը 20-ին, իսկ շարժական քվեատուփի ճեղքը քվեարկությունն ավարտվելիս այնպես է կապարակնքվում, որ անհնար լինի բացել այն առանց կապարակնիքը վնասելու:

Մինչև քվեատուփը բացելը կատարվելիք ընթացակարգերը (հոդված 67)

389. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուրյեկտների ներկայացուցիչները չեն մասնակցում վավեր և(կամ) անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին:
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուրյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան մեկ ներկայացուցիչ, որը հաշվողների հետ միասին կմասնակցի վավեր և(կամ) անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին:
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուրյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ, որոնք հաշվողների հետ միասին կմասնակցեն վավեր և(կամ) անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին: (67.2)
- Ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուրյեկտների ներկայացուցիչներից հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ կորոշի ոչ ավելի, քան 3 ներկայացուցիչ, որոնք հաշվողների հետ միասին կմասնակցեն վավեր և(կամ) անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին:

390. Քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ քանի՞ հաշվող պետք է ընտրի:

- Ոչ պակաս, քան 3 հաշվող: (67.1)
- Ոչ ավելի, քան 3 հաշվող:
- Ոչ պակաս, քան 2 հաշվող:
- Ոչ ավելի, քան 2 հաշվող:

391. Ի՞նչ լիազորություններ ունեն հանձնաժողովի նախագահի կողմից վիճակահանությամբ որոշված ներկայացուցիչները.

- Նրանք կղիտարկեն ձայները հաշվելու գործընթացը և, ցանկության դեպքում, իրավունք ունեն անձամբ վերահաշվել քվեաթերթիկները, բացառությամբ անվավեր, վնասված և չօգտագործված քվեաթերթիկների:
- Նրանք կղիտարկեն ձայները հաշվելու գործընթացը և նախագահի հրամանով պարտավոր կլինեն մեկ անգամ անձամբ վերահաշվել քվեաթերթիկները, այդ թվում՝ անվավեր, վնասված և չօգտագործված քվեաթերթիկները:
- Նրանք հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողների հետ միասին մասնակցում են վավեր և(կամ) անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին: (67.2)
- Նրանք իրենք են ապահովում ձայները հաշվելը և, ցանկության դեպքում, իրավունք ունեն կրկնել ձայները հաշվելու ընթացակարգերը բազմիցս:

392. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Հանձնաժողովի քարտուղարը կտրում է չօգտագործված քվեաթերթիկների անկյունը, կապում դրանք առանձին փաթեթներով և յուրաքանչյուր փաթեթի վրա նշում է ընտրական տեղամասի անվանումը, համարը և քվեաթերթիկի տեսակը: (67.4)
- Չօգտագործված քվեաթերթիկները հանձնաժողովի քարտուղարը ոչնչացնում է դիտորդների ներկայությամբ:
- Չօգտագործված քվեաթերթիկների անկյունները հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված հաշվողները կկտրեն, կկապեն առանձին փաթեթներով և յուրաքանչյուր փաթեթի վրա կնշեն ընտրական տեղամասի անվանումը, համարը և քվեաթերթիկի տեսակը:
- Չօգտագործված քվեաթերթիկները հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված հաշվողները կոչնչացնեն դիտորդների ներկայությամբ:

393. Ո՞վ է ստորագրում առանձին-առանձին փաթեթներով կապված և կապարակնքված չօգտագործված և վնասված քվեաթերթիկները:

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Հաշվողները և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (67.5)
- Միայն հաշվողները:
- Դիտորդները:

394. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ կրնտրեն ոչ ավելի, քան 3 վերահսկող:
- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ կրնտրեն ոչ ավելի, քան 4 վերահսկող:
- Քվեարկության ավարտից հետո քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ կրնտրեն ոչ ավելի, քան 2 վերահսկող: (67.1)
- Դիտորդներն իրավունք չունեն քվեաթերթիկները հաշվելու գործընթացը դիտարկելու համար իրենց կազմից որոշել դիտորդներ:

395. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ դիտորդներն իրենց կազմից փոխադարձ համաձայնությամբ չեն կարողանում ընտրել քվեաթերթիկները հաշվելու գործընթացը վերահսկող դիտորդներ:

- Վերահսկողներին վիճակահանությամբ կորոշի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (67.1)
- Որպես վերահսկողներ նախագահը կրնտրի ամենատարեց դիտորդներին:
- Որպես վերահսկողներ անվանական քվեարկության հիման վրա կրնտրի տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

396. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Չօգտագործված և վնասված քվեաթերթիկների փաթեթները պետք է կապարակնքվեն և դրանք պետք է ստորագրեն հաշվողները և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Չօգտագործված և վնասված քվեաթերթիկների փաթեթները պետք է կապարակնքվեն և դրանք պետք է ստորագրեն հաշվողները և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (67.4, 67.5)
- Չօգտագործված և վնասված քվեաթերթիկների փաթեթները պետք է կապարակնքվեն և դրանք պետք է ստորագրեն հաշվողները և տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Չօգտագործված և վնասված քվեաթերթիկների փաթեթները պետք է կապարակնքվեն և դրանք պետք է ստորագրեն հաշվողները և գրանցում իրականացնողները:

397. Ինչպե՞ս են արտացոլվում քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը հաշվելու արդյունքները:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հաշվելու արդյունքներն անհապաղ գրանցում է գործավարության մատյանում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հաշվելու արդյունքներն անհապաղ գրանցում է ցուցադրական արձանագրության մեջ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը հաշվելու արդյունքներն անհապաղ գրանցում է համապատասխան արձանագրության մեջ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հաշվելու արդյունքներն անհապաղ մուտքագրում է ցուցադրական արձանագրության մեջ և գործավարության մատյանում: (67.3)

Քվեատուփը բացելը (հոդված 68)

398. Հնարավոր ր է արդյոք ամփոփել քվեարկության արդյունքները, եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի:

- Ո՛չ, քանի որ եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, այն պետք է անհապաղ փոխանցվի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Այո՛, քանի որ եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովը համարի, որ դա չի հանգեցրել օրենքի պահանջների խախտման, տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը: (68.2)
- Ո՛չ, քանի որ եթե քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, քվեարկության արդյունքների ամփոփումն անթույլատրելի է:
- Այո՛, քանի որ քվեատուփի կապարակնիքի ամբողջականության խախտումը չի հանդիսանում խոչընդոտող պայման քվեարկության արդյունքներն ամփոփելիս:

399. Ո՞վ և ո՞ւմ ներկայությամբ է ստուգում քվեատուփի վրա կապարակնիքի ամբողջականությունը:

- ԿԸՀ նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ:
- ԿԸՀ նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ: (68.1)

400. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրական տեղամասը փակվելուց հետո սկզբից բացվում է հատուկ քվեատուփը, այնուհետև՝ շարժական քվեատուփը:
- Ընտրական տեղամասը փակվելուց հետո սկզբից բացվում է շարժական քվեատուփը, այնուհետև՝ հիմնական քվեատուփը: (68.4)
- Ընտրական տեղամասը փակվելուց հետո սկզբից բացվում է հիմնական քվեատուփը, այնուհետև՝ շարժական քվեատուփը:
- Քվեատուփերի բացման հերթականություն չի սահմանված:

401. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե շարժական քվեատուփում չի լինում ստուգողական թերթիկ:

- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կապվում են մեկ փաթեթով, վրան գրվում է «Անվավեր է» և ընտրական տեղամասում քվեարկությունը և ձայները հաշվելու ընթացակարգերը ավարտվելուց հետո փոխանցվում են վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (68.4)
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կապվում են մեկ փաթեթով, վրան գրվում է «Չեղարկվել են» և ընտրական տեղամասում քվեարկությունը և ձայները հաշվելու ընթացակարգերն ավարտվելուց հետո փոխանցվում են վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Բոլոր հատուկ ծրարները և քվեաթերթիկները կապվում են մեկ փաթեթով, վրան գրվում է «Անվավեր է» և ընտրական տեղամասում քվեարկությունը և ձայները հաշվելու ընթացակարգերն ավարտվելուց հետո փոխանցվում են ԿԸՀ-ին:
- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կապվում են մեկ փաթեթով, վրան գրվում է «Չեղարկված է» և ընտրական տեղամասում քվեարկությունը և ձայները հաշվելու ընթացակարգերն ավարտվելուց հետո փոխանցվում են ԿԸՀ-ին:

402. Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ե՞րբ է բացվում հիմնական քվեատուփը:

- Շարժական քվեատուփը բացվելուց և դրա հետ կապված ընթացակարգերն ավարտվելուց հետո: (68.4)
- Քվեարկության ավարտից հետո ցանկացած ժամանակ:
- Շարժական քվեատուփում տեղադրված ձայները հաշվելուց հետո՝ ցանկացած ժամանակ:
- Քվեատուփերի բացելու հերթականությունը օրենքով չի կարգավորվում:

403. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Հաշվողները առանձին գտնվող սեղանի վրա են տեղափոխում քվեատուփերը և այնպես են տեղ զբաղեցնում, որ դիմացի կողմում, մեկ մետր հեռավորության վրա գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:
- Հաշվողները առանձին գտնվող սեղանի վրա են տեղափոխում քվեատուփերը և այնպես են տեղ զբաղեցնում, որ դիմացի կողմում, երկու մետր հեռավորության վրա գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք: (68.3)
- Հաշվողները առանձին գտնվող սեղանի վրա են տեղափոխում քվեատուփերը և այնպես են տեղ զբաղեցնում, որ դիմացի կողմում, երեք մետր հեռավորության վրա գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:
- Հաշվողները առանձին գտնվող սեղանի վրա են տեղափոխում քվեատուփերը և այնպես են տեղ զբաղեցնում, որ դիմացի կողմում, չորս մետր հեռավորության վրա գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք:

404. Ի՞նչ հետևանք կհաջորդի հիմնական քվեատուփում զետեղված ստուգողական թերթիկի և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի մոտ պահվող ստուգողական թերթիկի միջև անհամապատասխանության հայտնաբերմանը:

- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անհապաղ կփոխանցվեն վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: (68.5)
- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անհապաղ կփոխանցվեն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներին:
- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կոչնչացվեն:
- Բոլոր հատուկ ծրարներն ու քվեաթերթիկները կփաթեթավորվեն, կկապարակնքվեն, կկազմվի համապատասխան արձանագրություն և անմիջապես կփոխանցվի ԿԸՀ:

Ձայները հաշվելը (հոդված 69)

405. Դիտորդներից որոշված վերահսկողներն իրավունք ունեն հետևելու հաշվելու ողջ ընթացակարգը, մատնանշելու սխալները և պահանջելու, որ սխալները ուղղվեն: Պահանջը չկատարելու դեպքում վերահսկողներն իրավունք ունեն բողոքարկել տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունը.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: (69.2)
- Անմիջապես դատարան:
- Վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կամ անմիջապես դատարան:

406. Ձայները հաշվելու ընթացակարգի ժամանակ որտե՞ղ պետք է կանգնի դիտորդներից որոշված երկրորդ վերահսկողը:

- Երկրորդ հաշվողի մոտ:
- Երրորդ հաշվողի մոտ: (69.2)
- Չորրորդ հաշվողի մոտ:
- Տեղը նշանակություն չունի:

407. Նշվածներից ո՞րը հիմք չէ քվեաթերթիկն անվավեր ճանաչելու համար:

- Եթե քվեաթերթիկը վավերացված չէ ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով:
- Եթե հատուկ ծրարում նշված թվից ավելի քվեաթերթիկներ են հայտնաբերվել:
- Եթե անհնար է որոշել, թե որ ընտրական սուբյեկտի օգտին է քվեարկել ընտրողը:
- Եթե հատուկ ծրարը սահմանված նմուշի է: (69.3)

408. Ո՞ր հիմնավորումն է ճիշտ:

- Յուրաքանչյուր 10 քվեաթերթիկը կապվում է մետաղյա կապիչով և յուրաքանչյուր կապոցի՝ ինչպես ամբողջականի, այնպես էլ՝ ոչ ամբողջականի վրա վերևում գրվում է կապված քվեաթերթիկների քանակը: (69.9)
- Յուրաքանչյուր 20 քվեաթերթիկը կապվում է մետաղյա կապիչով և յուրաքանչյուր կապոցի՝ ինչպես ամբողջականի, այնպես էլ՝ ոչ ամբողջականի վրա վերևում գրվում է կապված քվեաթերթիկների քանակը:
- Յուրաքանչյուր 15 քվեաթերթիկը կապվում է մետաղյա կապիչով և յուրաքանչյուր կապոցի՝ ինչպես ամբողջականի, այնպես էլ՝ ոչ ամբողջականի վրա վերևում գրվում է կապված քվեաթերթիկների քանակը:
- Յուրաքանչյուր 5 քվեաթերթիկը կապվում է մետաղյա կապիչով և յուրաքանչյուր կապոցի՝ ինչպես ամբողջականի, այնպես էլ՝ ոչ ամբողջականի վրա վերևում գրվում է կապված քվեաթերթիկների քանակը:

409. Ո՞ր դեպքերում է քվեաթերթիկը համարվում անվավեր:

- Եթե հատուկ ծրարում հայտնաբերվել է սահմանված քանակի քվեաթերթիկ:
- Եթե քվեաթերթիկը քվեատուփում տեղադրված է սահմանված նմուշի հատուկ ծրարով:
- Եթե քվեաթերթիկը վավերացված է ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով:
- Եթե քվեաթերթիկը նախատեսված է եղել այլ ընտրական տեղամասի համար: (69.3.գ)

410. Սահմանված նմուշի քվեաթերթիկն այն դեպքում է համարվում անվավեր, եթե.

- Այն վավերացված չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կնիքով:
- Այն վավերացված չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:
- Այն վավերացված չէ ընտրողների գրանցում իրականացնողի ստորագրությամբ և հատուկ կնիքով: (69.3.ա)
- Այն վավերացված չէ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեաթերթիկը ստորագրող հանձնաժողովի երկու անդամների ստորագրությամբ:

411. Չայները հաշվելու գործընթացում կասկածելի համարվող քվեաթերթիկների իսկության հարցը վճռում է.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝ քվեարկությամբ: (69.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

412. Ինչպե՞ս է լուծվում այն քվեաթերթիկների հարցը, որոնց իսկությունը կասկածելի է համարվել հաշվելու ժամանակ:

- Նման քվեաթերթիկը համարվում է անվավեր և կապարակնքվում է առանձին:
- Նման քվեաթերթիկի իսկության հարցը քվեարկությամբ որոշում է տեղամասային ընտրական հանձնաժողովը: (69.5)
- Նման քվեաթերթիկի իսկության հարցը քվեարկությամբ որոշում են դիտորդները:

- Նման քվեաթերթիկների իսկության հարցը որոշում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները (հոդված 70)

413. Ո՞վ է պատասխանատվություն կրելու ընտրությունների և քվեարկության արդյունքների ամփոփիչիչ արձանագրությունները կորցնելու դեպքում:

- Ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրական հանձնաժողովի ցանկացած անդամ:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը: (70.7)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

414. Որտե՞ղ պետք է արտացոլվեն քվեարկության և ընտրությունների արդյունքները:

- Միայն ԿԸՀ-ի քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- Միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում:
- ԿԸՀ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում: (70.1)

415. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ամփոփիչ արձանագրությունը քվեարկության և ընտրությունների արդյունքները հաստատող ենթաօրենսդրական նորմատիվ ակտ է: Ամփոփիչ արձանագրությունը և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով վավերացված դրա պատճենն ունեն նույն իրավաբանական ուժը:
- Ամփոփիչ արձանագրությունը քվեարկության և ընտրությունների արդյունքները հաստատող անհատական վարչաիրավական ակտ է: Ամփոփիչ արձանագրությունը գերակա իրավաբանական ուժ ունի Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով վավերացված պատճենի համեմատ:
- Ամփոփիչ արձանագրությունը քվեարկության և ընտրությունների արդյունքները հաստատող ենթաօրենսդրական նորմատիվ ակտ է: Ամփոփիչ արձանագրությունը գերակա իրավաբանական ուժ ունի Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով վավերացված դրա պատճենի նկատմամբ:
- Ամփոփիչ արձանագրությունը քվեարկության և ընտրությունների արդյունքները հաստատող անհատական վարչաիրավական ակտ է: Ամփոփիչ արձանագրությունը և Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով վավերացված նրա պատճենը նույն իրավաբանական ուժն ունեն: (70.2)

416. Ի՞նչ լեզվով են տպագրվում ամփոփիչ արձանագրությունները:

- Միայն վրացերեն:
- Միայն վրացերեն, իսկ Աբխազիայում՝ աբխազերեն:
- Վրացերեն, աբխազերեն և ռուսերեն լեզուներով:
- Վրացերեն, Աբխազիայում՝ աբխազերեն, և այն ընտրատարածքների համար, որոնց համար քվեաթերթիկը տպագրվում է տեղի բնակչությանը հասկանալի այլ լեզվով, ամփոփիչ արձանագրությունը կարող է տպագրվել նաև համապատասխան լեզվով: (70.10)

417. Ամփոփիչ արձանագրությունում ներառված տվյալների ուղղում կատարելը.

- Արգելված չէ:
- Կարելի է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:
- Կարելի է տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ:
- Արգելվում է: (70.3)

418. Եթե ամփոփիչ արձանագրությունը լրացնելու ժամանակ սխալ է թույլ տրվել, ընտրական հանձնաժողովը.

- Պետք է կազմի ուղղման արձանագրություն: (70.4)
- Պետք է պատրաստի ամփոփիչ արձանագրության երկրորդ օրինակը:
- Պետք է ուղղի ամփոփիչ արձանագրության տվյալները:
- Պետք է կազմի բացատրական հաշվետվություն:

419. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ուղղման արձանագրության ստորագրումից կարող է ձեռնպահ մնալ հանձնաժողովի այն անդամը, որը համաձայն չէ ուղղման արձանագրությանը:
- Ուղղման արձանագրության ստորագրումից կարող է ձեռնպահ մնալ հանձնաժողովի այն անդամը, որը կասկածի տակ է դնում ընտրական հանձնաժողովի գործողության օրինականությունը:
- Ուղղման արձանագրությունը ստորագրելու պարտավորություն ունեն հանձնաժողովի նիստին ներկա գտնվող հանձնաժողովի բոլոր անդամները: (70.4)
- Ուղղման արձանագրությունը ստորագրելու պարտավորություն օրենքով նախատեսված չէ:

420. Ո՞վ է պատասխանատու տեղամասային ընտրական հանձնաժողովում ամփոփիչ արձանագրությունները պահպանելու և դրանք ըստ նշանակության տրամադրելու համար:

- Ընտրական հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշված հաշվողները:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը: (70.7)
- Ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված անձը:

421. Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը.

- Իրավական ակտ չէ:
- Տեղեկատվական փաստաթուղթ է, որն իրավաբանական ուժ չունի:

- Անհատական վարչաիրավական ակտ է: (70.2)
- Ընտրված պատգամավորի լիազորությունները հաստատող իրավական ակտ է:

422. Ո՞վ է պատասխանատու ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների ուղղման համար:

- Միայն ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: (70.3)
- Հանձնաժողովի ամբողջ կազմը:

423. Ամփոփիչ արձանագրությունների տպագրությունն ապահովում է.

- Վրաստանի կառավարությունը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (70.6)
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը (հոդված 71)

424. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը արձանագրությունը կազմելու օրվանից հետո, 10-օրյա ժամկետում ուղարկել ԿԸՀ՝ իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցների օգտագործմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենն անհապաղ, արձանագրությունը կազմելուց անմիջապես հետո ուղարկել ԿԸՀ՝ իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցների օգտագործմամբ: (71.14)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը արձանագրությունը կազմելու օրվանից հետո, 5-օրյա ժամկետում ուղարկել ԿԸՀ՝ իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցների օգտագործմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը արձանագրությունը կազմելու օրվանից հետո, 3-օրյա ժամկետում ուղարկել ԿԸՀ՝ իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

425. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքն առանձին փաթեթով է կապարակնքվում, ո՞վ է ստորագրում փաթեթը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և հանձնաժողովի այլ անդամներ: (71.13)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը:
- Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները:

426. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ:

- Նա այլ կարծիք ունենալու իրավունք չունի:
- Նա իրավունք ունի արձանագրությանը գրավոր կցել իր տարբերվող կարծիքը: (71.5)
- Նման դեպքում հանձնաժողովի անդամը լքում է հանձնաժողովը և դիմում է ԿԸՀ:
- Հանձնաժողովի մնացած անդամները ձայների մեծամասնությամբ իրավունք ունեն նրան հեռացնել հանձնաժողովից:

427. Ո՞րն է ճիշտ պնդում:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ապահովել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենի փակցնելը հանրային ծանոթացման համար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենի փակցնելը հանրային ծանոթացման համար: (71.8)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության փակցնելը հանրային ծանոթացման համար:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավագոր է ապահովել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության փակցնելը հանրային ծանոթացման համար:

428. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, իսկ եթե չի համաձայնում արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա իրավունք ունի արձանագրությանը գրավոր կցել տարբերվող կարծիք: (71.4, 71.5)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, իսկ եթե նա համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ինքը պետք է կազմի տարբերվող արձանագրությունը:
- Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա նա իրավագոր է չստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:
- Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ արձանագրության մեջ ներառված տվյալների հետ, ապա պարտավոր է չստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

429. Ո՞վ է լրացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ: (71.1)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ:

430. Տեղամասային ընտրական հանձնաժողովում օրենքով սահմանված կարգով կազմվել է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն: Հանձնաժողովի անդամը, որը համաձայն չէր քվեարկության արդյունքների հետ, ձեռնպահ մնաց արձանագրությունը ստորագրելուց: Ճի՞շտ է վարվել արդյոք հանձնաժողովի անդամը:

- Ճիշտ չի վարվել, քանի որ հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: (71.4)
- Ճիշտ չի վարվել, քանի որ հանձնաժողովի անդամն իրավունք ունի ձեռնպահ մնալ ստորագրելուց միայն այն դեպքում, եթե ձայների հաշվելն իրականացվել է ընտրական օրենսգրքի պահանջների ակնհայտ խախտմամբ:
- Ճիշտ չի վարվել, քանի որ հանձնաժողովի անդամն իրավունք ունի ձեռնպահ մնալ ստորագրելուց միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ:
- Ճիշտ է վարվել, քանի որ հանձնաժողովի անդամն իրավունք ունի ձեռնպահ մնալ ստորագրելուց, եթե նա համաձայն չէ քվեարկության արդյունքների հետ:

431. Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը պետք է վավերացվի.

- Նոտարական կարգով:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով: (71.8)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

432. Քանի՞ ամփոփիչ արձանագրություն է կազմվում Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:

- Երկու ամփոփիչ արձանագրություն:
- Մեկ ամփոփիչ արձանագրություն: (71.2)
- Երեք ամփոփիչ արձանագրություն:

- Արձանագրությունների թիվը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշումով:

433. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ չի նշվում.

- Ընտրությունների անվանումը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը:
- Անվավեր համարված քվեաթերթիկների թիվը:
- Ընտրություններին մասնակցող ընտրական սուբյեկտի հաշվառման համարը: (71.3)

434. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ նշվում է.

- Վրաստանի արդարադատության նախարարությունում կուսակցության գրանցման ամսաթիվը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովում Ընտրական սուբյեկտի գրանցման համարը:
- Ընտրական սուբյեկտի ներկայացուցչի ինքնությունը:
- Հատուկ ցուցակում ընտրողների թիվը: (71.3.է)

435. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը: (71.6')
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի առնվազն հինգ անդամ:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի առնվազն յոթ անդամ:

Դիմումներ և բողոքներ քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերի խախտումների վերաբերյալ (հոդված 73)

436. Տեղամասային ընտրական հանձնաժողովը/տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է պատշաճ կերպով արձագանքել դիմումին/բողոքին, որը վերաբերում է ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի ժամանակ թույլ տված խախտումներին.

- Քվեարկության օրվանից հետո 1 օրվա ընթացքում:
- Քվեարկության օրվանից հետո 2 օրվա ընթացքում:
- Անհապաղ: (73.3)
- Խախտումը թույլ տալուց հետո 12 ժամվա ընթացքում:

437. Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի վերացրել խախտումը կամ այլ կերպ հրաժարվել է արձագանքել դիմումին/բողոքին, ապա դիտորդը կամ նույն դիտորդական կազմակերպության այլ դիտորդ ² ունի իրավունք բողոքարկելու տեղամասային

հանձնաժողովի նախագահի գործողությունը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

- Քվեարկության օրվանից հետո 5-օրյա ժամկետում:
- Քվեարկության օրվանից հետո 3-օրյա ժամկետում: (73.3)
- Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո 6-օրյա ժամկետում:
- Քվեարկության արդյունքների ամփոփումից ոչ ուշ, քան 4-օրյա ժամկետում:

438. Ե՞րբ պետք է կազմվի է քվեարկության ընթացակարգի խախտման վերաբերյալ դիմումը/բողոքը ընտրական տեղամասում:

- Օրենքի խախտումը նկատելուն պես, քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև ամփոփիչ արձանագրության կազմումը:
- Օրենքի խախտումը նկատելուն պես, քվեարկության օրվա ժամը 8-ից մինչև քվեատուփը բացելը:
- Օրենքի խախտումը նկատելուն պես, քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև քվեատուփը բացելը: (73.1)
- Օրենքի խախտումը նկատելուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

Ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման հետ կապված դիմումի/բողոքի քննարկումը (հոդված 74)

439. Ի՞նչ ձևով է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում կայացնում ձայները հաշվելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու հետ կապված դիմում/բողոք քննարկելիս, և որտե՞ղ կարող է այն բողոքարկվել:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում որոշումով, որը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել միայն դատարան:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում որոշումով, որը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել ԿԸՀ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում կարգադրությամբ, որը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել ԿԸՀ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում կարգադրությամբ, որը օրենքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել միայն դատարան: (74.1)

440. Գրանցումից հետո ի՞նչ ժամկետում պետք է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քննարկի քվեարկության արդյունքները վերանայելու կամ անվավեր ճանաչելու դիմումը/բողոքը:

- Գրանցումից հետո 5-օրյա ժամկետում:
- Գրանցումից հետո 6-օրյա ժամկետում:
- Գրանցումից հետո 7-օրյա ժամկետում:
- Գրանցումից հետո 4-օրյա ժամկետում: (74.1)

Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (հոդված 75)

441. Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները կազմելուց հետո ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ի՞նչ ժամկետում պետք է այդ արձանագրությունները ներկայացնի ԿԸՀ:

- Արձանագրությունները կազմելուց հետո ոչ ուշ, քան 7-րդ օրը:
- Արձանագրությունները կազմելուց հետո ոչ ուշ, քան 5-րդ օրը:
- Արձանագրությունները կազմելուց հետո ոչ ուշ, քան 3-րդ օրը:
- Արձանագրությունները կազմելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը: (75.1)

442. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության/ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունն ստորագրում են.

- Միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, որոնք ներկա են հանձնաժողովի նիստին: (75.4)
- Միայն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրավագործ կուսակցությունների կողմից նշանակված անդամները:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմը:

443. Ի՞նչ ժամկետում պետք է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ամփոփի հանրաքվեի արդյունքները և կազմի ամփոփիչ արձանագրություն:

- Քվեարկության օրվանից հետո ոչ ուշ, քան 16-րդ օրը:
- Քվեարկության օրվանից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը: (75.1)
- Քվեարկության օրվանից հետո ոչ ուշ, քան 17-րդ օրը:
- Քվեարկության օրվանից հետո ոչ ուշ, քան 18-րդ օրը:

444. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 17 անդամներից 9-ը ստորագրել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Տվյալ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի՞:

- Այո՛, քանի որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրված է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների կեսի կողմից:
- Ո՛չ, քանի որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:
- Այո՛, քանի որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը: (75.5¹)

- Այո՛, քանի որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրված է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առնվազն 6 անդամի կողմից:

Ընտրությունների արդյունքների ամփոփումը ԿԸՀ-ում (հոդված 76).

445. Ի՞նչ ժամկետում է ԿԸՀ-ն ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված արձանագրությունների հիման վրա ամփոփում Վրաստանի խորհրդարանի և քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի քաղաքապետի ընտրությունների արդյունքները:

- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 27-րդ օրը:
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 28-րդ օրը:
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 29-րդ օրը:
- Քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 26-րդ օրը: (76.1)

446. Ի՞նչ բովանդակության տվյալներ չեն նշվում ԿԸՀ-ի կողմից կազմված ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ:

- Ընտրողների թիվը:
- Ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը:
- Անվավեր համարված քվեաթերթիկների թիվը:
- Տրված քվեաթերթիկների թիվը այն ընտրական տեղամասերում, որոնցում քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել: (76.2)

447. ԿԸՀ-ի լիազորությունների հետ կապված հետևյալ պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

- Թույլատրելի է ԿԸՀ-ի կողմից ընտրությունների արդյունքներն ամփոփել մինչև ընդհանուր դատարաններում համապատասխան ընտրական վեճերի ավարտը: (76.5)
- ԿԸՀ-ն ընտրական տեղամասերից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների ստացմանը զուգահեռ ապահովում է այդ արձանագրությունների տվյալների տեղադրումը ԿԸՀ կայքում:
- ԿԸՀ անդամի տարբերվող կարծիքի առկայության դեպքում ԿԸՀ-ն կարող է ամփոփել ընտրությունների արդյունքները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրությունների հիման վրա:
- ԿԸՀ-ն Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված արձանագրությունների հիման վրա քվեարկության օրվանից հետո ոչ ուշ, քան 26-րդ օրը իր նիստերում ամփոփում է Վրաստանի խորհրդարանի, քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի քաղաքապետի և քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի ընտրությունների արդյունքները, ինչի վերաբերյալ կազմում է ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություն:

448. Ո՞ր տեսակետը ճիշտ չէ:

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամփոփում է ընտրությունների արդյունքները և կազմում ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություն, որտեղ նշվում է.

- Ընտրական սուբյեկտներին տրված ձայների քանակը:
- Անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակը:
- Տրված քվեաթերթիկների քանակը: (76.2)
- Ընտրողների թիվը:

Ընտրությունների երկրորդ փուլի անցկացման համար անհրաժեշտ ժամկետներն ու միջոցառումները (հոդված 76¹)

449. Թվարկվածներից ո՞վ չի կարող նշանակվել ընտրական սուբյեկտի ներկայացուցիչ ընտրությունների երկրորդ փուլում:

- Այս ընտրական սուբյեկտի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովում առաջին փուլում նշանակված ներկայացուցիչը:
- Այս ընտրական սուբյեկտի կողմից ընտրությունների առաջին փուլում առաջադրված թեկնածուն: (76¹.12¹)
- Այս ընտրական սուբյեկտի կողմից առաջին փուլում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում նշանակված ներկայացուցիչը:
- Նախորդ ընտրություններում այս ընտրական սուբյեկտի կողմից առաջադրված թեկնածուն:

Քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերը (հոդված 76⁴)

450. Ընտրական տեղամասում քվեարկությունն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովը լրացո՞ւմ է արդյոք քվեատուփում զետեղվելիք ստուգողական թերթիկը:

- Այո՛, լրացնում է մեկ օրինակից:
- Այո՛, լրացնում է երկու օրինակից:
- Այո՛, լրացնում է երեք օրինակից:
- Ո՛չ, ստուգողական թերթիկ չի լրացվում: (76⁴.2գ)

451. Ընտրական տեղամասում քվեարկությունն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում ժամը քանիսի՞ն է բացվում ընտրական տեղամասը:

- Ժամը 06:45-ին: (76⁴.2.ա)
- Ժամը 07:45-ին:
- Ժամը 08:00-ին:
- Ժամը 07:30-ին:

452. Ընտրական տեղամասում քվեարկությունն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում ո՞վ է ստորագրում ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տպված նախնական արդյունքների մասին քաղվածքը:

- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: (76⁴.3)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները:

453. Ընտրական տեղամասերում, որտեղ ընտրություններն անցկացվում են էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, սահմանված նմուշի քվեաթերթիկը անվավեր չի համարվում, եթե.

- Գունավորված է և (կամ) նշված է մեկից ավելի ընտրական սուբյեկտների անվանման դիմաց առկա համապատասխան շրջանը:
- Գունավորված չէ և (կամ) նշված չէ ոչ մի ընտրական սուբյեկտի անվանման դիմաց առկա համապատասխան շրջանը:
- Գունավորված է և (կամ) նշված է միայն մեկ ընտրական սուբյեկտի անվանման դիմաց առկա համապատասխան շրջանը: (76⁴.5)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

454. Ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից նախնական արդյունքների քաղվածքը տպվելուց հետո.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովը շարունակում է ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը: (76⁴.3)
- Ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը համարվում է ավարտված:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը շարունակում է ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը:
- Ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը շարունակվում են Ձայները հաշվելու կենտրոններում:

Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացված քվեարկության/ընտրությունների աուդիտը (հոդված 76⁶)

455. Ընտրական տեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, ընտրողների ստուգման նպատակով Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականն անցկացվում է ընտրողների ստուգման սարքի ընթերցիչով, համապատասխանությունը հաստատվելու դեպքում ընտրողին ցուցում է տրվում ստորագրել ընտրողների ստուգման սարքից տպագրված ընտրողի ստուգումը հաստատող անդորրագրի վրա: Հանձնաժողովի ո՞ր անդամն է կատարում այս գործառնությունը:

- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը: (76⁶.1է)
- Հանձնաժողովի նախագահի տեղակալը:

- Հանձնաժողովի նախագահը:
- Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը:

456. Ընտրական տեղամասում, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, քվեարկության օրը ժամը 10-ին, 12-ին, 15-ին, 17-ին և 20-ին որոշվում է քվեարկությանը/ընտրություններին մասնակցող ընտրողների թիվը և քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը: Ժամը 12-ի և 17-ի տվյալները մուտքագրվում են.

- Ցուցադրական արձանագրության մեջ: (76⁶.1 ը, 65.6)
- Բողոքների ռեեստրում:
- Գրանցամատյանում:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

457. Ընտրական տեղամասում քվեարկությունը էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում, մինչև քվեարկությունը սկսելը հիմնական քվեատուփը ստուգվում է: Երբ հաստատվում է, որ քվեատուփը դատարկ է, դրա վրա տեղադրվում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարք, և քվեատուփը կապարակնքվում է: Ո՞վ է պատասխանատու հիմնական քվեատուփը կապարակնքելու համար:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (76⁶.1 գ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

458. Ընտրական տեղամասում քվեարկությունն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում քվեատուփերը կապարակնքելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տպում է.

- Քաղվածք, որը հաստատում է, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով քվեարկել է միայն առաջին ընտրողը:
- Քաղվածք, որը հաստատում է ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքում ստուգողական թերթիկի առկայությունը:
- Քաղվածք, որը հաստատում է, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել: (76⁶.1դ)
- Քաղվածք, որը հաստատում է ընտրական տեղամասում հանձնաժողովի անդամների ներկայության փաստը:

459. Ընտրական տեղամասում քվեարկությունը էլեկտրոնային միջոցների կիրառմամբ անցկացնելու դեպքում, գործավարության մատյանում ստորագրությամբ հաստատվում է դատարկ քվեատուփերի կապարակնքումը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տպված «գրոյական քաղվածքում» տրված տեղեկությունն այն մասին, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել: Ո՞վ է պատասխանատու գործավարության մատյանում առկա տեղեկությունը հաստատելու համար:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: (76⁶.1.ե)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և քարտուղարը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

460. Ո՞ւմ ներկայությամբ է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին ակտիվացնում ընտրողներին ստուգող սարքը/սարքերը:

- Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ: (76⁶.1.ա)
- Միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությամբ:
- Միայն դիտորդների ներկայությամբ:
- Միայն լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությամբ:

461. Ո՞ր պնդումն է ճիշտ: Ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողների ցուցակը.

- Փակցվում է տեսանելի տեղում ցուցադրական արձանագրության հետ: (76⁶.1.բ)
- Չի փակցվում և պահպանվում է քվեարկության օրվա գործավարության մատյանում:
- Փոխանցվում է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց:
- Պահվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի մոտ:

462. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականն անցկացնում է ընտրողների ստուգման սարքի ընթերցիչով, համապատասխանությունը հաստատվելու դեպքում ընտրողը ստորագրում է ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող անդորրագիրը: (76⁶.1.է)
- Հանձնաժողովի նախագահի տեղակալը Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականն անցկացնում է ընտրողների ստուգման սարքի ընթերցիչով, համապատասխանությունը հաստատվելու դեպքում ընտրողը ստորագրում է ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող անդորրագիրը:
- Հանձնաժողովի նախագահը Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականն անցկացնում է ընտրողների ստուգման սարքի ընթերցիչով, համապատասխանությունը հաստատվելու դեպքում ընտրողը ստորագրում է ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող անդորրագիրը:
- Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը Վրաստանի քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականն անցկացնում է ընտրողների ստուգման սարքի ընթերցիչով, համապատասխանությունը հաստատվելու դեպքում ընտրողը ստորագրում է ընտրողների ստուգման սարքից տպված ընտրողի ստուգումը հաստատող անդորրագիրը:

463. Քվեարկության ավարտից անմիջապես հետո ո՞վ է ավարտում էլեկտրոնային հատուկ ստուգման սարքում ստուգման գործընթացը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: (76⁶.1.թ)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամը:

464. Շարժական քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները հիմնական քվեատուփի մեջ տեղադրելու ընթացակարգն ավարտելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից տպում է.

- Նախնական արդյունքների մասին քաղվածք: (76⁶.1.ժա)
- Վերջնական արդյունքների մասին քաղվածք:
- Պայմանական արդյունքների մասին քաղվածք:
- Միջանկյալ արդյունքների մասին քաղվածք:

Քվեաթերթիկները թվային ձևաչափի փոխադրելը (հոդված 76⁷)

465. Ո՞ր տեղամասի քվեաթերթիկներն են ենթակա թվային ձևաչափի փոխադրման:

- Այն ընտրական տեղամասի քվեաթերթիկները, որտեղ չի լինի տեղադրված քվեաթերթիկները էլեկտրոնային հաշվելու սարք (76⁷.1):
- Այն ընտրական տեղամասի քվեաթերթիկները, որտեղ տեղադրված կլինի քվեաթերթիկները էլեկտրոնային հաշվելու սարք:
- Բոլոր ընտրական տեղամասերի քվեաթերթիկները, անկախ նրանից՝ տեղադրվելու է քվեաթերթիկները հաշվելու էլեկտրոնային սարք, թե՛ ոչ:
- Ոչ մի ընտրական տեղամասի քվեաթերթիկներ ենթակա չեն թվային ձևաչափի փոխադրման:

Բողոքարկման ժամկետը և կարգը (հոդված 77)

466. Ի՞նչ ժամկետում կարող է բողոքարկվել տեղամասային ընտրական հանձնաժողովի/ հանձնաժողովի ղեկավար անձի որոշումը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի ղեկավար անձի որոշումը կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո 4 օրացուցային օրվա ժամկետում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի ղեկավար անձի որոշումը կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո 6 օրացուցային օրվա ժամկետում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի ղեկավար անձի որոշումը կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո 3 օրացուցային օրվա ժամկետում: (77.2)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի ղեկավար անձի որոշումը կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ժամկետում:

467. Ո՞ւր կարող է բողոքարկվել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: (77.2)
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
- ԿԸՀ նախագահին:

468. Ի՞նչ ժամկետում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քննարկում տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշման վերաբերյալ բողոքը:

- Այն ստանալուց հետո 3 օրացուցային օրվա ընթացքում:
- Այն ստանալուց հետո 2 օրացուցային օրվա ընթացքում:
- Այն ստանալուց հետո 1 օրացուցային օրվա ընթացքում:
- Այն ստանալուց հետո 4 օրացուցային օրվա ընթացքում: (77.2)

469. N1 տեղամասային հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Բողոքի վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացրել: Ի՞նչ ժամկետում կարող է բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 4 օրացուցային օրվա ժամկետում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.2)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 3 օրացուցային օրվա ժամկետում:

470. N1 տեղամասային հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Բողոքի վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացրել, որը օրենքով սահմանված կարգով բողոքարկվել է շրջանային/քաղաքային դատարան: Բողոքի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում որոշում է կայացրել նաև շրջանային/քաղաքային դատարանը: Որտե՞ղ կարող է բողոքարկվել շրջանային/քաղաքային դատարանի որոշումը:

- Շրջանային/քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան: (77.2)
- Շրջանային/քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Գերագույն դատարան:
- Շրջանային/քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Միջազգային դատարան:
- Շրջանային/քաղաքային դատարանի որոշումն այլևս բողոքարկման ենթակա չէ:

471. N1 տեղամասային հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Բողոքի վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կայացրել է որոշում, որն օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է շրջանային/քաղաքային դատարան: Բողոքի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում որոշում է կայացրել նաև շրջանային/քաղաքային դատարանը, որը նույնպես Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Ո՞ր ժամկետում պետք է վերաքննիչ դատարանը քննարկի բողոքը:

- Այն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:

- Այն ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ժամկետում:
- Այն ստանալուց հետո 1 օրացուցային օրվա ժամկետում:
- Այն ստանալուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.2)

472. N 1 տեղամասային հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Բողոքի վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կայացրել է որոշում, որը բողոքարկվել է ԿԸՀ: Ի՞նչ պետք է անի ԿԸՀ-ն:

- ԿԸՀ-ն պետք է բողոքը նյութերի հետ միասին ուղարկի շրջանային/քաղաքային դատարան:
- ԿԸՀ-ն պետք է բողոքը թողնի չքննված: (77.3)
- ԿԸՀ-ն պետք է բողոքը նյութերի հետ միասին ուղարկի վերաքննիչ դատարան:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

473. Որտե՞ղ կարող է բողոքարկվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը կարող է բողոքարկվել ԿԸՀ նախագահին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը կարող է բողոքարկվել ԿԸՀ նախագահի տեղակալին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը կարող է բողոքարկվել ԿԸՀ: (77.4)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը կարող է բողոքարկվել դատարան:

474. Մթածմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: Ստանալուց հետո ԿԸՀ-ն ի՞նչ ժամկետում պետք է քննարկի բողոքը:

- ԿԸՀ-ն բողոքը պետք է քննարկի այն ստանալուց հետո 4 օրացուցային օրվա ժամկետում:
- ԿԸՀ-ն բողոքը պետք է քննարկի այն ստանալուց հետո 3 օրացուցային օրվա ժամկետում:
- ԿԸՀ-ն բողոքը պետք է քննարկի այն ստանալուց հետո 1 օրացուցային օրվա ժամկետում:
- ԿԸՀ-ն բողոքը պետք է քննարկի այն ստանալուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.4)

475. Մթածմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: Ո՞ր ժամկետում կարող է ԿԸՀ-ի որոշումը բողոքարկվել ԹԲԻԼԻՍԻ քաղաքային դատարան:

- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.4)
- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 1 օրացուցային օրվա ժամկետում:

- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ժամկետում:
- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:

476. Մթաժմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: Որտե՞ղ կարող է բողոքարկվել ԿԸՀ որոշումը:

- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել Վրաստանի Գերագույն դատարան:
- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան:
- ԿԸՀ որոշումը կարող է բողոքարկվել Թբիլիսիի քաղաքային դատարան: (77.4)
- ԿԸՀ որոշումը չի կարող բողոքարկվել:

477. Մթաժմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: ԿԸՀ որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է Թբիլիսիի քաղաքային դատարան: Ի՞նչ ժամկետում պետք է Թբիլիսիի քաղաքային դատարանը քննարկի բողոքը:

- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը կքննարկի 1 օրացուցային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը կքննարկի 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.4)
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը կքննարկի 2 աշխատանքային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը կքննարկի 1 աշխատանքային օրվա ժամկետում:

478. Մթաժմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: ԿԸՀ որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է Թբիլիսիի քաղաքային դատարան: Թբիլիսիի քաղաքային դատարանը նույնպես քննարկել է բողոքը և վճռել այն: Որտե՞ղ կարող է բողոքարկվել Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը:

- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ:
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Միջազգային դատարան:
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Գերագույն դատարան:
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան: (77.4)

479. Մթաժմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: ԿԸՀ որոշումը օրենքով սահմանված ժամկետում

բողոքարկվել է Թբիլիսիի քաղաքային դատարան: Թբիլիսիի քաղաքային դատարանը նույնպես քննարկել է բողոքը և վճռել այն: Ո՞ր ժամկետում կարող է բողոքարկվել Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը:

- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել որոշումը կայացնելու օրվանից հետո 2 օրացուցային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել որոշումը կայացնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է բողոքարկվել որոշումը կայացնելու օրվանից հետո 1 օրացուցային օրվա ժամկետում: (77.4)
- Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը կարող է որոշումը կայացնելու օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ժամկետում:

480. Մթածմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: ԿԸՀ որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է Թբիլիսիի քաղաքային դատարան: Թբիլիսիի քաղաքային դատարանը նույնպես քննարկել է բողոքը և վճռել այն: Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Բողոք ներկայացնելուց հետո ի՞նչ ժամկետում պետք է վերաքննիչ դատարանը քննարկի բողոքը:

- Վերաքննիչ դատարանը բողոքը կքննարկի բողոքը ներկայացնելու օրվանից հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.4)
- Վերաքննիչ դատարանը բողոքը կքննարկի բողոքը ներկայացնելու օրվանից հետո 1 օրացուցային օրվա ժամկետում:
- Վերաքննիչ դատարանը բողոքը կքննարկի բողոքը ներկայացնելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:
- Վերաքննիչ դատարանը բողոքը կքննարկի բողոքը ներկայացնելու օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ժամկետում:

481. Մթածմինդայի N1 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է ԿԸՀ: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է օրենքով սահմանված ժամկետում և որոշում կայացրել: ԿԸՀ որոշումը օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է Թբիլիսիի քաղաքային դատարան: Թբիլիսիի քաղաքային դատարանը նույնպես քննարկել է բողոքը և վճռել այն: Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը քննարկել է բողոքը և կայացրել համապատասխան որոշում: Որտե՞ղ կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարանի որոշումը:

- Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվում է վերաքննիչ դատարանի նախագահին:
- Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվում է Գերագույն դատարանի նախագահին:
- Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվում է Գերագույն դատարան:
- Վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական է և չի կարող բողոքարկվել: (77.4)

482. Որտե՞ղ կարող է բողոքարկվել ԿԸՀ նախագահի որոշումը:

- ԿԸՀ նախագահի որոշումը բողոքարկվում է Գերագույն դատարան:

- ԿԸՀ նախագահի որոշումը բողոքարկվում է վերաքննիչ դատարան:
- ԿԸՀ նախագահի որոշումը բողոքարկվում է Թբիլիսիի քաղաքային դատարան: (77.5)
- ԿԸՀ նախագահի որոշումը բողոքարկման ենթակա չէ:

483. Ո՞ր ժամկետում կարող է բողոքարկվել ԿԸՀ նախագահի որոշումը:

- ԿԸՀ նախագահի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 3 օրացուցային օրվա ժամկետում:
- ԿԸՀ նախագահի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.5)
- ԿԸՀ նախագահի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 1 աշխատանքային օրվա ժամկետում:
- ԿԸՀ նախագահի որոշումը կարող է բողոքարկվել այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:

484. Բողոքը ներկայացնելուց հետո ի՞նչ ժամկետում Թբիլիսիի քաղաքային դատարանը պետք է քննի բողոքը ԿԸՀ նախագահի որոշման վերաբերյալ:

- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը քննարկում է նյութերը ստանալու օրվանից հետո 1 օրացուցային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը քննարկում է նյութերը ստանալու օրվանից հետո, 1 աշխատանքային օրվա ժամկետում:
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը քննարկում է այն ստանալուց հետո 2 օրացուցային օրվա ժամկետում: (77.5)
- Թբիլիսիի քաղաքային դատարանը բողոքը քննարկում է նյութերը ստանալու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ժամկետում:

485. Ո՞ր մարմնի որոշումն է վերջնական նախընտրական քարոզարշավի և քարոզչության ժամանակ պաշտոնական դիրքի օգտագործումն արգելող դրույթների խախտման դեպքում ընտրական հանձնաժողովի կարգադրությունը բողոքարկելուց հետո:

- Վերաքննիչ դատարանի: (77.5)
- Սահմանադրական դատարանի:
- ԿԸՀ-ի:
- Գերագույն դատարան-ի:

486. Դիմումը/բողոքը տեղամասային ընտրական հանձնաժողով ներկայացված է համարվում.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում գրանցման պահից:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովում գրանցման պահից: (77.8)
- Դիմում/բողոք ներկայացնելու պահից:
- Դիմումի/բողոքի վերաբերյալ համապատասխան բանաձևի ընդունման օրվանից:

487. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները/հանձնաժողովների ղեկավար անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել.

- Քվեարկության շենքում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձին գործավարության մատյանում գրառում կատարելու հարցում խանգարելու պատճառով:

- Տեղական/միջազգային դիտորդների, ընտրական սուբյեկտների և լրատվամիջոցների ներկայացուցիչների Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները սահմանափակելու կամ նրանց գործունեությունը խոչընդոտելու պատճառով:
- Նախընտրական քարոզչությանը Ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ մասնակցելու պատճառով:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (79, 90, 91)

488. Ո՞վ պետք է իրազեկվի բողոքի քննարկման ժամանակի և վայրի մասին այն դեպքում, երբ բողոքի հեղինակը ընտրական հանձնաժողովում գրանցված դիտորդական կազմակերպություն է կամ նրա ներկայացուցիչը:

- ԿԸՀ-ն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Ընտրական հանձնաժողովում գրանցված դիտորդական կազմակերպության համապատասխան դիտորդը կամ այս կազմակերպությունը: (77.15)
- Նման իրազեկման պարտավորություն չի նախատեսում Ընտրական օրենսգիրքը:

489. Ո՞վ պետք է ծանուցվի բողոքի քննարկման մասին այն դեպքում, եթե բողոքի հեղինակը ընտրական հանձնաժողովի անդամ է:

- ԿԸՀ-ն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:
- Հանձնաժողովի անդամն ինքը: (77.17)

490. Ո՞վ պետք է իրազեկվի բողոքի քննարկման ժամանակի և վայրի մասին այն դեպքում, երբ բողոքի հեղինակը ընտրական սուբյեկտն է:

- Ընտրական սուբյեկտի օրենքով սահմանված կարգով նշանակված ներկայացուցիչը: (77.16)
- ԿԸՀ-ն:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Պետք է հրապարակվի զանգվածային լրատվության միջոցներով:

491. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի ընտրական վարչակազմը պարտավոր է կողմին իրազեկել գործի քննության ժամանակի և վայրի մասին գործի քննության մեկնարկից ոչ ուշ, քան 6 ժամ առաջ:
- Վրաստանի ընտրական վարչակազմը պարտավոր է կողմին իրազեկել գործի քննության ժամանակի և վայրի մասին գործի քննության մեկնարկից ոչ ուշ, քան 5 ժամ առաջ:
- Վրաստանի ընտրական վարչակազմը պարտավոր է կողմին իրազեկել գործի քննության ժամանակի և վայրի մասին գործի քննության մեկնարկից ոչ ուշ, քան 3 ժամ առաջ: (77.23)
- Ոչ մի փաստարկ ճիշտ չէ:

Ընտրական վեճերը և հայցվորների շրջանակը (հոդված 78)

492. Ո՞վ ունի ընտրողների ցուցակների վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու իրավունք:

- Դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.2)
- ԿԸՀ անդամը:
- Խորհրդարանի անդամի թեկնածուն:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

493. Ո՞վ ընտրատարածքների ստեղծման պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք չունի:

- ԿԸՀ անդամը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը: (78.3)
- Վերջին համապետական ընտրությունների համար գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- ԿԸՀ-ում կուսակցության ներկայացուցիչը:

494. Ո՞վ ընտրական տեղամասերի ստեղծման պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք չունի:

- Կուսակցության ներկայացուցիչը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Վերջին համապետական ընտրությունների համար գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Ընտրողը: (78.4)

495. Ո՞ր պնդումը ճիշտ չէ.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու/ընտրելու պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի կուսակցության/ընտրական դաշինքի/ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցիչը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու/ընտրելու պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու/ընտրելու պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը: (78.6)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ նշանակելու/ընտրելու պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:

496. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման դեմ դատարան հայց ներկայացնելու իրավունք չունի.

- Կուսակցության ներկայացուցիչը:

- Մեծամասնական թեկնածուն:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում դիտորդը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը: (78.21)

497. Թվարկվածներից ո՞րն իրավունք չունի հայց ներկայացնել դատարան այն դեպքում, երբ ԿԸՀ-ն կարգադրությամբ մերժում է գրանցել միջազգային կազմակերպությունը:

- Ցանկացած անձ: (78.12)
- Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը:
- Ընտրական գրանցում ունեցող ընտրական դաշինքը:
- ԿԸՀ-ում գրանցված ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցիչը:

498. Ո՞վ ունի մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման մասին ԿԸՀ/ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարի կարգադրության պատճառով հայց ներկայացնելու իրավունք:

- Մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցիչը, որի հավատարմագրման մասին դիմումը չի բավարարել ընտրական հանձնաժողովը:
- Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը:
- Դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (78.14)

499. Ստորև թվարկվածներից ո՞րն իրավագոր չէ ընտրական տարածքներ ստեղծելու պատճառով Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում հայց ներկայացնել դատարան:

- Վերջին համապետական ընտրությունների համար գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող տեղական կազմակերպությունը:
- Վերջին համապետական ընտրությունների համար գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող միջազգային կազմակերպությունը:
- ԿԸՀ-ում ընտրական գրանցում ունեցող կուսակցության ներկայացուցիչը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը: (78.3)

500. Ստորև թվարկվածներից ո՞րն իրավագոր չէ ընտրական տեղամասեր ստեղծելու պատճառով Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում հայց ներկայացնել դատարան:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում գրանցված կուսակցության ներկայացուցիչը:
- Վերջին համապետական ընտրությունների ժամանակ գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող տեղական կազմակերպությունը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը: (78.4)

501. Ստորև թվարկվածներից ո՞վ իրավագոր չէ ընտրական հանձնաժողովի անդամի ընտրության պատճառով հայց ներկայացնել դատարան:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում գրանցված ընտրողների նախաձեռնող խմբի ներկայացուցիչը:
- Դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:

- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը: (78.6)

502. Ո՞վ իրավունք ունի դատարան հայց ներկայացնել ԿԸՀ ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճառով:

- Ընտրություններին մասնակցող կուսակցությունը, քաղաք Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուն, մեծամասնական թեկնածուն (քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի ընտրությունների ժամանակ), դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.24)
- Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը:
- Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությանը և դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- Ընտրություններին մասնակցող կուսակցությունը, քաղաք Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուն, մեծամասնական թեկնածուն (քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի ընտրությունների ժամանակ), դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը և լրատվամիջոցների ներկայացուցիչները:

503. Ո՞վ իրավունք ունի ընտրողների ցուցակների պատճառով հայց ներկայացնել դատարան:

- Վրաստանի նախագահը:
- Խորհրդարանականների մեկ հինգերորդը:
- Ընտրություններին դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.2)
- Հանրային պաշտպանը:

504. Ընտրական տարածքների ստեղծման պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունեն.

- Վրաստանի արդարադատության նախարարությունը:
- Վրաստանի քաղաքացին 18 տարեկանից:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Վերջին համապետական ընտրությունների համար գրանցված դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.3)

505. Ընտրական տեղամասեր ստեղծելու պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Համապատասխան շրջանի շրջանային վարչության նախագահը:
- Վրաստանի քաղաքացի 18 տարեկանից:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը: (78.4)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը:

506. Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ընտրության/նշանակման պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Շահագրգիռ ընտրողը:
- Համապատասխան շրջանի սակրեբուլոն:
- Համապատասխան շրջանի շրջանային վարչությունը:

- Ընտրություններին դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.6)

507. Ստորադաս ընտրական հանձնաժողովի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգադրության պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Նախաձեռնող խումբը:
- Համապատասխան շրջանի շրջանային վարչությունը:
- Այն հանձնաժողովի անդամների կեսից ավելին, որի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվել է սույն կարգադրությամբ: (78.8)

508. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրությունը բողոքարկելու դեպքում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համապատասխան կարգադրության պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունեն.

- Շահագրգիռ ընտրողը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը:
- Համապատասխան շրջանի շրջանային վարչությունը:
- Դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.20)

509. Ընտրություններն անցկացված կամ չանցկացված հայտարարելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգադրություն պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Ընտրություններին դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը: (78.22)
- Շահագրգիռ ընտրողը:

510. Ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին ընտրական հանձնաժողովի կարգադրության պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Միայն ընտրական գրանցում ունեցող կուսակցությանը:
- Միայն դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը:
- Վրաստանի քաղաքացին 18 տարեկանից:
- Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը, դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը, համապատասխան կամ վերադաս ընտրական հանձնաժողովի անդամը: (78.7)

511. Ընտրական հանձնաժողովի ղեկավար անձի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին ընտրական հանձնաժողովի կարգադրության պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի.

- Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը: (78.7)
- Խորհրդարանական խմբակցությունը:
- Վրաստանի քաղաքացին 23 տարեկանից:

- Ընտրական հանձնաժողովի ցանկացած անդամ:

512. Տեղական դիտորդական կազմակերպության գրանցումը մերժելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրության պատճառով դատարան հայց ներկայացնելու իրավունք ունի:

- Շահագրգիռ ընտրողը:
- Համապատասխան շրջանի սակրեբուլոն:
- Համապատասխան շրջանի շրջանային վարչությունը:
- Նույն կազմակերպությունը: (78.13)

Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում ներառված տվյալների ուղղումը (հոդված 87)

513. Ո՞ւմ տուգանման կհանգեցնի քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում ներառված տվյալների ուղղումը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ամբողջական կազմի:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և(կամ) քարտուղարի: (87)
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի և(կամ) քարտուղարի:
- Քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններում ներառված տվյալների ուղղումը չի հանգեցնում տուգանքի նշանակման:

Իրավական վարույթ (հոդված 93)

514. Թվարկվածներից ո՞ր մարմինը կամ պաշտոնատար անձն է կազմում Ընտրական օրենսդրությամբ նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ:

- Համապատասխան շրջանային/քաղաքային դատարանը:
- ԿԸՀ նախագահը: (93.1)
- Վերաքննիչ դատարանը:
- Արդարադատության նախարարը:

Վրաստանի նախագահի ընտրությունները (հոդված 94)

515. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահն ընտրվում է ընտրական իրավունքի համընդհանուր և ուղղակի սկզբունքների հիման վրա:
- Վրաստանի նախագահն ընտրվում է ընտրական իրավունքի համընդհանուր և գաղտնի քվեարկության սկզբունքների հիման վրա:

- Վրաստանի նախագահին ընտրվում է ընտրական իրավունքի համընդհանուր և հավասարության սկզբունքների հիման վրա:
- Վրաստանի նախագահին առանց քննարկումների բաց քվեարկությամբ ընտրում է Ընտրական կոլեգիան: (94)

516. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահին 5 տարի ժամկետով առանց քննարկման բաց քվեարկությամբ ընտրում է Ընտրողների կոլեգիան: Նույն անձը Վրաստանի նախագահ կարող է ընտրվել միայն երկու անգամ: (94)
- Վրաստանի նախագահին ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը Վրաստանի նախագահ կարող է ընտրվել միայն երկու անգամ:
- Վրաստանի նախագահին 5 տարի ժամկետով բաց քվեարկությամբ առանց բանավեճի ընտրում է Ընտրողների կոլեգիան: Նույն անձը Վրաստանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ ժամկետով:
- Վրաստանի նախագահին ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը Վրաստանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ ժամկետով:

517. Նույն անձը Վրաստանի նախագահ կարող է ընտրվել.

- Միայն մեկ անգամ:
- Այս առումով որևէ սահմանափակում չկա:
- Միայն երկու անգամ: (94)
- Միայն երեք անգամ:

Վրաստանի նախագահի հերթական ընտրությունների անցկացումը (հոդված 95)

518. Վրաստանում հերթական նախագահական ընտրությունների օրը Վրաստանի խորհրդարանը նշանակել է ընտրություններից 50 օր առաջ: Կա՞ որևէ խախտում:

- Այո՛, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Վրաստանի խորհրդարանը նախագահական ընտրությունների օրը պետք է նշանակի ընտրություններից 30 օր առաջ:
- Ո՛չ, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Վրաստանի խորհրդարանը նախագահական ընտրությունների օրը պետք է նշանակի ընտրություններից ոչ ուշ, քան 40 օր առաջ:
- Այո՛, քանի որ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Վրաստանի հերթական նախագահական ընտրությունների օրը նշանակում է Վրաստանի խորհրդարանը ընտրությունների օրվանից 60 օր առաջ: (95.2)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

519. Ո՞ր ամսին են անցկացվում հերթական նախագահական ընտրությունները.

- Մարտին:
- Ապրիլին:

- Սեպտեմբերին:
- Հոկտեմբերին: (95.1)

520. Վրաստանի նախագահի արտահերթ ընտրությունների անցկացումն ապահովում է.

- Վրաստանի կառավարությունը՝ Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի միջոցով:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի Ազգային անվտանգության խորհուրդը՝ Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի միջոցով:
- Վրաստանի խորհրդարանը՝ Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի միջոցով: (95.4)

521. Արտակարգ կամ պատերազմական դրության ժամանակ Վրաստանում անցկացվո՞ւմ են արդյոք նախագահական ընտրություններ:

- Անցկացվում են:
- Չեն անցկացվում: (95.3)
- Արտակարգ կամ պատերազմական դրությունը չի խոչընդոտում նախագահական ընտրությունների անցկացմանը:
- Իհարկե, ընտրություններն անհնար է հետաձգել:

522. Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե Վրաստանի նախագահական ընտրությունների ամսաթիվը համընկնում է Վրաստանի խորհրդարանական ընտրությունների ամսվա կամ նախորդ ամսվա հետ:

- Նման դեպքում Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են նորընտիր խորհրդարանի առաջին նիստն անցկացնելուց հետո 60 օրվա ընթացքում:
- Նման դեպքում Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են խորհրդարանական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո 60 օրվա ընթացքում:
- Նման դեպքում Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են խորհրդարանական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո 45 օրվա ընթացքում:
- Նման դեպքում Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են նորընտիր խորհրդարանի առաջին նիստի անցկացումից հետո 45 օրվա ընթացքում: (95.2)

Պասիվ ընտրական իրավունք (հոդված 96)

523. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 35 տարեկանից, որը Վրաստանում ապրել է առնվազն 15 տարի:
- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 40 տարեկանից, որը Վրաստանում ապրել է ընտրությունների նշանակման օրվան նախորդող վերջին 5 տարիների ընթացքում:

- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 35 տարեկանից, որը Վրաստանում ապրել է ընտրությունների նշանակման օրվան նախորդող վերջին 5 տարիների ընթացքում:
- Վրաստանի նախագահ կարող է ընտրվել ընտրելու իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 40 տարեկանից, որը Վրաստանում ապրել է առնվազն 15 տարի: (96)

Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու իրավունքը (հոդված 97)

524. Ո՞վ ունի Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք:

- Առնվազն 200 000 ընտրող:
- Ընտրական կոլեգիայի առնվազն 30 անդամ: (97)
- Քաղաքացիների քաղաքական միավորումը (կուսակցությունը):
- Ընտրողների 5 հոգանոց նախաձեռնող խումբը:

Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու կարգը (հոդված 98)

525. Նախագահի քանի՞ թեկնածուի առաջադրման կարող է աջակցել ընտրական կոլեգիայի մեկ անդամը:

- Ընտրական կոլեգիայի մեկ անդամը կարող է աջակցել միայն երկու թեկնածուի առաջադրմանը:
- Ընտրական կոլեգիայի մեկ անդամ կարող է աջակցել միայն մեկ թեկնածուի առաջադրմանը: (98.1)
- Ընտրական կոլեգիայի մեկ անդամ կարող է աջակցել առնվազն երկու թեկնածուի առաջադրմանը:
- Ընտրական կոլեգիայի անդամն իրավունք չունի աջակցելու նախագահի թեկնածուի առաջադրմանը:

526. Նախագահի թեկնածու առաջադրելու նպատակով դիմումի մեջ պետք է նշվի նախագահի թեկնածուի.

- Ծնողների ինքնությունը:
- Ընտանեկան դրությունը:
- Աշխատավայրը: (98.3.ե)
- Որ բարձրագույն ուսումնական հաստատությունն է ավարտել:

527. Ի՞նչ տվյալներ պետք է նշվեն ընտրական կոլեգիայի անդամների կողմից ներկայացված դիմումի մեջ՝ նախագահի թեկնածու գրանցելու համար:

- Նախագահի թեկնածուի ամուսնու ինքնությունը:
- Ո՞ր միջնակարգ դպրոցն է ավարտել նախագահի թեկնածուն:
- Քանի՞ տարի է նախագահի թեկնածուն ապրել արտերկրում:
- Նախագահի թեկնածուի ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: (98.3.բ)

528. Նախագահի թեկնածու առաջադրելու նպատակով դիմումի մեջ պետք է նշվեն նախագահի թեկնածուի.

- Անունը, ազգանունը: (98.3.ա)
- Անունը, ազգանունը և հայրանունը:
- Հոր ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Ծնողների ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

529. Նախագահի թեկնածու առաջադրելու նպատակով դիմումի մեջ ստորև թվարկվածներից նախագահի թեկնածուի ո՞ր տվյալը պետք է լինի նշված.

- Մասնագիտությունը: (98.3.գ)
- Անձի հասակը:
- Ծնողների մասնագիտությունը:
- Ամուսնու մասնագիտությունը:

530. Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրելու մասին դիմումը ստորագրում է.

- Նախագահի թեկնածուն:
- Ընտրական կոլեգիայի կազմից Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրող բոլոր անդամները: (98.6)
- Նախագահի թեկնածուն և նրա ներկայացուցիչը:
- Ընտրական կոլեգիայի կազմից Վրաստանի նախագահի թեկնածու առաջադրող որևէ անդամ:

Վրաստանի նախագահի թեկնածուի գրանցումը (հոդված 100)

531. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահի թեկնածուն իրավունք ունի ցանկացած ժամանակ, քվեարկությունից ոչ ուշ, քան 3 օր առաջ հանել իր թեկնածությունը, ինչի համար նա պետք է գրավոր դիմում ներկայացնի ԿԸՀ: (100.8)
- Վրաստանի նախագահի թեկնածուն ցանկացած ժամանակ իրավունք ունի հանել իր թեկնածությունը քվեարկությունից ոչ ուշ, քան 5 օր առաջ, ինչի համար նա պետք է գրավոր դիմում ներկայացնի ԿԸՀ:
- Վրաստանի նախագահի թեկնածուն ցանկացած ժամանակ իրավունք ունի հանել իր թեկնածությունը քվեարկությունից ոչ ուշ, քան 10 օր առաջ, ինչի համար նա պետք է հայտարարություն պետք է տարածի զանգվածային լրատվության միջոցներով:
- Վրաստանի նախագահի թեկնածուն իրավունք ունի ցանկացած ժամանակ, ոչ ուշ, քան ընտրություններից 3 օր առաջ հանել իր թեկնածությունը, ինչի համար նա պետք է հայտարարություն տարածի զանգվածային լրատվության միջոցներով:

532. Ի՞նչ տեղեկություն պետք է ներառի Վրաստանի նախագահի թեկնածուի գրանցման վերաբերյալ Վրաստանի խորհրդարանի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակված հաղորդագրությունը:

- Նախագահի թեկնածուի միայն անունը և ազգանունը:

- Նախագահի թեկնածուի անունը և ազգանունը: Ցանկալի է լրացուցիչ նշել թեկնածուի ծննդյան տարեթիվը:
- Նախագահի թեկնածուի անունը և ազգանունը: Ցանկալի է լրացուցիչ նշել թեկնածուի մասնագիտությունը:
- Նախագահի թեկնածուի անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, պաշտոնը (գործունեությունը) և աշխատանքի վայրը: (100.7)

Վրաստանի նախագահի թեկնածուի գործունեության երաշխիքները (հոդված 103)

533. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահի թեկնածուին հնարավոր է ազատել աշխատանքից կամ տեղափոխել այլ աշխատանքի կամ պաշտոնի՝ առանց նրա համաձայնության:
- Վրաստանի նախագահի թեկնածուին հնարավոր է ազատել աշխատանքից կամ տեղափոխել այլ աշխատանքի կամ պաշտոնի՝ խորհրդարանի նախագահի համաձայնությամբ:
- Չի կարելի Վրաստանի նախագահի թեկնածուին աշխատանքից ազատել կամ տեղափոխել այլ աշխատանքի կամ պաշտոնի առանց խորհրդարանի նախագահի համաձայնության:
- Չի կարելի Վրաստանի նախագահի թեկնածուին աշխատանքից ազատել կամ տեղափոխել այլ աշխատանքի կամ պաշտոնի առանց նրա համաձայնության: (103.1)

Ընտրական կոլեգիա (հոդված 103¹)

534. Ընտրական կոլեգիայի կազմը ներառում է.

- 150 անդամ:
- 200 անդամ:
- 300 անդամ: (103¹.1)
- 350 անդամ:

535. Ո՞վ և ինչպիսի՞ իրավական ակտով է հաստատում Վրաստանի նախագահի ընտրությունների միջոցառումների իրականացման ժամանակացույցը և ընտրական կոլեգիայի կազմը:

- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարգադրությամբ: (103².6,7)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը կարգադրությամբ:
- Վրաստանի խորհրդարանը կարգադրությամբ:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարգադրությամբ հաստատում է ընտրական միջոցառումների ժամանակացույցը, իսկ Վրաստանի խորհրդարանը կարգադրությամբ հաստատում է ընտրական հանձնաժողովի կազմը:

536. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ընտրությունների առաջին փուլում ընտրված կհամարվի Վրաստանի նախագահի այն թեկնածուն, որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն մեկ երրորդը:
- Ընտրությունների առաջին փուլում ընտրված կհամարվի Վրաստանի նախագահի այն թեկնածուն, որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն երկու երրորդը: (103³.7)
- Ընտրությունների առաջին փուլում ընտրված կհամարվի Վրաստանի նախագահի այն թեկնածուն, որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն կեսը:
- Ընտրությունների առաջին փուլում ընտրված կհամարվի Վրաստանի նախագահի այն թեկնածուն, որը կստանա ընտրական կոլեգիայի ամբողջական կազմի ձայների առնվազն մեկ քառորդը:

537. Եթե ընտրությունների առաջին փուլում Վրաստանի նախագահ չի ընտրվում՝

- Նշանակվում են արտահերթ ընտրություններ:
- Նշանակվում են հերթական ընտրություններ:
- Նշանակվում է ընտրությունների երկրորդ փուլ: (103³.8)
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

538. Ի՞նչ ժամկետում են անցկացվում Վրաստանի նախագահի կրկնական ընտրությունները, եթե ընտրությունները չեն կայացել կամ ընտրական կոլեգիան չի ընտրել Վրաստանի նախագահ:

- 60-օրյա ժամկետում:
- 50-օրյա ժամկետում:
- 45-օրյա ժամկետում:
- 30-օրյա ժամկետում: (103³.12)

539. Ո՞վ է նշանակում Վրաստանի նախագահի արտահերթ ընտրությունների օրը:

- Վրաստանի խորհրդարանը: (103³. 15)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- ԿԸՀ նախագահը խորհրդարանի համաձայնությամբ:
- Նախագահի պաշտոնակատարը:

540. Եթե նախագահի ընտրությունների առաջին փուլում ոչ մի թեկնածու չկարողանա ստանալ անհրաժեշտ թվով ձայներ, ո՞վ է նշանակում ընտրությունների երկրորդ փուլը:

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի խորհրդարանի նախագահը: (103³.8)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

541. Վրաստանի նախագահի ընտրությունների երկրորդ փուլում, եթե թեկնածուները հավաքեն հավասար թվով ձայներ, ո՞ր թեկնածուն կհամարվի ընտրված:

- Այն թեկնածուն, որն առաջին փուլում ամենաշատ ձայներ է ստացել: (103³.10)
- Ոչ մի թեկնածու ընտրված չի համարվի:

- Կանցկացվի երրորդ փուլ:
- Այն թեկնածուն, որը երրորդ փուլում ամենաշատ ձայներ է ստացել:

542. Ո՞վ իրավունք ունի ներկա գտնվել Վրաստանի նախագահի ընտրություններին:

- Ընտրական կոլեգիայի անդամները:
- Վրաստանի խորհրդարանի նախագահի կողմից հրավիրված անձինք:
- Բոլոր պատասխանները ճիշտ են: (103^{3.2})
- ԿԸՀ անդամները:

543. Ո՞ր պնդումն է ճիշտ:

Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում քվեարկության են դրվում.

- Ընտրությունների առաջին փուլում լավագույն արդյունքներ գրանցած երեք թեկնածուները:
- Ընտրությունների առաջին փուլում լավագույն արդյունք գրանցած չորս թեկնածուները:
- Առաջին փուլում լավագույն արդյունք գրանցած երկու թեկնածուները: (103^{3.9})
- Առաջին փուլին չմասնակցած թեկնածուները:

544. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի պալատում՝ ընտրությունների օրվա ժամը 9-ից և ավարտվում նույն օրը ժամը 14-ին, կամ ցանկացած ժամանակ, եթե քվեարկել են ընտրական կոլեգիայի բոլոր անդամները:
- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի խորհրդարանի պալատում՝ ընտրությունների օրվա ժամը 8-ից և ավարտվում նույն օրը ժամը 20-ին, կամ ցանկացած ժամանակ, եթե քվեարկել են ընտրական կոլեգիայի բոլոր անդամները:
- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի նախագահի պալատում՝ ընտրությունների օրվա ժամը 8-ից և ավարտվում նույն օրը ժամը 20-ին, կամ ցանկացած ժամանակ, եթե քվեարկել են ընտրական կոլեգիայի բոլոր անդամները:
- Վրաստանի նախագահի ընտրություններն անցկացվում են Վրաստանի խորհրդարանի պալատում՝ ընտրությունների օրվա ժամը 9-ից և ավարտվում նույն օրը ժամը 14-ին, կամ ցանկացած ժամանակ, եթե քվեարկել են ընտրական կոլեգիայի բոլոր անդամները: (103^{3.1})

545. Քվեաթերթիկն անվավեր չի համարվում, եթե.

- Ընտրական կոլեգիայի անդամը քվեարկել է մեկ թեկնածուի օգտին: (103^{3.6})
- Ընտրական կոլեգիայի անդամը քվեարկել է մեկից ավելի թեկնածուների օգտին:
- Այն չսահմանված նմուշի է:
- Անհնար է որոշել, թե որ թեկնածուին է քվեարկել ընտրական կոլեգիայի անդամը:

Ընտրությունների արդյունքների ամփոփումը (հոդված 104)

546. Ի՞նչ ժամկետում է ԿԸՀ-ն ամփոփում նախագահի ընտրությունների արդյունքները:

- Ընտրությունների ավարտից հետո, 5-րդ օրը:
- Ընտրությունների ավարտից հետո, 19-րդ օրը:

- Ընտրությունների ավարտից հետո, 3-րդ օրը:
- Ընտրություններն ավարտվելուն պես: (104.1)

547. Քանի՞ օրինակից է կազմվում Վրաստանի նախագահի ընտրությունների ամփոփիչ արձանագրությունը:

- Վրաստանի նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է 3 օրինակից, որոնցից մեկն ուղարկվում է Վրաստանի նախագահին, երկրորդը՝ Վրաստանի խորհրդարան, իսկ երրորդը պահվում է ԿԸՀ-ում: (104.5)
- Վրաստանի նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկն ուղարկվում է Վրաստանի նախագահին, մյուսը պահվում է ԿԸՀ-ում:
- Վրաստանի նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է 4 օրինակից, որոնցից մեկն ուղարկվում է Վրաստանի նախագահին, երկրորդը՝ Վրաստանի խորհրդարան, երրորդը՝ Վրաստանի կառավարություն, իսկ չորրորդը պահվում է ԿԸՀ-ում:
- Վրաստանի նախագահի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմվում է 1 օրինակից, որը պահվում է ԿԸՀ-ում:

Վրաստանի խորհրդարանի ընտրությունների նշանակումը (հոդված 108)

548. Ո՞վ է նշանակում Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունների օրը:

- Վրաստանի խորհրդարանը՝ Վրաստանի վարչապետի վավերացրությամբ:
- Վրաստանի վարչապետը՝ Վրաստանի նախագահի վավերացրությամբ:
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի նախագահը: (108.2)

549. Ե՞րբ են անցկացվում Վրաստանում խորհրդարանի հերթական ընտրությունները:

- Խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:
- Խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի վերջին շաբաթ օրը: (108.1)
- Խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա նոյեմբերի առաջին շաբաթ օրը:
- Խորհրդարանի լիազորության ժամկետը լրանալու օրացուցային տարվա հոկտեմբերի առաջին շաբաթ օրը:

550. Ո՞րն է խորհրդարանական ընտրությունների անցկացման համար խոչընդոտող հանգամանք:

- ԿԸՀ անդամների 2/3-ի թարմացումը:
- Վրաստանի Եվրամիությանը անդամակցության հարցի քննարկման ընթացքը:
- Արտակարգ դրության առկայությունը: (108.3)
- Իմպիչմենտի կարգով Նախագահին պաշտոնից ազատելը:

Վրաստանի խորհրդարանի ընտրության կարգը և լիազորության ժամկետը (հոդված 109)

551. Ի՞նչ ժամկետով է ընտրվում Վրաստանի խորհրդարանը:

- 5 տարի ժամկետով:
- 4 տարի ժամկետով: (109.2)
- Սահմանված չէ:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Պասիվ ընտրական իրավունք (հոդված 111)

552. Քանի՞ տարեկանից կարող է անձը ընտրվել Վրաստանի խորհրդարանի անդամ:

- Անձը, որի 21 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը:
- Անձը, որի 25 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը: (111.1)
- Անձը, որի 23 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը:
- Անձը, որի 20 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը:

553. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել Վրաստանի ընտրական իրավունք ունեցող քաղաքացին 21 տարեկան հասակից, որը տիրապետում է վրացերենին:
- Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել Վրաստանի ընտրական իրավունք ունեցող քաղաքացին 25 տարեկան հասակից, որը 2 տարվա ընթացքում ապրել է Վրաստանում:
- Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել Վրաստանի ընտրական իրավունք ունեցող քաղաքացին 21 տարեկան հասակից, որը Վրաստանում ապրել է գոնե 5 տարի: Վրաստանի խորհրդարանի անդամ չի կարող ընտրվել դատարանի որոշմամբ ազատազրկման դատապարտված անձը:
- Վրաստանի խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին, որի 25 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը և գոնե 10 տարի բնակվել է Վրաստանում: Վրաստանի խորհրդարանի անդամ չի կարող ընտրվել դատարանի որոշմամբ ազատազրկման դատապարտված անձը: (111.1, 111.2)

554. Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրություններին մասնակցելու իրավունք ունի.

- Օրենքով սահմանված կարգով գրանցված միայն այն քաղաքական կուսակցությունը, որն ունի իր առաջադրմամբ ընտրված խորհրդարանի անդամ ընտրությունների նշանակումից 6 ամիս առաջ:

- Օրենքով սահմանված կարգով գրանցված միայն այն քաղաքական կուսակցությունը, որն ունի իր առաջադրմամբ ընտրված խորհրդարանի անդամ ընտրությունների նշանակումից 3 ամիս առաջ:
- Օրենքով սահմանված կարգով գրանցված միայն այն քաղաքական կուսակցությունը, որն ունի իր առաջադրմամբ ընտրված խորհրդարանի անդամ ընտրությունների նշանակման պահի դրությամբ, կամ որի աջակցությունը օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 5 000 ընտրողի ստորագրությամբ:
- Օրենքով սահմանված կարգով գրանցված միայն այն քաղաքական կուսակցությունը, որն ունի իր առաջադրմամբ ընտրված խորհրդարանի անդամ ընտրությունների նշանակման պահի դրությամբ, կամ որի աջակցությունը օրենքով սահմանված կարգով հաստատված է առնվազն 25 000 ընտրողի ստորագրությամբ: (111.4)

Վրաստանի խորհրդարանի պատգամավորության թեկնածուի կարգավիճակի անհամատեղելիությունը պաշտոնական դիրքի հետ (հոդված 112)

555. Ո՞րը խորհրդարանի անդամության թեկնածուի կարգավիճակի հետ անհամատեղելի պաշտոն չէ:

- Վրաստանի նախագահ:
- Գլխավոր աուդիտորի տեղակալ:
- Մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամ: (112.1)
- Դատախազի տեղակալ:

Կուսակցությունների գրանցումը/գրանցման չեղարկումը (հոդված 113)

556. Ո՞վ է չեղարկում կուսակցության ընտրական գրանցումը:

- Վրաստանի խորհրդարանը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշումով:
- Խորհրդարանի նախագահը կարգադրությամբ:
- ԿԸՀ նախագահը կարգադրությամբ: (113.12)

557. Ո՞ւմ պետք է դիմի Վրաստանի խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ստանալու համար կուսակցությունը իր ղեկավար անձի (անձանց) կողմից ստորագրված համապատասխան դիմումով:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին: (113.1, 197.1)
- Վրաստանի Սահմանադրական դատարանին:
- Պետական աուդիտի ծառայությանը:

558. Ինչպիսի՞ իրավական ակտով է իրականացվում կուսակցության ընտրական գրանցման մերժումը:

- ԿԸՀ նախագահի կարգադրությամբ: (113.10, 197.10)

- ԿԸՀ կարգադրությամբ:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ:
- ԿԸՀ որոշումով:

559. Ո՞ր դեպքում է չեղարկվում կուսակցության ընտրական գրանցումը:

- Եթե կուսակցությունը չունի ներկայացուցիչ նախորդ գումարման խորհրդարանում:
- Եթե ընտրությունների օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ նրա կուսակցության ցուցակում թեկնածուների թիվը պակաս է օրենքով սահմանված նվազագույն թվից: (113.12)
- Եթե կուսակցության գործունեությունն արգելվել է Գերագույն դատարանի կողմից:
- Բոլոր պատասխանները ճիշտ են:

Կուսակցական ցուցակների ներկայացումը (հոդված 115)

560. Քանի՞ կուսակցական ցուցակ ներկայացնելու իրավունք ունի ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունը:

- Ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունն իրավունք ունի ներկայացնելու մեկ կուսակցական ցուցակ: (115.2)
- Ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունն իրավունք ունի ներկայացնելու երկու կուսակցական ցուցակ:
- Ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունն իրավունք ունի ներկայացնելու երեք կուսակցական ցուցակ:
- Ընտրություններին ինքնուրույն մասնակցող կուսակցությունն իրավունք ունի ներկայացնելու հինգ կուսակցական ցուցակ:

561. Կարելի՞ է նույն անձին ընդգրկել տարբեր կուսակցական ցուցակներում:

- Կարելի է:
- Թույլ չի տրվում: (115.5)
- Ընդունելի է:
- Նայած որ դեպքում:

562. Ի՞նչ տվյալներ նշելու անհրաժեշտություն չկա կուսակցության ցուցակում՝ կապված յուրաքանչյուր թեկնածուի հետ:

- Ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Պաշտոնը:
- Մայրենի լեզուն: (115.9)
- Աշխատավայրը:

563. Կուսակցության ցուցակում չպետք է նշվի յուրաքանչյուր թեկնածուի.

- Պաշտոնը:
- Աշխատավայրը:
- Սեռը:
- Զինվորական ծառայության նկատմամբ հարաբերությունը: (115.9)

564. Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուի հաշվառման քարտում չպետք է նշվի.

- Ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:
- Հասցեն:
- Ստորագրությունը:
- Սոցիալական կարգավիճակը: (115.10)

565. Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունների ժամանակ կուսակցությունների կողմից առաջադրված կուսակցական ցուցակներում թեկնածուների թիվը չպետք է լինի.

- 120-ից պակաս և 200-ից ավելի:
- 30-ից պակաս և 200-ից ավելի: (115.3)
- 150-ից պակաս և 250-ից ավելի:
- 130-ից պակաս և 250-ից ավելի:

566. Կուսակցական ցուցակում պետք է նշվի յուրաքանչյուր թեկնածուի.

- Վրաստանի քաղաքացու անձնական համարը: (115.9.է)
- Անձի հասակը:
- Արտաքին հատկանիշները:
- Տեղեկություններ նրա անցյալի մասին:

567. Կուսակցական ցուցակում պետք է նշվի յուրաքանչյուր թեկնածուի.

- Անձնային հատկանիշները:
- Վրաստանի քաղաքացու անձնական համարը: (115.9.դ)
- Ամուսնու Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականի համարը:
- Տեղեկություններ ամուսնու մասին:

568. Կուսակցական ցուցակում պետք է նշվի յուրաքանչյուր թեկնածուի.

- Աշխատավայրը: (115.9.ե)
- Աշխատավարձի չափը:
- Լրացուցիչ եկամտի աղբյուրը:
- Նրանք ունեն արդյոք ժառանգություն:

Կուսակցական ցուցակի ընտրական գրանցումը (հոդված 117)

569. Խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցական ցուցակի գրանցումն իրականացնում է.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը: (117.1)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

570. ԿԸՀ նախագահը ցուցակի գրանցումն իրականացնում է.

- Վճռով:

- Հրամանով:
- Որոշումով:
- Կարգադրությամբ: (117.1)

571. Փաստաթղթերի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի խախտման դեպքում ընտրական գրանցման հարցը.

- Չի ուսումնասիրվում:
- Չի քննարկվում: (117.1)
- Քննարկվում է:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

572. Կուսակցության կուսակցական ցուցակի գրանցման մերժումը Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հրապարակվում է.

- Հրամանով:
- Որոշումով:
- Բանաձևով:
- Կարգադրությամբ: (117.3)

573. Եթե կուսակցական ցուցակի այն մասում, որը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին, մնացել է սահմանված նվազագույն թվից պակաս թեկնածու.

- Կուսակցական ցուցակը միևնույն է կգրանցվի:
- Կգրանցվի կուսակցական ցուցակի մնացած մասը:
- Կգրանցվեն միայն կուսակցական ցուցակում ընդգրկված մեծամասնական թեկնածուները:
- Չեն գրանցվի ոչ կուսակցական ցուցակները, ոչ էլ առաջադրված թեկնածուները: (117.3)

574. Ո՞ւմ որոշումով կարող է չեղարկվել Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուի ընտրական գրանցումը, եթե նրա կողմից ներկայացված դիմումները և փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

- ԿԸՀ որոշումով:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումով:
- ԿԸՀ նախագահի կարգադրությամբ: (117.4)
- Միայն դատարանի վճռով:

Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածու առաջադրելու մասին որոշման չեղարկումը (հոդված 120)

575. Քվեարկությունից որքա՞ն ժամանակ առաջ Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուն իրավունք ունի հրաժարվել ընտրությունների մասնակցելուց:

- Ոչ ուշ, քան 16 օր առաջ: (120.1)
- Ոչ ուշ, քան 11 օր առաջ:
- Ոչ ուշ, քան 10 օր առաջ:

- Ոչ ուշ, քան 9 օր առաջ:

576. Կուսակցության կողմից առաջադրված խորհրդարանի անդամության թեկնածուն ո՞ր իրավական ակտով կհանվի կուսակցական ցուցակից:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ:
- ԿԸՀ քարտուղարի կարգադրությամբ:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական քարտուղարի կարգադրությամբ:
- ԿԸՀ նախագահի կարգադրությամբ: (120.2)

577. Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուն ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու մասին դիմումը պետք է ներկայացնի.

- Առաջադրող կուսակցությանը:
- Խորհրդարանի անդամության թեկնածուն իրավունք չունի հրաժարվել ընտրություններին մասնակցելուց:
- Հարցը որոշվում է կուսակցության/ընտրական դաշինքի կանոնադրությամբ:
- Համապատասխան ընտրական հանձնաժողովին: (120.1)

Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուին ծառայողական պարտականության կատարումից ազատելը (հոդված 121)

578. Վրաստանի խորհրդարանի անդամության թեկնածուին սեփական դիմումի և համապատասխան վկայական ներկայացնելու հիման վրա նախընտրական քարոզարշավի ժամկետով արդյոք տրվո՞ւմ է չվճարվող արձակուրդ:

- Տրվում է: (121)
- Չի տրվում:
- Տրվում է կուսակցության ղեկավար անձի համաձայնությամբ.
- Տրվում է ԿԸՀ համաձայնությամբ:

Ձայների հաշվելը տեղամասային ընտրական հանձնաժողովում (հոդված 123)

579. Վրաստանի խորհրդարանի ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմում է.

- Մեծամասնական ընտրակարգով:
- Ըստ կուսակցական ցուցակների: (123)
- Ըստ առաջադրված թեկնածուների:
- Հորիզոնական համակարգով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքների ամփոփումը (հոդված 124)

580. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացված փաթեթները բացելու և քվեաթերթիկները վերահաշվարկելու մասին որոշումը կայացնում է.

- Հրամանով:
- Որոշումով:
- Բանաձևով:
- Կարգադրությամբ: (124.2)

Ընտրությունների արդյունքների ամփոփումը ԿԸՀ-ում (հոդված 125)

581. ԿԸՀ-ի կողմից Վրաստանի խորհրդարանական ընտրությունների արդյունքների ամփոփման առնչությամբ կազմված արձանագրության.

- Մեկ օրինակը պահվում է ԿԸՀ-ում, մյուսը փոխանցվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Մեկ օրինակը պահվում է ԿԸՀ-ում, մյուսը փոխանցվում է Վրաստանի նախագահին:
- Մեկ օրինակը պահվում է ԿԸՀ-ում, մյուսը փոխանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին:
- Մեկ օրինակը պահվում է ԿԸՀ-ում, մյուսը փոխանցվում է Ե Վրաստանի խորհրդարանին: (125.2)

582. Եթե երկու կամ ավելի կուսակցական ցուցակների ստացած ձայների թիվը հավասար լինի, մանդատը կտրվի այն ցուցակին, որն ավելի վաղ է գրանցվել.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովում:
- Ձայները հաշվող հանձնաժողովում:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովում: (125.9)

583. Վրաստանի խորհրդարանի ընտրությունների ժամանակ կրկնաքվեարկություն է նշանակվում այն դեպքում, եթե այն ընտրատեղամասերում, որտեղ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել, Վրաստանի ընտրողների ընդհանուր թվի.

- 7%-ից ավելի է:
- 10%-ից պակաս է:
- 10%-ից ավելի է: (125.17)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

584. Ի՞նչ է լինում, եթե Վրաստանի խորհրդարանի ընտրությունների ժամանակ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել ընտրատարածքների կեսից ավելիում կամ մի քանի ընտրատարածքներում, որոնցում ընտրողների ընդհանուր թիվը Վրաստանի ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելին է:

- Ընտրողների թվի համամասնությամբ կչեղարկվեն մանդատները, և խորհրդարանը կսկսի աշխատել ընտրված անդամների կազմով:

- Ընտրությունների արդյունքները համարվում են անվավեր, և ԿԸՀ-ն նշանակում է կրկնական ընտրություններ: (125.13)
- Ընտրությունների արդյունքները համարվում են անվավեր, և ԿԸՀ-ն նշանակում է կրկնաքվեարկություն:
- Ընտրություններ կնշանակվեն միայն այն ընտրատարածքներում, որտեղ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել:

585. Վրաստանի խորհրդարանի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ չի նշվում.

- Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների ընդհանուր թիվը:
- Անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը:
- Քվեարկության օրը վնասված քվեաթերթիկների թիվը: (125.18)
- Այն ընտրատարածքների և ընտրատեղամասերի համարները, որտեղ ընտրությունները ճանաչվել են անվավեր, ինչպես նաև դրանցում ընտրողների թիվը և ընտրություններն անվավեր ճանաչելու պատճառները:

586. Վրաստանի խորհրդարանի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ չի նշվում.

- Ընտրությանը մասնակցած ընտրողների թիվը:
- Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների տոկոսը:
- Քվեարկության օրը չօգտագործված քվեաթերթիկների թիվը: (125.18)
- Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած մանդատների թիվը:

587. Վրաստանի խորհրդարանի ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ չի նշվում.

- Վրաստանի ընտրողների ընդհանուր թիվը:
- Արտերկրում ստեղծված ընտրական տեղամասերում գրանցված ընտրողների թիվը (125.18²):
- Ըստ ներկայացնող ընտրական սուբյեկտների դասավորած Վրաստանի խորհրդարանի ընտրված անդամների ցուցակը՝ նրանց կուսակցական պատկանելության նշմամբ:
- Այն ընտրատարածքների և ընտրական տեղամասերի համարները, որտեղ ընտրություններն անվավեր են ճանաչվել և կրկաքվեարկություն չի անցկացվել:

588. Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփիչ արձանագրության հիման վրա ո՞ր քաղաքական կուսակցությունների վրա են բաշխվելու Վրաստանի խորհրդարանի անդամների մանդատները:

- Քաղաքական կուսակցությունների վրա, որոնք ստացել են ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների առնվազն 3 տոկոսը:
- Քաղաքական կուսակցությունների վրա, որոնք ստացել են ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների առնվազն 5 տոկոսը: (125.4)
- Քաղաքական կուսակցությունների վրա, որոնք ստացել են ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների առնվազն 2 տոկոսը:

- Քաղաքական կուսակցությունների վրա, որոնք ստացել են ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների առնվազն 4 տոկոսը:

589. Ի՞նչ է լինում այն դեպքում, եթե Վրաստանի խորհրդարանի հերթական ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփիչ արձանագրության հիման վրա ընտրություններին մասնակցած ընտրողների առնվազն 5 տոկոսը ստացած քաղաքական կուսակցությունների ստացած մանդատների գումարը լինի 150-ից պակաս:

- Չբաշխված մանդատներն ամբողջությամբ կստանա լավագույն արդյունք ունեցող քաղաքական կուսակցությունը:
- Չբաշխված մանդատներն ամբողջությամբ կստանա ամենավատ արդյունք ունեցող քաղաքական կուսակցությունը:
- Չբաշխված մանդատները հաջորդաբար կստանան ամենավատ արդյունք ունեցող քաղաքական կուսակցությունները:
- Չբաշխված մանդատները հաջորդաբար կստանան ամենավատ արդյունք ունեցող քաղաքական կուսակցությունները: (125.5)

590. Ի՞նչ տեսակի իրավական ակտով է ԿԸՀ-ն որոշում կայացնում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովից ստացված կապարակնքված փաթեթները բացելու և քվեաթերթիկները վերահաշվարկելու մասին, եթե առկա է քվեարկության արդյունքների ստուգման կամ անվավեր ճանաչելու պահանջով դիմում/բողոք:

- ԿԸՀ որոշումով:
- ԿԸՀ նախագահի հրամանով:
- ԿԸՀ-ն նման իրավասություն չունի:
- ԿԸՀ կարգադրությամբ: (125.14)

Վրաստանի խորհրդարանի կրկնական ընտրությունները (հոդված 127)

591. Ստորև թվարկված ո՞ր դեպքում են անցկացվում Վրաստանի խորհրդարանի կրկնական ընտրություններ:

- Եթե որևէ քաղաքական կուսակցություն բողոքարկել է ընտրությունների արդյունքները:
- Եթե ընտրությունները հայտարարվել են չանցկացված: (127.1)
- Եթե մեկ ընտրատարածքում ընտրությունների արդյունքներն անվավեր են ճանաչվել:
- Եթե որևէ ընտրական տեղամասում ընտրությունների արդյունքներն անվավեր են ճանաչվել:

592. Վրաստանի խորհրդարանական ընտրություններն անվավեր հայտարարելուց հետո ի՞նչ ժամկետում պետք է անցկացվեն կրկնական ընտրություններ:

- Չանցկացված հայտարարելու պահից 1 ամսվա ժամկետում:
- Չանցկացված հայտարարելու պահից 2 ամսվա ժամկետում: (127.2)
- Չանցկացված հայտարարելու պահից 3 շաբաթվա ժամկետում:
- Չանցկացված հայտարարելու պահից 2 շաբաթվա ժամկետում:

593. Եթե Վրաստանում հերթական խորհրդարանական ընտրությունների արդյունքների նախատեսմամբ անհրաժեշտ դարձավ կրկնական ընտրություններ անցկացնել, ո՞ր կուսակցությունն իրավունք կունենա մասնակցելու կրկնական ընտրություններին:

- Միայն այն կուսակցությունները, որոնք համապետական ընտրություններում ստացել են ձայների ոչ պակաս, քան 2 տոկոսը: (127.4)
- Միայն այն կուսակցությունները, որոնք համապետական ընտրություններում ստացել են ձայների ոչ պակաս, քան 1 տոկոսը:
- Միայն այն կուսակցությունները, որոնք համապետական ընտրություններում ստացել են ձայների գոնե 1 տոկոսը:
- Բոլոր այն կուսակցությունները, որոնք մասնակցել են համապետական ընտրություններին՝ անկախ նրանց կողմից ստացած ձայների քանակից:

594. Ի՞նչ իրավական փաստաթղթով է ԿԸՀ-ն նշանակում խորհրդարանի կրկնական ընտրությունների ամսաթիվը:

- Հրամանով:
- Որոշումով:
- Կարգադրությամբ: (127.2)
- Հրամանագրով:

595. Եթե խորհրդարանական ընտրությունները հայտարարվել են անցկացված, բայց ոչ մի կուսակցություն չի կարողացել ստանալ ընտրություններին մասնակցող ընտրողների ձայների 5 տոկոսը, ի՞նչ ժամկետում է անցկացվում կրկնական քվեարկություն:

- Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո մեկամսյա ժամկետում:
- Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո 45 օրվա ժամկետում :
- Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո 2 շաբաթվա ժամկետում: (127.3)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Վրաստանի խորհրդարանի արտահերթ ընտրությունները (հոդված 128)

596. Ո՞վ է նշանակում Վրաստանի խորհրդարանի արտահերթ ընտրությունների օրը:

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի նախագահը: (128)
- Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի վարչապետը:

Ընտրված Վրաստանի խորհրդարանի անդամների գրանցումը (հոդված 131)

597. Ո՞ր մարմինն է տալիս ընտրված խորհրդարանի անդամներին ժամանակավոր վկայականներ Վրաստանի խորհրդարանի անդամ ընտրվելու մասին:

- ԿԸՀ նախագահը:
- ԿԸՀ-ն: (131)
- Վրաստանի նախագահի վարչակազմը:

- Վրաստանի խորհրդարանի վարչակազմը:

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի և ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի ղեկավարի ընտրությունների նշանակումը (հոդված 133)

598. Ե՞րբ են անցկացվում մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի հերթական ընտրությունները:

- Հերթական ընտրությունների տարվա հոկտեմբերի վերջին շաբաթ օրը:
- Հերթական ընտրությունների տարվա հոկտեմբերի երրորդ շաբաթ օրը:
- Հերթական ընտրությունների տարվա հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:
- Հերթական ընտրությունների տարվա հոկտեմբերի առաջին շաբաթ օրը: (133.1)

599. Ո՞վ է նշանակում մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի հերթական ընտրությունները:

- Վրաստանի խորհրդարանը՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ:
- Վրաստանի նախագահը՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ: (133. 2)
- Վրաստանի խորհրդարանը՝ Վրաստանի նախագահի համաստորագրությամբ:
- Վրաստանի վարչապետը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահի համաստորագրությամբ:

Ակտիվ և պասիվ ընտրական իրավունք (հոդված 134)

600. Ո՞վ կարող է ընտրվել մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամ:

- Վրաստանի քաղաքացին, որի 18 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը և Վրաստանում բնակվել է առնվազն 5 տարվա ընթացքում:
- Վրաստանի քաղաքացին, որի 21 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը և Վրաստանում բնակվել է գոնե 4 ամիս:
- Վրաստանի քաղաքացին, որի 21 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը և Վրաստանում բնակվել է գոնե 6 ամիս: (134.1)
- Վրաստանի քաղաքացին, որի 20 տարին լրացել է մինչև քվեարկության օրը կամ լրանում է քվեարկության օրը և Վրաստանում բնակվել է առնվազն 6 տարվա ընթացքում:

601. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրություններին մասնակցում են ընտրությունների նշանակման օրվա դրությամբ Վրաստանի սահմաններից դուրս մշտապես բնակվող ընտրողները:

- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրություններին մասնակցում են ընտրությունների օրը Վրաստանի սահմաններից դուրս ժամանակավորապես գտնվող ընտրողները:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրություններին մասնակցում են այն երկքաղաքացիություն ունեցող ընտրողները, որոնք ընտրությունների օրը ժամանակավորապես գտնվում են Վրաստանի սահմաններից դուրս:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրություններին չեն մասնակցում ընտրությունների նշանակման օրվա դրությամբ Վրաստանի սահմաններից դուրս մշտապես բնակվող ընտրողները: (134.6)

602. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնում ընտրվելու համար կարելի՞ է արդյոք, որ Վրաստանի քաղաքացին միաժամանակ լինի այլ ներկայացուցչական մարմնի անդամ:

- Չի կարելի: (134.3)
- Կարելի է՝ Նախագահի որոշումով բացառիկ դեպքերում:
- Կարելի է միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է միաժամանակ խորհրդարանի և մունիցիպալիտետի անդամությանը:
- Թույլ չի տրվում, բացառությամբ մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամության:

603. Ո՞ր պահանջը չի ներկայացվում մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամության թեկնածուին:

- Վրաստանի քաղաքացիություն:
- Վրաստանում գոնե 6 ամիս բնակվելու փաստ:
- 21 տարեկան հասակ:
- Բարձրագույն կրթություն: (134.1)

Մունիցիպալիտետի մարմինների լիազորությունների ժամկետները (հոդված 135)

604. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետը/համայնքապետը ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, բաց քվեարկությամբ, 4 տարի ժամկետով:
- Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետը/համայնքապետը ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 3 տարի ժամկետով:
- Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետը/համայնքապետը ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 4 տարի ժամկետով: (165.2,135.1)
- Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետը/համայնքապետը նշանակվում է Վրաստանի նախագահի կողմից, 3 տարի ժամկետով:

605. Հերթական ընտրություններում ընտրված ինքնակառավարվող քաղաքի՝ Թբիլիսիի քաղաքապետի լիազորության ժամկետն է.

- 5 տարի:
- 4 տարի: (135.1)
- 3 տարի:
- 2 տարի:

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամության թեկնածուի, ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի թեկնածուի կարգավիճակի անհամատեղելիությունը նրա պաշտոնական դիրքի հետ (հոդված 136)

606. Սակրեբուլոյի անդամության թեկնածու առաջադրվելու դեպքում չի կասեցվում ծառայողական լիազորությունը.

- Պետական լիազորի և նրա տեղակալների:
- Վրաստանի ներքին գործերի նախարարության շարքայինների: (136.1)
- Պաշտպանության նախարարության սպաների:
- Վրաստանի հանրային պաշտպանի տեղակալի:

607. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամության թեկնածու առաջադրվելու դեպքում լիազորությունը կասեցվում է.

- Պետական լիազորի տեղակալի: (136.1.է)
- ԿԸՀ աշխատակազմի աշխատակցի:
- Դատավորի օգնականի:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

608. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամության թեկնածու առաջադրվելու դեպքում, ծառայողական լիազորությունը չի կասեցվում.

- Վրաստանի խորհրդարանի անդամների: (136.1)
- Գլխավոր աուդիտորի և նրա տեղակալի:
- Վրաստանի Ազգային բանկի խորհրդի անդամների:
- Վրաստանի նախագահի օգնականների:

Ընտրական տարածքներ (հոդված 137)

609. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների համար յուրաքանչյուր անկախ ինքնակառավարվող միավոր հանդիսանում է.

- Մեկ ընտրական տարածք: (137.1)
- Երկու ընտրական տարածք:
- Երեք տեղական ընտրական տարածք:
- Չորս տեղական ընտրական տարածք:

Ընտրական համակարգը (հոդված 138)

610. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններն անցկացվում են.

- Միայն մեծամասնական ընտրակարգի հիման վրա:
- Միայն համամասնական ընտրակարգի հիման վրա:
- Մեծամասնական և համամասնական ընտրակարգերի հիման վրա: (138)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Ընտրական իրավունքը (հոդված 139)

611. Քանի՞ ձայնի իրավունք ունի ընտրողը ինքնակառավարվող քաղաքի/համայնքի սակրեբուլոյի ընտրությունների ժամանակ:

- Յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայն:
- Մեկ ձայնի իրավունք՝ համամասնական ընտրակարգով, և մեկ ձայնի իրավունք՝ մեծամասնական ընտրակարգով: (139)
- Յուրաքանչյուր ընտրող ունի առնվազն երկու ձայնի իրավունք:
- Յուրաքանչյուր ընտրող ունի նույն թվով ձայների իրավունք, որքան ընտրվելիք անդամ կա համապատասխան սակրեբուլոյում:

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի կազմը և մեծամասնական տարածքների սահմանները (հոդված 140)

612. Սակրեբուլոյի քանի՞ անդամ է ընտրվում մեծամասնական ընտրակարգով այն ինքնակառավարվող համայնքի վարչական կենտրոնում, որտեղ ընտրողների թիվը 4000-ից ավելի է, բայց չի գերազանցում 10 000-ը:

- 3 անդամ:
- 2 անդամ: (140.1)
- 4 անդամ:
- 5 անդամ:

613. Սակրեբուլոյի քանի՞ անդամ է ընտրվում մեծամասնական ընտրակարգով այն ինքնակառավարվող համայնքի վարչական կենտրոնում, որտեղ ընտրողների թիվը 10 000-ից ավելի է, բայց չի գերազանցում 20 000-ը:

- 3 անդամ: (140.1)
- 10 անդամ:
- 5 անդամ:
- 2 անդամ:

614. Սակրեբուլոյի քանի՞ անդամ է ընտրվում մեծամասնական ընտրակարգով այն ինքնակառավարվող համայնքի վարչական կենտրոնում, որտեղ ընտրողների թիվը 35 000 ից ավելի է:

- 3 անդամ:
- 5 անդամ: (140.1)
- 4 անդամ:
- 2 անդամ:

Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունքը և մեծամասնական թեկնածուների առաջադրումը (հոդված 141)

615. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունք ունի կուսակցությունը, կուսակցության, ընտրողների 5 հոգանոց նախաձեռնող խմբի կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուն, որը գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում: (141.1)
- Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունք ունի կուսակցությունը, կուսակցության, ընտրողների 4 հոգանոց նախաձեռնող խմբի կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուն, որը գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում:
- Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունք ունի կուսակցությունը, կուսակցության, ընտրողների 3 հոգանոց նախաձեռնող խմբի կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուն, որը գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում:
- Սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունք ունի կուսակցությունը, կուսակցության, ընտրողների 2 հոգանոց նախաձեռնող խմբի կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուն, որը գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում:

616. Քաղաքապետարանի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների ժամանակ ո՞վ է գրանցում կուսակցության/ընտրողների նախաձեռնող խմբի կողմից առաջադրված սակրեբուլոյի անդամության մեծամասնական թեկնածուին:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը: (141.9)
- ԿԸՀ նախագահը:
- ԿԸՀ քարտուղարը:

Կուսակցական ցուցակի ներկայացումը (հոդված 143)

617. Որքա՞նք չպետք է գերազանցի ներկայացված ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը:

- Ներկայացված կուսակցական ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը պակաս չպետք է լինի համամասնական ընտրակարգով ընտրվելիք անդամների թվի երկու հինգերորդից և չպետք է գերազանցի այս թվի եռապատիկը: (143.3)
- Ներկայացված կուսակցական ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը պակաս չպետք է լինի համամասնական ընտրակարգով ընտրվելիք անդամների թվից և չպետք է գերազանցի այս թվի միակի քանակը:
- Ներկայացված կուսակցական ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համամասնական ընտրակարգով ընտրվելիք անդամների թվի երկու երրորդից և չպետք է գերազանցի այս թվի հնգապատիկը:
- Ներկայացված կուսակցական ցուցակում սակրեբուլոյի անդամության թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համամասնական ընտրակարգով ընտրվելիք անդամների թվից և չպետք է գերազանցի այս թվի միապատիկը:

618. Համամասնական ընտրակարգով մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու համար կուսակցությունները կուսակցական ցուցակները ներկայացնում են.

- ԿԸՀ նախագահին:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին: (143.1)
- Համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- ԿԸՀ քարտուղարին:

Սակրեբուլոյի անդամության թեկնածուների առաջադրումը մեծամասնական ընտրատարածքում (հոդված 144)

619. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից ընտրատարածքում առաջադրված մեծամասնական թեկնածուն կարող է միաժամանակ լինել համապատասխան կուսակցության կուսակցական ցուցակում: (144.6)
- Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից առաջադրված մեծամասնական թեկնածուն չի կարող միաժամանակ լինել համապատասխան կուսակցության կուսակցական ցուցակում:
- Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից ընտրատարածքում առաջադրված մեծամասնական թեկնածուն կարող է միաժամանակ լինել մի քանի կուսակցությունների կուսակցական ցուցակում:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

620. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամի ընտրություններում համապատասխան ընտրատարածքում թեկնածուներ առաջադրելիս

կուսակցության/ընտրողների նախաձեռնող խմբի դիմումի մեջ չպետք է նշված լինի մեծամասնական թեկնածուի.

- Ծննդյան ամսաթիվը:
- Աշխատավայրը:
- Պաշտոնը:
- Զինվորական ծառայության նկատմամբ հարաբերությունը: (144.3)

621. Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններում համապատասխան ընտրատարածքում թեկնածուներ առաջադրելու իրավունք չունի.

- Ընտրողների 5 հոգանոց նախաձեռնող խումբը:
- Ընտրություններին մասնակցող կուսակցությունը:
- Սակրեբուլոյի խմբակցությունը: (144.1)
- Բոլոր պատասխանները սխալ են:

Քվեաթերթիկը (հոդված 147)

622. Քանի՞ տեսակի քվեաթերթիկներ են պատրաստվում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների համար:

- Մեկ:
- Երկու տարբեր տեսակի քվեաթերթիկներ: (147.1)
- Երեք:
- Այնքան տեսակի, քանի մանդատ կա ընտրական տեղամասում:

Մեծամասնական ընտրակարգով անցկացված սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների որոշումը (հոդված 149)

623. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով ընտրություններում երկու թեկնածու հավաքել են հավասար թվով ձայներ: Ո՞ր թեկնածուն կհամարվի ընտրված:

- Թեկնածուն, որն ավելի ուշ է գրանցվել է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Թեկնածուն, որը տարիքով ավագ է:
- Թեկնածուն, որն ավելի վաղ է գրանցվել համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում: (149.2)
- Թեկնածուն, ում առավելություն կշնորհի ԿԸՀ նախագահը:

624. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամ ընտրված կհամարվի այն թեկնածուն, որը կստանա ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների ավելի քան 25 տոկոսը:

- Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամ ընտրված կհամարվի այն թեկնածուն, որը կստանա ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների ավելի քան 30 տոկոսը:
- Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամ ընտրված կհամարվի այն թեկնածուն, որը կստանա ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների ավելի քան 35 տոկոսը:
- Մեծամասնական ընտրակարգով սակրեբուլոյի անդամ ընտրված կհամարվի այն թեկնածուն, որը կստանա ընտրություններին մասնակցած ընտրողների վավեր ձայների ավելի քան 40 տոկոսը: (149.1)

Սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների ամփոփումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում (հոդված 150)

625. Քանի՞ օրինակից է կազմվում մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:

- Երեք օրինակից:
- Չորս օրինակից:
- Մեկ օրինակից: (150.5)
- Երկու օրինակից:

626. Ու՞մ են փոխանցվում մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության վավերացված ֆոտոպատճենները:

- Ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեկ վավերացված ֆոտոպատճենը ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփմանը հաջորդող օրը ուղարկվում է ԿԸՀ-ին:
- Ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեկ վավերացված ֆոտոպատճենը ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփմանը հաջորդող օրը ուղարկվում է ԿԸՀ-ին, իսկ երկրորդ վավերացված ֆոտոպատճենը պահվում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում:
- Ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեկ վավերացված ֆոտոպատճենը պահվում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում: Արձանագրության վավերացված ֆոտոպատճենները փոխանցվում են համապատասխան սակրեբուլոյի մանդատային հանձնաժողովին և կուսակցությունների ներկայացուցիչներին: (150.6)
- Ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության վավերացված ֆոտոպատճենը պահվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում և ոչ ոքի չի փոխանցվում:

627. Ընտրատարածքում ընտրություններն անվավեր են ճանաչվում, եթե՝

- Համապատասխան ընտրատարածքում անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը այս ընտրատարածքում ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելին է և ազդում է ընտրությունների արդյունքների վրա: (150.2)
- Համապատասխան ընտրատարածքում անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը այս ընտրատարածքում ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվի կեսից պակաս է և ազդում է ընտրությունների արդյունքների վրա:
- Համապատասխան ընտրատարածքում անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը այս ընտրատարածքում ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվի կեսից ավելին է և չի ազդում ընտրությունների արդյունքների վրա:
- Համապատասխան ընտրատարածքում անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը այս ընտրատարածքում ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թվի կեսից պակաս է և չի ազդում է ընտրությունների արդյունքների վրա:

628. Մակրեբուլոյի ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում.

- ԿԸՀ-ն:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: (150.1)
- ԿԸՀ նախագահը:
- Վրաստանի արդարադատության նախարարությունը:

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստի հրավիրումը (հոդված 151)

629. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի ողջ տարածքում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստը հրավիրում է ԿԸՀ-ն: (151)
- Վրաստանի ողջ տարածքում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստը հրավիրում է Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի ողջ տարածքում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստը հրավիրում է սակրեբուլոյի ամենատարեց անդամը:
- Վրաստանի ողջ տարածքում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի առաջին նիստը հրավիրում է խորհրդարանի նախագահը:

Մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի անդամ ընտրվածների գրանցումը (հոդված 153)

630. Ո՞վ է գրանցում տեղական ինքնակառավարման մարմնի՝ սակրեբուլոյի անդամ ընտրված անձանց և նրանց տրամադրում համապատասխան վկայականներ:

- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:
- ԿԸՀ նախագահը:

- ԿԸՀ քարտուղարը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը: (153)

Սակրեբուլոյի պակասած անդամին փոխարինելու կարգը (հոդված 154)

631. Ինչպիսի՞ ընտրություններ պետք է անցկացվեն այն դեպքում, երբ սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով ընտրված սակրեբուլոյի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարեցվում է:

- Կրկնական ընտրություններ:
- Միջանկյալ ընտրություններ: (154.3)
- Լրացուցիչ ընտրություններ:
- Լրացնող ընտրություններ:

632. Ո՞վ է նշանակում տեղական ինքնակառավարման մարմնի՝ սակրեբուլոյի միջանկյալ ընտրությունները:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:
- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի նախագահը:
- ԿԸՀ-ն (154.4)

633. Ի՞նչ ժամկետով են միջանկյալ ընտրություններում հաղթած թեկնածուները զբաղեցնում սակրեբուլոյի մեծամասնական ընտրակարգով ընտրված պակասած անդամների տեղերը:

- 1 տարի ժամկետով:
- 2 տարի ժամկետով:
- 4 տարի ժամկետով:
- Սակրեբուլոյի լիազորության մնացած ժամկետով: (154.7)

Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի՝ սակրեբուլոյի ընտրությունները (հոդված 155)

634. Քանի՞ անդամից է բաղկացած Թբիլիսիի սակրեբուլոն:

- 50: (155.4)
- 13:
- 25:
- 30:

635. Մեծամասնական ընտրակարգով ընտրված քանի՞ անդամից է բաղկացած Թբիլիսիի սակրեբուլոն:

- 15 անդամից:
- 25 անդամից: (155.4)
- 35 անդամից:
- 50 անդամից:

636. Համամասնական ընտրակարգով ընտրված քանի՞ անդամից է բաղկացած Թբիլիսիի սակրեբուլոն:

- 15 անդամից:
- 25 անդամից: (155.4)
- 35 անդամից:
- 50 անդամից:

637. Ի՞նչ ընտրակարգի հիման վրա են անցկացվում Վրաստանի մայրաքաղաքի մունիցիպալիտետի ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրությունները:

- Միայն մեծամասնական ընտրակարգի հիման վրա:
- Միայն համամասնական ընտրակարգի հիման վրա:
- Ընդհանուր ընտրական համակարգի հիման վրա:
- Մեծամասնական և համամասնական ընտրակարգերի հիման վրա: (155.3)

Ընտրատարածքներ (հոդված 156)

638. Ստորև թվարկվածներից ո՞րն է ճիշտ պնդում:

- Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրությունները համամասնական ընտրակարգով անցկացնելու համար ստեղծվում է 5 ընտրատարածք:
- Տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությունների համար քաղաք Թբիլիսիում ստեղծվում է 9 ընտրատարածք:
- Տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությունների համար քաղաք Թբիլիսիում ստեղծվում է 12 ընտրատարածք:
- Թբիլիսիի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրությունների համար ստեղծվում է 10 ընտրատարածք: (156.1)

639. Քանի՞ ընտրատարածք է ստեղծվում Թբիլիսիի սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվելիք ընտրությունների համար:

- 10: (156.1)
- 7:
- 6:
- 5:

Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրություններին մասնակցելու իրավունքը (հոդված 157)

640. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու և Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի մանդատ ստանալու իրավունք ունեն կուսակցություններն ու ընտրական դաշինքները:

- Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու և Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի մանդատ ստանալու իրավունք ունեն միայն կուսակցությունները: (157.2)
- Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու և Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի մանդատ ստանալու իրավունք ունեն միայն ընտրական դաշինքները:
- Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու և Թբիլիսիի սակրեբուլոյի անդամի մանդատ ստանալու իրավունք ունեն միայն կուսակցությունները և ընտրողների 5 հոգանոց նախաձեռնող խմբի կողմից առաջադրված թեկնածուները:

Կուսակցական ցուցակների ներկայացումը (հոդված 158)

641. Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով ընտրվելիք թեկնածուների կուսակցական ցուցակը պետք է բաղկացած լինի.

- 37-ից ոչ պակաս և 100-ից ոչ ավելի թեկնածուներից:
- 50-ից ոչ պակաս և 80-ից ոչ ավելի թեկնածուներից:
- 37-ից ոչ պակաս և 80-ից ոչ ավելի թեկնածուներից:
- 50-ից ոչ պակաս և 100-ից ոչ ավելի թեկնածուներից: (158.2)

Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատների բաշխման կարգը (հոդված 162)

642. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատները բաշխվում են միայն այն ընտրական սուբյեկտներին, որոնք ստացել են ընտրությունների մասնակիցների ձայների առնվազն 1%-ը:
- Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատները բաշխվում են միայն այն ընտրական սուբյեկտներին, որոնք ստացել են ընտրությունների մասնակիցների ձայների առնվազն 3%-ը:
- Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատները բաշխվում են միայն այն ընտրական սուբյեկտներին, որոնք ստացել են ընտրությունների մասնակիցների ձայների առնվազն 4%-ը: (162.1)
- Թբիլիսիի սակրեբուլոյում համամասնական ընտրակարգով մանդատները բաշխվում են միայն այն ընտրական սուբյեկտներին, որոնք ստացել են ընտրությունների մասնակիցների ձայների առնվազն 2%-ը:

643. Համամասնական ընտրակարգով սակրեբուլոյի ընտրված անդամ են համարվում.

- Թեկնածուները, որոնց հերթական համարները կուսակցության ցուցակում ավել կամ հավասար են այս կուսակցական ցուցակի կողմից ստացված մանդատների թվին:
- Թեկնածուները, որոնց հերթական համարները կուսակցության ցուցակում պակաս կամ հավասար են այս կուսակցական ցուցակի կողմից ստացված մանդատների թվին: (162.6)

- Թեկնածուները, որոնց հերթական համարները կուսակցության ցուցակում ավել են այս կուսակցական ցուցակի կողմից ստացված մանդատների թվից:
- Թեկնածուները, որոնց հերթական համարները կուսակցության ցուցակում ավել կամ պակաս են այս կուսակցական ցուցակի կողմից ստացված մանդատների թվից:

644. Եթե սակրեբուլոյի անդամի թեկնածուն ընտրվել է ինչպես միամանդատ մեծամասնական ընտրատարածքից, այնպես էլ կուսակցական ցուցակով, ապա նա համարվում է.

- Միամանդատ մեծամասնական ընտրատարածքից ընտրված: (162.7)
- Կուսակցական ցուցակով ընտրված:
- Ինչպես միամանդատ մեծամասնական ընտրատարածքից, այնպես էլ կուսակցական ցուցակով ընտրված:
- Ընտրված այն ընտրակարգով, որն անձամբ թեկնածուն կընտրի:

Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ ընտրված անձանց գրանցումը (հոդված 163)

645. Ո՞վ է գրանցում և համապատասխան վկայականներ փոխանցում քաղաք Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրված անձանց:

- ԿԸՀ նախագահը:
- ԿԸՀ-ն: (163)
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Ինքնակառավարվող քաղաքի/ինքնակառավարվող համայնքի քաղաքապետի/համայնքապետի ընտրությունները (հոդված 165)

646. Ինչպիսի՞ կարգով է ընտրվում ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետը.

- Ինքնակառավարվող քաղաքի սակրեբուլոյի անդամներից 5 տարի ժամկետով ընտրում է Վրաստանի նախագահը:
- Ինքնակառավարվող քաղաքի սակրեբուլոյի կողմից առաջադրված 5 թեկնածուներից ձայների մեծամասնությամբ 4 տարի ժամկետով ընտրում է Վրաստանի խորհրդարանը, որին վստահություն է հայտնում Վրաստանի նախագահը:
- Ինքնակառավարվող քաղաքի սակրեբուլոյի կողմից առաջադրված 5 թեկնածուներից մեկին նշանակում է Վրաստանի նախագահը 4 տարի ժամկետով:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետն ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: (165.2)

647. Վրաստանի մայրաքաղաքի՝ Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունների համար Թբիլիսին.

- Մեկ ընտրատարածք է: (166.2)
- Տասը ընտրատարածք է:
- Յոթ ընտրատարածք է:
- Հինգ ընտրատարածք է:

Պլեբիսցիտի նշանակումը և դրա անցկացման կարգը (հոդված 173)

648. Ո՞վ է նշանակում պլեբիսցիտը:

- Վրաստանի խորհրդարանի առնվազն 200 000 ընտրողների նախաձեռնությամբ պլեբիսցիտ է նշանակում Վրաստանի նախագահը:
- Միայն Վրաստանի խորհրդարանի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ պլեբիսցիտ է նշանակում Վրաստանի նախագահը:
- Պլեբիսցիտ նշանակում է Վրաստանի վարչապետը: (173.2)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

649. Ստորև թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ:

- Պետական իշխանության մարմինները պարտավոր են նախատեսել պլեբիսցիտի արդյունքները:
- Պետական իշխանության մարմինները պարտավոր են ի կատար ածել պլեբիսցիտի արդյունքները:
- Պետական իշխանության մարմինների համար պլեբիսցիտի արդյունքները խորհրդատվական բնույթի են: (173.3)
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

650. Քվեարկությամբ ընդհանուր-ժողովրդական հարցումը հատկապես կարևոր պետական հարցերի վերաբերյալ ընտրողների կամ նրանց մի մասի կարծիքը իմանալու համար.

- Հանրաքվե է:
- Պլեբիսցիտ է: (173.1)
- Ընտրություններ են:
- Սոցիոլոգիական հարցում է:

Հանրաքվեի նշանակումը (հոդված 174)

651. Ո՞վ է իրավագոր հանրաքվե նախապատրաստելու և կազմակերպելու համար:

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի նախագահը:
- Խորհրդարանի նախագահը:
- ԿԸՀ-ն: (174.2)

652. Ո՞վ է նշանակում հանրաքվեն:

- Վրաստանի խորհրդարանը՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ:
- Վրաստանի նախագահը՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ: (174.1)
- Խորհրդարանի նախագահը՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ:
- ԿԸՀ-ն՝ Վրաստանի վարչապետի համաստորագրությամբ.

Քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը և կրկնական ընտրությունները (հոդված 169¹)

653. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը որոշումով նշանակում է ԿԸՀ նախագահը:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը կարգադրությամբ նշանակում է ԿԸՀ նախագահը:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը որոշումով նշանակում է ԿԸՀ-ն:
- Ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը կարգադրությամբ նշանակում է ԿԸՀ-ն: (169¹.2)

654. Ո՞վ է որոշում քաղաք Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունների արդյունքները:

- Թբիլիսիի սակրեբուլոն:
- Վրաստանի խորհրդարանը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (169.1)
- Վրաստանի նախագահը:

655. Քաղաքապետի ընտրություններում ընտրված կհամարվի այն թեկնածուն, որն ստացել ընտրություններին մասնակցող ընտրողներից ձայներին.

- 30%-ից ավելին:
- 15%-ից ավելին:
- 50%-ից ավելին: (169.2)
- 25%-ից ավելին:

Հանրաքվեի կազմակերպումը (հոդված 171)

656. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Նույն հարցով հանրաքվե չի կարող նշանակվել այդ հարցով անցկացված հանրաքվեի արդյունքների պաշտոնապես հրապարակման օրվանից հետո 5 տարվա ընթացքում:
- Նույն հարցով հանրաքվե չի կարող նշանակվել այդ հարցով անցկացված հանրաքվեի արդյունքների պաշտոնապես հրապարակման օրվանից հետո 3 տարվա ընթացքում:
- Նույն հարցով հանրաքվե չի կարող նշանակվել այդ հարցով անցկացված հանրաքվեի արդյունքների պաշտոնապես հրապարակման օրվանից հետո 2 տարվա ընթացքում:
- Նույն հարցով հանրաքվե չի կարող նշանակվել այդ հարցով հանրաքվեի արդյունքների պաշտոնապես հրապարակման օրվանից հետո 1 տարվա ընթացքում: (171.3)

657. Վրաստանում ի՞նչ լեզվով է պատրաստվում և անցկացվում հանրաքվե:

- Միայն վրացերեն:
- Վրացերեն, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերեն: (171.4)
- Վրացերեն և ռուսերեն, իսկ Աբխազիայում՝ նաև աբխազերեն:

- Վրացերեն, Աբխազիայում՝ աբխազերեն, իսկ Վրաստանում ապրող էթնիկ փոքրամասնությունների համար՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն:

658. Ընտրական օրենսգրքի համաձայն՝ ո՞ւմ պահանջով կարող է հանրաքվե նշանակվել:

- Վրաստանի կառավարության: (171.1)
- Հանրային պաշտպանի:
- Արդարադատության նախարարի:
- ԿԸՀ-ի:

659. Հանրաքվե չի կարող անցկացվել.

- Վրաստանի խորհրդարանի ընտրությունների ժամանակահատվածում:
- Վրաստանի նախագահի ընտրությունների ժամանակահատվածում:
- Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակահատվածում:
- Զանգվածային անկարգությունների ժամանակահատվածում: (171.2.գ)

660. Քանի՞ ընտրողի պահանջով կարող է անցկացվել հանրաքվե:

- Առնվազն 50 000 ընտրողների պահանջով:
- Առնվազն 100 000 ընտրողների պահանջով:
- Առնվազն 150 000 ընտրողների պահանջով:
- Առնվազն 200 000 ընտրողների պահանջով: (171.1)

661. Հանրաքվեի նշանակում պահանջելու իրավունք չունեն.

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի վարչապետը: (171.1)
- Վրաստանի կառավարությունը:
- Առնվազն 200 000 ընտրող:

Հանրաքվեի հարցերը (հոդված 172)

662. Կարելի՞ է արդյոք հանրաքվե կազմակերպել օրենք ընդունելու կամ չեղարկելու համար:

- Հանրաքվե կարող է կազմակերպվել միայն օրենք ընդունելու համար:
- Հանրաքվե կարող է կազմակերպվել միայն օրենք չեղարկելու համար:
- Օրենք ընդունելու կամ չեղարկելու համար հանրաքվե կարող է կազմակերպվել, եթե Վրաստանի նախագահին նման պահանջով դիմել է 200 000 ընտրող:
- Օրենք ընդունելու կամ չեղարկելու համար հանրաքվե չի կարող կազմակերպվել: (172.2.ա)

663. Հանրաքվե կարող է կազմակերպվել:

- Օրենք ընդունելու կամ չեղարկելու համար:
- Համաներման և ներման պատճառով:
- Միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված հարցերի և սկզբունքների մասին: (172.1)

- Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի վավերացման և չեղարկման մասին:

664. Հանրաքվե կարող է անցկացվել.

- Օրենք ընդունելու համար:
- Օրենք չեղարկելու համար:
- Համաներման պատճառով:
- Հատուկ նշանակության պետական հարցերի մասին: (172.1)

Հանրաքվեի կազմակերպման նախաձեռնող խումբը (հոդված 175)

665. Ո՞վ պետք է գրանցի նախաձեռնող խմբի կողմից հանրաքվեի առաջարկվող հարցը.

- Վրաստանի խորհրդարանը:
- Վրաստանի նախագահը:
- Պետական աուդիտի ծառայության գլխավոր աուդիտորը:
- ԿԸՀ-ն: (175.2)

666. Ու՞մ հետ համաձայնությամբ պետք է ԿԸՀ-ն ճշտի նախաձեռնող խմբի կողմից հանրաքվեի առաջարկվող հարցի ձևակերպումը:

- Նախաձեռնող խմբի հետ: (175.2)
- Վրաստանի հանրային պաշտպանի հետ:
- Վրաստանի խորհրդարանի հետ:
- Վրաստանի նախագահի հետ:

667. Ո՞ր դեպքերում է ստեղծվում հանրաքվեի կազմակերպման նախաձեռնող խումբ:

- Եթե հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը պատկանում է ընտրողներին: (175.1)
- Եթե հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը պատկանում է Վրաստանի նախագահին:
- Եթե հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը պատկանում է Վրաստանի խորհրդարանին:
- Բոլոր դեպքերում:

668. Նախաձեռնող խմբի կողմից հանրաքվեի առաջարկվող հարցը գրանցում է.

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (175.3)
- Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը:
- Ինչպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, այնպես էլ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը:
- Հանրաքվեի առաջադրված հարցը գրանցում չի պահանջում:

Ստորագրություններ հավաքելու կարգը և ժամկետները (հոդված 176)

669. Նախաձեռնող խմբի հետ համաձայնեցված և ԿԸՀ սահմանած յուրաքանչյուր նմուշի թերթիկի վրա առավելագույնը քանի՞ քաղաքացի կարող է ստորագրել:

- 30 քաղաքացի:
- 40 քաղաքացի:
- 50 քաղաքացի: (176.2)
- 60 քաղաքացի:

670. Հանրաքվեի համար առաջարկվող հարցի վերաբերյալ ստորագրությունները հավաքվում են ընտրողների ստորագրությունների թերթիկների վրա: Ո՞ր մարմինն է (իրավագոր անձն է) սահմանում ընտրողների ստորագրությունների թերթիկի նմուշը:

- Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:
- Այն նախաձեռնող խումբը, որն իրականացնում է ստորագրահավաք:
- ԿԸՀ նախագահը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: (176.2)

671. Հանրաքվեի առաջադրված հարցի հետ կապված ընտրողների ստորագրությունների թերթիկի վրա նոտարական գրասենյակը պետք է վավերացնի.

- Յուրաքանչյուր քաղաքացու ստորագրությունը:
- Ստորագրահավաքի համար պատասխանատու անձի ստորագրությունը: (176.2)
- Նախաձեռնող խմբի անդամների ստորագրությունը:
- Ինչպես քաղաքացիների, այնպես էլ ստորագրահավաքի համար պատասխանատու անձի ստորագրությունը նոտարի կողմից վավերացում չեն պահանջում:

Ստորագրահավաքի արդյունքների քննարկումը (հոդված 177)

672. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Նախաձեռնող խմբի պահանջը հարաքվե կազմակերպելու մասին և իր եզրակացությունը ԿԸՀ-ն ներկայացնում է Վրաստանի խորհրդարանին:
- Նախաձեռնող խմբի պահանջը հարաքվե կազմակերպելու մասին և իր եզրակացությունը ԿԸՀ-ն ներկայացնում է Վրաստանի նախագահին: (177.2)
- Նախաձեռնող խմբի պահանջը հարաքվե կազմակերպելու մասին և իր եզրակացությունը ԿԸՀ-ն ներկայացնում է Պետական ատլիտի ծառայություն:
- Նախաձեռնող խմբի պահանջը հարաքվե կազմակերպելու մասին և իր եզրակացությունը ԿԸՀ-ն ներկայացնում է Ֆինանսների նախարարություն:

Հանրաքվեի կազմակերպման պահանջի հետ կապված որոշում կայացնելը (հոդված 178)

673. Ի՞նչ որոշում է կայացնում Վրաստանի նախագահը հանրաքվե կազմակերպելու պահանջի առնչությամբ:

- Հանրաքվե կազմակերպելու պահանջը կասեցնելու մասին:
- Հանրաքվե կազմակերպելու պահանջի վրա վետո դնելու մասին:
- Հանրաքվե կազմակերպելու պահանջը քննարկող խորհրդատվական խորհրդի նշանակման մասին:

- Հանրաքվեի օր նշանակելու կամ հանրաքվե կազմակերպելու պատճառաբանված մերժման մասին: (178.1.ա)

674. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Հանրաքվեի օրը նշանակելու մասին Վրաստանի նախագահի հրամանագիրը պահանջում է Վրաստանի վարչապետի հակաստորագրություն, բացառությամբ այն դեպքի, երբ հանրաքվեն նշանակվում է Վրաստանի կառավարության պահանջով: (178.2)
- Հանրաքվեի օրը նշանակելու մասին Վրաստանի նախագահի հրամանագիրը պահանջում է Վրաստանի վարչապետի հակաստորագրություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հանրաքվեն նշանակվում է ներքին գործերի նախարարի պահանջով:
- Հանրաքվեի օրը նշանակելու մասին Վրաստանի նախագահի հրամանագիրը պահանջում է Վրաստանի վարչապետի հակաստորագրությունը, բացառությամբ այն դեպքի, երբ հանրաքվեն նշանակվում է պաշտպանության նախարարի պահանջով:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Հանրաքվեի կազմակերպման մասին պահանջի ետկանչը (հոդված 180)

675. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի կառավարությունը իրավագոր չէ հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը մինչև Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը:
- Վրաստանի կառավարությունը իրավագոր է հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը մինչև Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը: (180)
- Ոչ ոք իրավագոր չէ հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը մինչև Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

676. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- Վրաստանի խորհրդարանն իրավագոր չէ հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը մինչև Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը:
- Վրաստանի խորհրդարանն իրավագոր է հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը մինչև Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը: (180)
- Ոչ ոք իրավագոր չէ հետ կանչել հանրաքվե կազմակերպելու մասին իր պահանջը նախքան Վրաստանի նախագահի կողմից հանրաքվե նշանակելու մասին որոշում կայացնելը:
- Պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

Հնտրական հանձնաժողովները (հոդված 181)

677. Հանրաքվեի նախապատրաստումն ու անցկացումն ապահովում են.

- Կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային հանրաքվեի հանձնաժողովները:
